



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

81-93



891.99  
- 93

## Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

19 NOV 2011

ՀԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԽՐՈՊԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Nº X

1904

Nº X

10 5.

# ՆԱՐ ԿԵՐՆԻ ՃԵՄՔԻՒ

ՀԱՅՈՎԱՆԻ  
II

ԴՐԱՄԱՏԻԱԿԱՆ ԷՏԻՒԴ ԳԱԻՍՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ΩΠΡΥ ΦΟΡΔ.

ՀԵՂ. Ա. Ք.



ԹԻԳԼԻՄ 1904 թ.

Տպար. Ընկ. Ս. Նազարեանցի „ՀԵՐՄՈՒՔՈՒ“ Մաքար. փ. № 15.  
(61)

L 8 APR 2014

46533

卷之三

1003

78

Дозволено Цензурою. Тифлисъ, 11-го Октября 1904 г.

3 973 9

### A Book Review

## 第十一章 中国の政治と社会

## ՆՈՐ ԿԵԾԵՆՔԻ ԸՆԴՎԻԿՈՒՄ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Կատարինէ Աշխարքեանց—այրի, կալուածատէր կին:
2. Մէջլումբէդ Մելիք Զարեանց—սրա հօրեղբայրը:
3. Սամսոնբէդ Մուրագբէգեանց—երիտասարդ կալուածատէր:
4. Լոռն Դաւթեանց—անտառային վարչութեան վերաբնիչ:
5. Գարեգին Արմաւեանց—զաւառական անտառապետ:
6. Եղիսաբէթ Արմաւեանց—սրա կինը:
7. Լուսի—Տիկին Արմաւեանցի քոյրը:
8. Անտառապետի Օգնական:
9. Արշակ Խոլբաշեանց—ուսում առած երիտասարդ, գիւղի:
10. Սիմօն, Տիկին Աշխարքեանցի հինաւուրց ծառայ:
11. Գիւղացի ոմն:
12. Գիւղի գղիր:
13. Ծառայ—տիկին Աշխարքեանցի տանը:
14. Ծառայ—Արմաւեանցների տանը:
15. Գիւղացիներ և գեղջկուհիներ ամեն հասակի:

Անցքը պատահում է հայարնակ գաւառում:

Առաջին գործողութիւնը Արմաւեանցների տանը, երկրորդ, երրորդ և չորրորդ գործողութեան երկրորդ պատկերը տիկին Աշխարքեանցի դղեակում, իսկ չորրորդ գործողութեան առաջին պատկերը՝ գիւղամէջում:

## ԳՈՐԾՈՂ ՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Արմաւեանցի տան մի ընտարձակ սենեակ, որ կահաւորած է հասարակ կերպով: Խորքումը երեսում է մի ուրիշ սենեակ, որի գըռները բաց են: Կայ և մի ուրիշ դուռը ձախ կողմից, որտեղից՝ վարագոյրը բարձրանալիս, շտապով դուրս է գալիս Տ. Արմաւեանցը և դիմում է դէպի խորքի սենեակը: Դուան մօտ նրան պատահում են Լուսին և Սամսոնբէգը, որոնք աղմուկով և ծիծաղելով ներս են մտնում:—Լուսին հագին ունի երկարեղը դէիրա (ամազօնկայ), որի փէշերը հաւաքած՝ ձգել է ձախ թեկի վրա. աջ ձեռքին ունի ճիպոտ (խլիստ): Սամսոնբէգը հագին ունի կարճ բաճկոն, ոտներին բոտփորտ:

### ՏԵՍԱՐԱՆ 1.

S. Արմաւեանց, Լուսի, Սամսոնբէգ:

S. Արմաւեանց. Հա, եկան..  
Սամսոնբէգ. Հիմա կըգան:  
Լուսի. Նրանց թողինք կայարանում, իսկ մենք սրարշաւ հասանք այստեղ: (Առաջ են գալիս):

Սամսնբէգ. Զմնացինք... կամ ճիշտն ասած՝ չուշեցինք տեսնել նրանց պաշտօնական հանդիպումը:

Լուսի. Դա շատ տաղտկալի բան է:

Սամսնբէգ. Այնքան էլ հետաքրքիր չէ:

Տ. Արմաւեանց. Բայց, Լուսիկս, ասա տեսնեմ, ի՞նչպիսի մարդ է, տեսպնվ է,

Լուսի. Այդ էլ հետաքրքիր չէր: Այնպէս շէ, Սամսնբէգ:

Սամսնբէգ. Ի հարկէ: Մարդ է, էլի, Աստուծոյ պատկերով. տարիքով մարդ է երեսում:

Տ. Արմաւեանց. Գարեգինիս հետ միաժամանակ եղել է ճեմարանում:

Լուսի. Սակայն, քոյրիկս, փեսայ Գարեգինը նրա առաջ աւելի ծեր է երեսում:

Սամսնբէգ. Քայլուածքը հաստատ, նայուածքը խիստ ու հպարտ: Բայց մի բան որ ինձ շատ դուր եկաւ, այդ նրա կոկ ու մաքուր հագուստն էր: Ճամբորդի վրա կոկ հագուստը հազուագիւտ բան է:

Տ. Արմաւեանց. Իսկ քեզ, Լուսիկս, քեզ ի՞նչ դուր եկաւ:

Լուսի. (ծիծառելով). Ի՞նձ... ոչինչ... ի՞նչ կարող էր դուր դար: Սամսնբէգը ճիշտ է նկատել—նրա իսկ հագուստը իմ աշքիս էլ ընկաւ... Ախ, հա, Սամսնբէգ, մոռացայ ձեզ ցոյց տալու նրա մատի մատանին. մի խոշոր զմրուխտ... մի հիանալի ակը... մանաւանդ չորս բոլորքը շարուած բրիեանտները. մի սքանչելի բան, որից խեթիս ծայրը գնաց... ախ, ի՞նչպէս շողողում էին արեի տակ...

Սամսնբէգ. Այդ ի՞նչպէս նկատեցիք, օրիորդ:

ուրեմն բաւական ուշադիր էք եղել նրան... Ես ամեւնեին չնկատեցի:

Լուսի. Անկարելի էր չնկատել... Հենց որ վագօնից մեկնեց փեսայ Գարեգինին իր ձեռքը, այն ժամանակ թէ զմրուխտը փալփլեց, թէ բրիլիանտները շողողացին:

Տ. Արմաւեանց. Գարեգինը ծանօթացրեց քեզ նրա հետ:

Լուսի. Ո՛չ, Մենք ձիուց չենք էլ վէր եկել: Սամսնբէգ. Մենք նրանց դիտում էինք հեռուից:

Տ. Արմաւեանց. Ինչու չմօտեցաք.. Դու, Լուսիկս, գոնէ դու մօտենայիր:

Լուսի. Ա՛խ, քոյրիկ, ասացի հետաքրքիր չէր նըրանց պաշտօնական հանդիպումը: Վերջապէս ի՞նչ մի ստիպողական բան կար որ այս լայն փէշերովս ի՞նչէի ձիուց և նորից նստէի: Հեշտ բան չդիտենաս: Առանց այդ էլ ճանապարհին անհանգիստ եմ արել Սամսնբէգին, ձիու վրա վեր ու վար անելով ինձ:

Տ. Արմաւեանց. (Պակացած:) Ի՞նչ պատահեց:

Սամսնբէգ. Ոչինչ... դատարկ բան՝ թամքը ծըռուել էր:

Տ. Արմաւեանց. Ա՛խ... Որքան անգոյշ ես... չէ որ կարող էիր վայր ընկնել քշելու ժամանակ... Աստուած է իմանում թէ ի՞նչ կարող էր պատահել:

Լուսի. Ո՛հ, քոյրիկ, իզուր է երկիւղդ. ձինստովին այդ տեսակ բաները չեն կարող վախեցնել:

Տ. Արմաւեանց. Դու էլ ձի նստող դարձար.

Լուսի. Զես հաւատում... Մէկ հարցըու Սամսն-

բէգից, թէ ինչպէս եմ ես ձի նստում, ինչ համարձակութեամբ քշում, արշաւում եմ:

Սամսոնքէզ. Սիրելի է տեսնել օրիորդի վստահութիւնը:

Տ. Արմաւեանց. Մի օր շլինքը կը կոտրէ:

Սամսոնքէզ. Ոչ, ոչ, երբէք... Օրիորդը սրտոտ է և համարձակ: Կարճ ժամանակում այնքան շուտով սուփորեց ձի նստել և այնքան պինդ ու համարձակ է նստած, որ մի օր նշանաւոր ձի նստող կը լինի, կատարեալ ամազօն աղջիկ:

Տ. Արմաւեանց. Կատակ էք անում:

Սամսոնքէզ. Ո՛չ, կատակ չէ. հաւատացնում եմ ձեզ: Տեսել եմ շատ կանանց և օրիորդների, որոնք վախենում էին ձկուն մօտ դալ, ուր մնաց թէ նստէին նրա վրա: Իսկ եթէ վստահանում էին նստել՝ սրտատրոփ կուչ եկած, պինդ բռնում եին թամքի գլխից և եթէ ձին ոտքը բարձրացնում էր ճանճ քշելու համար, նրանք լեզապատռու էին լինում և սաստիկ աղաղակ բարձրացնում: (Ամենքը ծիծաղում են:) Ճշմարիտ եմ ասում... Օրինակ, հէնց մեր կատեան, Տիկին Աշխարբէգեանցը.. ինչ զալմաղալով ես նրան առաջին անդամ ձիու վրա նստեցրի:

Լուսի. Բայց հիմա, ի՞նչպէս լաւ է արշաւում:

Սամսոնքէզ. Դուք, օրիորդ, նրանից պակաս չէք:

Տ. Արմաւեանց. Մեծ բան է... Դէհ, գնա, դէրիէդ փոխիր, ուր որ է կը գան... բայց ինչո՞ւ ուշացան... Դուք որտեղ թողիք նրանց:

Սամսոնքէզ. Նրանք դեռ կայարանումն էին, երբ մենք հեռացանք.

Լուսի. Ես մի անդամ յետ նայեցի և տեսայ որ նստում էին կառքի մէջ:

Տ. Արմաւեանց. Ուրեմն հիմա կը գան... գնա փոխիր դէիրէդ:

Սամսոնքէզ. Ես էլ կ'երթամ:

Լուսի. Սամսոնքէդ, չուշանաք, շնուր եկէք...

Սամսոնքէզ. Շուտ կը գամ: (Դուքս է զնում):

Տ. Արմաւեանց. Ի հարկէ կը գայ: Դէհ, գնա, շտապիր... գիտեա՛ կը հազնես այն կայմրագոյն դէիրէդ, որ քեզ շատ է սազում:

Լուսի. Ինչո՞ւ համար.. որ նրան դուր գամ: (Ծիծաղում է):

Տ. Արմաւեանց. Ինչ որ քեզ ասում եմ, մյն արա:

Լուսի. (Ծիծաղելով դուքս է զնում: ) Գնում եմ..., ցանկութիւնդ կը կատարեմ...

## ՑԵՍԱՐԱՆ 2.

Տ. Արմաւեանց, սէնակ. յետոյ պ. Արմաւեանց

Տ. Արմաւեանց. Մտքումս մի բան ծագեց... Ա՛խ, եթէ կարողանամ սրան համոզել, այն ժամանակ յոյսով եմ որ մենք էլ կ'ազատուենք այս արջի բնից:

Պ. Արմաւեանց. (Պաշտօնական համազգեստը հագին մտնում է խորքից: )—Դու այստեղ ես եղել, իսկ ես փնտում էի միւս սենեակներում:

Տ. Արմաւեանց. Ինչպէս երեսում է բաւական քրտնել ես հանդիպելով մեծաւորիդ:

Պ. Արմաւեանց. Ո՛չ, ոչ, շատ գոհ եմ...

Տ. Արմաւեանց. Գոհ Ես.. չեմ կարծում:

Պ. Արմաւեանց. Շատ սիրո վհանդիպեց ինձ, մինչև անդամ նախատեց որ գիմաւորել եմ պաշտօնական զգեստով. յիշեց մեր ընկերակցութիւնը ճեմարանում: Միով բանիւ շատ, շատ գոհ եմ:

Տ. Արմաւեանց. Գոնէ յայտնեցիր նրան վիճակիդ մասին. չգանգատուեցիր որ տարիներով փտեցինք այս դաւառում:

Պ. Արմաւեանց. Զարմանալի կին ես եղել, Լիզա, միթէ առաջին անդամից կարելի է խօսել այդ մասին:

Տ. Արմաւեանց. Զարմանալին դու ես, որքո քաշուող բնաւոյութեամբ յետ ես ընկել ընկերակիցներից: Ուսձիկդ նոյնն է, ինչ որ ստանում էինք մեր ամուսնութեան առաջին տարին: Այժմ այդ հասակդ ես հասել, երեխայքը մեծացել են. նրանց ուսում, կրթութիւն է հարկաւոր:

Պ. Արմաւեանց. Ժամանակ դտար դուն էլ... Աւելի լաւ կ'անես, գնաս պատրաստութիւն տեսնես որ կարողանանք նրան լաւ պատուել: Առանձին ուրախութեամբ ընդունեց հրուէրս այս երեկոյ մեզ մօտ անցկացնելու:

Տ. Արմաւեանց. Դրանք սովոր են քէֆ անել ուրիշի հաշուով... բայց չեն մտածում թէ մի դաւառական անտառապետ որտեղից պէտք է փող վերցնի, որ նրանց համար ինձոյք ու ճաշկերոյթ սարքէ... Գոնէ ասացիր որ ոսձիկդ աւելացնեն:

Պ. Արմաւեանց. Ախ, Տէր իմ Աստուած... դու միշտ պատրաստ ես կրկնել քո ախ ու ոխտ... Մարդը դեռ ոտք չէ դրել այստեղ, յարմար է արդեօք, ասա

ինձ, որ ես մի առ մի ներկայացնէի նրա առաջ դրութիւնս:

Տ. Արմաւեանց. Ի հարկէ... Երբ կարիքը ստիշում է, պէտք է անել... Տեսնում ես՝ քանի չես ընկնում նրանց աչքին, նրանք քեզ չեն յիշում... փտեցինք, փտեցինք այս տարտարոս տեղում:

Պ. Արմաւեանց. Կծիկիդ ծայրը բաց արիր... է՛հ, ժամանակ չէ.. գնա, տես անելիքդ:

Տ. Արմաւեանց. Հեշտ է ասել՝ տես անելիքդ.. մէկ նայիր թէ ինչ է նստել մեզ վրայ այս երեկոյեան ընթրիքը... Մեծ քաղաքից է, պէտք է շնորհքով հիւրասիրել, պէտք է աշխատել որ ժամանակն ուրախ անցկացնէ, որ գոհ սրտով գնայ, պէտք է ուրիշ հիւրեւ հրաւիրել:

Պ. Արմաւեանց, (Չեռքը թափ աալով,) Հարկաւոր է, հարկաւոր է...

Տ. Արմաւեանց. Պաշարեղէն ճարելու համար մարդիկ սար ու ձոր ընկան:

Պ. Արմաւեանց. (Չուռ է զալիս:) Է՛հ...

Տ. Արմաւեանց. Թազա ձուկ գտնելու համար ձիաւոր մարդ ուղարկեցի հարևան գաւառը:

Պ. Արմաւեանց. Հասկացիր վերջապէս, որ ընկերոջս եմ պատվում:

Տ. Արմաւեանց. Լաւ ընկեր է, որ հոգս չէ քաշում քեզ համար:

Պ. Արմաւեանց. (անհամըելը:) Բաւական է.. Գլնում եմ հագուստա փոխելու. (Չուռ է զալիս զնալու:)

Տ. Արմաւեանց. Եթէ մեզ համար չես ուզում մտածել, գոնէ աշխատիր Լուսիկի համար:

Պ. Արմաւեանց. (շուռ զալով:) Ի՞նչ . . .

Տ. Արմաւեանց. Այսուրի մարդ է, դիրքով, աստիճանով . . գուցէ այն ժամանակ մենք էլ մի բաղդի հանդիպենք:

Պ. Արմաւեանց. Ի՞նչ . . Ուզում ես ասել որ Լուսիկին ամուսնացնենք նրա հետ . . . Սամսոնբէգին ի՞նչ ես անում:

Տ. Արմաւեանց. Սամսոնբէգը խոմ կայ ու կայ: Փորձենք . . աչքումս սրանից նա լաւ փեսացու է երեսում:

Պ. Արմաւեանց. Դու գժուել ես, այ կի՞ն . . Լուսիկի համար նա հայրացու է և ոչ թէ փեսացու . . Սհա քեզ նոր միտք . . . ի՞նչ տեղից ծագեց դլխումդ: (Ծիծաղում է եւ ծեռքերը թափ տալով դուքս է զնում:)

### ՏԵՍԱՐԱՆ 3.

Տ. Արմաւեանց մէնակ.—յետոյ Լուսի:

Տ. Արմաւեանց. Ի՞նչ կայ այստեղ ծիծաղելու: Զարմանալի են, Աստուած վկայ, տղամարդիկ: Իրանց մասին ես մտածում, ասում են՝ հարկաւոր չէ, ժամանակ չէ . . . Ուրիշի համար ես հոգում, հանաքի տեղ են դնում . . . Ի՞նչ փոյթ որ նա Լուսիկին ուզէ: Սամսոնբէգից աւելի դիրքով մարդ է: Ի՞նչ անենք որ տարիքով է . . . Հիմա ովկ է դրան նայում: Սմեն մարդաշխատում է աղջկան լաւ ու հարուստ տեղ տալ, հասակի տարբերութեան վրա չեն նայում: Քիչ են եղել այս տեսակ օրինակներ . . . Սամսոնբէգը վատ տղայ

չէ, հարուստ էլ է, բայց նա սրանից կատարեալ է. նաւելի կը սիրէ իր կնոջը, տունը, տեղը . . . Այդ հասակի մարդիկ աւելի հաստատ ու հաւատարիմ են իրանց օջաղին . . . Բայց Լուսին կմւղէ . . . ախր շատ է գրաւուած Սամսոնբէգից . . . Է՛հ, ոչինչ, Լուսիկը ջահէլ է, հեշտ է նրան համողել . . .

Լուսի. (մտնելով:) Ահա և ես:

Տ. Արմաւեանց: Ի՞ւֆ, ի՞ւֆ, ի՞նչ սազ է գալիսքեզ գէիրան . . Մէկ շուռ արի, տեսնեմ: (Լուսին շուռէ զալիս) ի՞ւֆ, հիանալի է, հիանալի . . . Ո՞ր տղամարդ չի գրաւուիլ քեզանից . . . բայց . . . առաջ արի . . . այդ ի՞նչ է . . ինչու է այդքան քիչ վրայիդ ակնեղէնը:

Լուսի. Ինչոր հետո բերել եմ, այն էլ շինել եմ:

Տ. Արմաւեանց. Քիչ է . . . գնա իմիններից որը հաւանես, վերցրն և շինիր . . . Զէ որ նա էլ է սիրում ակնեղէնները:

Լուսի. Ո՞վ . . . Սամսոնբէգը . . .

Տ. Արմաւեանց, Ո՛հ, ոչ . . . մեր նորեկ հիւրը: Լուսի: Այսինքն Դաւթեանցը:

Տ. Արմաւեանց. Հա, ի՞նչ է որ . . .

Լուսի. (Ծիծաղելով) Գու ի՞նչ տեղից դիտես թէ նա ակնեղէններ սիրում է:

Տ. Արմաւեանց. Գու չասացիր թէ տեսար նրա մատի վրա զմրուխտի մատանի. կը նշանակէ թէ նա էլ է սիրում ակնեղէններ . . . Ճաշակի զուգադիպութիւն կայ քո և նրա մէջ:

Լուսի. (Ծիծաղելով:) Ճաշակի զուգադիպութիւն . . .

Տ. Արմաւեանց. Հա, ի՞նչ ես ծիծաղում . . . Ճա-

շակի զուգագիպութեանը հետեւում է և ուրիշ բան:  
Այսպէս է աշխարհիս բանը: Մի որ և իցէ չնչին զուցագիպութիւն պատճառ է դառնում երեւլի բանի  
մարդուս կեանքի մէջ:

Լուս. Քոյրիկ, կատակ ես անում:

Տ. Արմաւեանց. Ամենակին. . Ահա, անս, թէ ինչպէս պատահեցաւ իմ ու Գարեգինի ամուսնութիւնը: Մի օր նա եկել էր հայրիկի մօտ գործով: Խօսք ընկաւ զանազան կերակուրների մասին. նա ասաց թէ շատ է սիրում տապակած վառիկ. . էհ, դու խոժ գիտես որ ես էլ եմ սիրում:

Լուս. Յետոյ:

Տ. Արմաւեանց. Յետոյ... յետոյ էլ ի՞նչ... փոքր ժամանակից յետոյ մենք ամուսնացանք:

Լուս. Միմեանց չսիրելով:

Տ. Արմաւեանց. Մէրը մի այնպիսի բան է որ յետոյ ինքն իրան կը գայ.. պէտք է աշխատել կեանքը դարձել քաղցր ու հաճելի, սէրը քամակից կը գայ:

Լուս. Յետոյ կը գայ... ի՞նչպէս թէ յետոյ կը գայ:

Տ. Արմաւեանց. Այնպէս, ինքն իրան:

Լուս. Իսկ եթէ ատելութիւն գայ:

Տ. Արմաւեանց. Այդպիսի բաներ դլիսդդ հանիր:

Լուս. Այդ ես չեմ հասկանում:

Տ. Արմաւեանց. Ի՞նչ տեղից կարող ես հասկանալ.. Ես քեզանից տասը—տասներկու տարով մեծ եմ, քեզանից աւելի փորձուած եմ և այդ տեսակ բաներ քեզանից աւելի լաւ եմ հասկանում: Օրինակի համար վերցրու իմ ու Գարեգինի կեանքը... Տեսնում ես՝ ի՞նչ-

պէս քաղցր ենք ապրում... եթէ միքիչ հարուստ լինէինք, խոժ էլ աւելի քաղցր կը լինէր մեր կեանքը... Դաւթեանցի համար ասում են թէ շատ հարուստ է...

Լուս. Զէ, քնյրիկս, եթէ մարդս բուռն կերպով չէ սիրում իր ընտրածին, սրտատրով չէ սպասում նրա գալուն, չէ ինդում նրա ներկայութիւնից, լաց չէ լինում նրա բացակայութիւնից, ուրիշ կերպ սէրը անհասկանալի է ինձ համար, եթէ նոյն խոկ միլիօններ էլ իմ առաջ դիզած լինեն:

Տ. Արմաւեանց. Այդ տեսակ բաները դրքերում են գրուած. Կեանքի մէջ գրանք չեն լինում... դու գեռ ջահէլ ես, չես հասկանում հարստութեան գինը, մարդու կ'երթաս, կ'իմանաս... աբա մէկ լաւ մտածիր... էհ, բաւական է, արգէն մթնում է, հօրէս հիւրեր էլ կը գան, գնամ, հրամայեմ ճրագները վառեն: (Շտապով դուրս է զնում ծախ դռնով:)

Լուս. Լիզան ինչ սր մտագրուել է... Սակայն չէ որ ասում էր թէ Սամսոնքէգը հարուստ կալուածատէր է... (Խորքից երեւում է Սամսոնքէզը) Ախ, Սամսոնքէգ... (Առաջ է զնում: ) Ետ լաւ էք արել որ եկել էք ամենից վաղ:

(Ճառան լամպարը ծեռին մտնում է եւ զնում կլոր սեղանի վրա զահաւրակի առաջ. յետոյ մտնում է խորքի սենեակը եւ այնտեղ էլ է լուսատրում: )

ՏԵՍԱՐԱՆ 4.

Լուսի, Սամսոնքէգ.—յետոյ Օգնականը:

Սամսոնքէգ. Զէ՞ որ հրամայեցիք ինձ դալ ամենից վաղ...

Լուսի. Այն, այն, շատ լաւ արիք... Տեսնենք, երբ կը բարեհաճի դալ մեր նորեկ հիւրը, որին պատուելու համար այսքան աշխատում են քոյրս ու փեսաս:

Սամսոնքէգ. Այդ բոլորը նրանք անում են իրանց օգուտի համար:

Լուսի. Ի՞նչ օգուտ:

Սամսոնքէգ. Զէ՞ որ Գաւթեանցը փեսայիդ մեծաւորն է, որից նա կախումն ունի:

Լուսի. Ի՞րաւ... բաս ուրիշ ոչինչ..

Սամսոնքէգ. Աշխարհի բանը այդպէս է.. երբ մէկից կախումն ունես, աշխատում ես նրան հաճոյանալ... Ուրիշ ինչ բան կարող էր ասիպել դրանց, բացի այն մտքից որ նրան սիրելի լինեն: Բաս մենք, օրիորդ, ինչպէս փառք չտանք Աստուծուն որ ազատ ենք և մեր կամքի տէրը... (Խորքից երեւում է Օգնականը:) Ահա, ոս էլ է քծնում նրա առաջ հէնց այդ մտքով՝ ծնորհաւորում եմ, պ. Օգնական, սպասած հիւրը եկաւ:

Օգնական. Չեզ էլ աւետիս... Բարե, օրիորդ,  
Լուսի. Բարե:

Օգնական. Ե՞րբ էք եկել քաղաքից:

Լուսի. Վեց օր կը լինի:

Օգնական. Վեց.. ուրեմն այն միջոցին, երբ ես

գնացել եմ անտառու գործով։ Զանձրացաք քաղաքի աղմուկից, շատ հասկանալի է։ (Սամսոնքէգին) Այն, պատուական Սամսոնքէգ, եկաւ սպասած հիւրը և թող ձեր ազգական ու հարեւան տիկինը ուրախանայ... նա է հետաքրքիր նրանով։

Սամսոնքէգ. Նա ի՞նչ գործ ունի, քանի որ դիւզացիների վէճի համար է եկել: (Խորքից լսվում է ձայն, որ կանչում է Լուսիին) Օրիորդ, ձեզ կանչում են:

Լուսի. (սթափուած:) Ո՞ւմ, ի՞նձ...

Սամսոնքէգ. Այն: (Սորից լսվում է ձայնը.)

Լուսի. Ա՞խ, քոյրս է կանչում... Ներեցէք, պարսներ: (Շտապով դուրս է զնում ձախ դռնից:)

ՏԵՍԱՐԱՆ 5.

Սամսոնքէգ. Օգնական:

Սամսոնքէգ. Սխալվում էք, պ. Օգնական, տիւկին Սշխարբէգեանցին բոլորովին չէ վերաբերում գործը: Դուք էք սկսել վէճը դիւզացիների հետ:

Օգնական, Ախը, չէ՞ որ դիւզացիների վէճը նրա սրտին շատ մօտ է: Վերջապէս, ինչո՞ւ թագցնել, կայ մէկը, որ նրան գրդուում է և այդ վէճը դարձնում է նրա համար հետաքրքիր:

Սամսոնքէգ. Ի՞նչ էք ուզում ասել..

Օգնական. Դուք էլ լաւ գիտէք, էլ ինչո՞ւ էք ինձ ասել տալիս:

Սամսոնքէգ. Խնդրեմ, խնդրեմ, հեռու միք գընալ. գիտեմ ձեր բնաւորութիւնը. կը սկսէք նրան զրպարտել:

Օգնական. Քառ լիցի . . նրան զրպարտելու իրաւունք չունեմ . . Սակայն, Սամսոնբէդ, դուք գիտէք որ ես մի դիտող ու փորձուած մարդ եմ և երբէք չեմ սխալուել եղբակացութիւններիս մէջ . . Տիկին Աշխարբէդեանի և երիտասարդ իւղբաշնանի յարաբերութեան մէջ նկատելի է, ինչպէս ասել ձեզ . . . ոչ թէ դաղափարական, այլ մի տեսակ երկոյթ, որ նրանից աւելի բարձր է ու նուիրական:

Սամսոնբէդ. (մէկուսի:) Երբ կատեան սրա բերանն էլ է ընկել, լաւ բան չէ:

Օգնական. (շարունակելով:) Մի տեսակ, գիտէք, զգացունքների համակրութիւն . . . Հա, հա . . . Ուզիդ չէ ասածս:

Սամսոնբէդ. Շատ սխալ ու անհիմն եղբակացութիւն է:

Օգնական. Կարելի է, սիրելի Սամսոնբէդ, շատ կարելի է . . . Սակայն ես նրան չեմ դատապարտում . . . Քառ լիցի, դա մի բնական պահանջ է:

Սամսոնբէդ. Տիկինը ընտրել է նրան իրան խորհրդատու գիւղական գործերի մէջ. այդ հաստատ է . . .

Օգնական: Չեմ վիճում, սիրելի Սամսոնբէդ, կարելի է հէնց այդպէս էլ է . . . միայն հաւատացէք ինձ որ խորհրդատուի գերը, հէյ, մարդուս շատ հեռու է տանում . . . Հիմի, օրինակի համար, օրինակի համար եմ ասում, դուք օրիորդ կուսիին ձի նստել էք սովորացնում . . .

Սամսոնբէդ. Հա, ինչ է որ . . .

Օգնական. Կարծեմ, թղթախաղ էլ էք սովորացնում . . .

Սամսոնբէդ. Հա, ինչ է որ . . .

Օգնական. Խորհրդատու և ուսուցիչ . . .

Իրար շատ մօտիկ են: (Ժիծաղում է:)

Սամսոնբէդ. (Ժիծաղնլով:) Ի՞նչ անիրաւ մարդ էք եղել . . .

Օգնական. Ա՛խր . . . մարդ կոյր պէտք է լինի, որ չտեսնէ թէ ինչ է պատահում ափաշկարայ շուրջդ: Ներեցէք, սիրելի Սամսոնբէդ, խօսքը տեղն եկաւ, ասացի:

Սամսոնբէդ. Բաւական է, խնդրեմ. գիտեմ շատ հեռու կը տանէ ձեզ այս խօսակցութիւնը:

Օգնական. Լոռում եմ. . . (Փոքը լրութիւն:)

Սամսոնբէդ. Լսեցէք, այդ ձեր մեծաւորը երկար ժամանակ կը մնայ այստեղ:

Օգնական. Գործից է կախուած:

Սամսոնբէդ. Բայց բաւական իրարանցում պատճառեց ձեզ:

Օգնական. Սովոր ենք այդպիսի բաներին, սիրելի Սամսոնբէդ . . . Դրանց մենք լաւ ենք ճանաչում: Սկզբում հարայ հրոց կը գցեն, վերջը կը ձանձրանան, կը տիրեն, յետոյ էլ . . . կը փախչեն:

Սամսոնբէդ. Ո՛հ, միամիտ եղեք, մենք չենք թողնիլ որ նա տիրէ . . . Դուք ասացէք միայն, նա խաղողն է թուղթ:

Օգնական. Չեմ իմանում . . . Հը, ախորժակդ ուրել էք . . .

Սամսոնբէդ. Շատ հետաքրքիր է . . . Եթէ խաղալիս լինի, լաւ է, փոքը ինչ թափ կը տանք նրան:

Լսել եմ լաւ ոռօնիկ է ստանում . . փող էլ կ'ունենայ խնայած:

Օգնական. Զեմ իմանում, սիրելի Սամսոնքէդ, չեմ իմանում . . Երևի բաներդ բուրդ է:

Սամսոնքէդ. Է՞հ . . էլ միք հարցնիլ . . Երևակայեցէք, տասն օր կը լինի, ինչ բաղդս թարսուել է: Նստում եմ այն մտքով որ տանեմ, հակառակի պէս տանուլ եմ տալիս:

Օգնական. Աբա մէկ օր նստեցէք այն մտքով որ տանուլ տաք, գուցէ բաղդը ժպտայ ձեզ . . .

Սամսոնքէդ. Ծիծաղեցէք . . Հէնց երէկ . . տասն անդամ երրորդ թուղթը ինձ էր հասնում . . ամեն անդամ 75 ոռւբլի: Ասում եմ խփիր, խփում է . . Երկրորդ անդամ . . . խփեց . . . Երրորդ անդամ, էլի խփեց . . . Ես էլ կատաղեցի . . . տասն անդամ խփել տուի և 750 ոռւբլին սեղանի վրա դրի և վեր կացայ տեղեցս . . . Անիծեալ թուղթ . . .

Օգնական. Ո՞ւր էիք կատաղում . . . տեսաք որ թուղթը չի գալիս, թնդիր ժամանակին վեր կենայիք, այդքան տանուլ չելիք տալ:

Սամսոնքէդ. Ախր, չեք իմանում . . . Երէկ հէնց դիտմամբ նստեցի փորձելու օրիորդ Լուսիի բաղդը:

Օգնական. Օրիորդ Լուսիի բաղդը . . . Հա . . . հիմի հասկանալի է ձեր կատաղութիւնը . . . Էհ, էհ, էհ, վարժապետ ու աշակերտուհի . . տեսաք որ խօսքս կատարուեց . . . Ախր, չասացի՞ ձեզ թէ ես դիտող մարդ եմ . . . ինչու էիք ինձ նախատում . . . Հէ, սիրելի Սամսոնքէդ, ուղիղն ասացէք. հաւանում էր նրան . . .

Սամսոնքէդ. Զեզ ինչ . . .

Օգնական. Զէ, այնպէս հարցնում եմ . . . շատ հետաքրիր է . . .

Սամսոնքէդ. Ոչ թէ հաւանում եմ, այլ պատրաստ եմ մինչև անդամ սիրահարուելու:

Օգնական. Գիտէի, գիտէի, որ այդպէս էլ կը լինէր:

Սամսոնքէդ. Ի՞նչ տեղից գիտէիք.

Օգնական. Վայ, կոյր խոմ չեմ . . . վերջապէս, ինչ ասեմ ձեզ, գիտէի որ վերջ ի վերջոյ կը սիրահարուէիք:

Սամսոնքէդ. Գիտէիք . . . վայ, սիրաս խոմ ներկարի կարաս չէ:

Օգնական. Ներկարարի կարաս չէ, այլ . . . ինդրեմ չնեղանաք . . . քարվանսարայ է, ուր տուն ու գուրս անողներ շատ են լինում: . . .

Սամսոնքէդ. (Ծիծաղելով:) Քարվանսարայ . . . ի՞նչ համեմատութիւն . . . ուղիղ ասեմ ձեզ՝ ես շուտ եմ ձանձրանում մի տեսակ բաներից . . սիրում եմ փոփոխականութիւն, չէ՞ որ հէնց կեանքը դրա մէջ է . . . բայց խօստովանում եմ ձեզ՝ օրիորդ Լուսին . . . գիտէք, մի ուրիշ տեսակ՝ արարած է, ի՞նչպէս ասեմ ձեզ . . . հրապուրիչ . . . գիտէք . . . այնպէս ասած . . . բօմբօշկն . . .

Օգնական. (Ճնոքերը խաղացնելով:) Այն, այն, այսպէս . . .

Սամսոնքէդ. (Ճնոքերը խաղացնելով:) Այն, այն . . . (Խփում է նրա փորին: ) Դուք էլ պակաս չեք ինձանից . . . գիտեմ, գիտեմ ձեր հեշտասիրութիւնը . . . Հա, հա, հա, քարվանսարայ . . . Գնանք, գնանք այն սենեակը, կարծեմ հիւրերն եկան . . . Քարվանսարայ . . . (Եր-

կուսն էլ ծիծառելով դիմում նն դէպի խորքի սենեակը, որտեղից շտապով ներս է մտնում պ. Արմաւեանցը. սրանց հանդիպելիս Օգնականին պահում է, դիմելով դէպի ծախ դուռը:)

### ՏԵՍԱՐԱՆ 6.

Պ. Արմաւեանց. Օգնական:

Պ. Արմաւեանց. Բարեւ Սամսոնբէդ . . . դնացէք, հիւրերը ձեզ սպասում են:

Սամսոնբէդ. Եկան . . . ես էլ պատրաստ եմ . . . (դուրս է զնում:)

Պ. Արմաւեանց. Պարոն Նիկողայոս, սպասեցէք մի ըսպէ (ծախ դուն մօտ) Գրիգոր, Գրիգոր, շուտարան, թղթերը տար խաղացողների մօտ: (Յետ է զալիս:) Ինչ անհամբեր մարդիկ են . . . մի փոքր չեն մտածում որ հիւր կայ գալու և կարելի է նա էլ բուզում խաղալ . . .

Օգնական. Զեն ուզում ժամանակ կորցնել . . .

Պ. Արմաւեանց. Դեռ էլի ժամանակ կայ. նոր է մթնել օրը . . . Դուք ինչ արիք . . . տեղաւորեցիք:

Օգնական. Այս, տեղաւորեցիք . . .

Պ. Արմաւեանց. Գօհ է բնակարանից:

Օգնական. Երեխ: Ոչինչ չասաց:

Պ. Արմաւեանց. Գոնէ կարգադրեցիք որ աշաւլուրջ լինեն, որ ամեն բան նրա ցանկացածի պէս լինի, որ ամեն բան չուտ ու արագ կատարուի:

Օգնական. Կարգադրեցիք, որքան այդ հնարաւոր

էր: Կարծեմ այնքան էլ պահանջող չի երեսում:

Պ. Արմաւեանց. Դրանք այդպէս գիտեն: Սկզբում ոչինչ չեն ասում, բայց վերջը բոլոր պակասութիւնը մաշղու երեսով են տալիս, քննիչներիցը հանում:

Օգնական. Խոմ չէի ստեղծել այն, ինչ որ կարելի է ճարել մեծ քաղաքում . . . Ամբողջ աւանը տակն ու վրա արի . . . մէկից այս ուզեցի, միւսից այն և մի կերպով սարքեցի բնակարանը: Չի հաւանիլ, խոմ մեշտառը չենք . . .

Պ. Արմաւեանց. Գործից խօսեց:

Օգնական. Ո՛չ մի խօսք . . . միայն ասաց որ վազը մտադիր է անձամբ այցելել ու դիտել վիճելի տեղը:

Պ. Արմաւեանց. Հըմ, վաղը . . . այդ էր պահաս . . . թոյլ չի տալ որ փոքր ինչ շունչ քաշենք . . . վաղը, վաղը . . . հըմ ինչ մի ստիպողական բան կայ:

Օգնական. Քթիցը երեսում է որ շատ ճշգապահ ու պեղանտ մարդ պէտք է լինի: Արժան չի նստիլ մեղ վրա դրա այցելութիւնը:

Պ. Արմաւեանց. Դիմադրութիւնը որտեղ էք սուվորել:

Օգնական. Ինձ այդպէս է թվում:

Պ. Արմաւեանց. Ծատ սխալգում էք: Ճշգապահ է, այս, ինչպէս որ պէտք է լինի ամեն մի ծառայող, սակայն պեղանտ չէ:

Օգնական. Տայ Աստուած . . . կարծեմ եկաւ:

(Խորքի սենեակում լսվում է աթոռներից առնացած աղմուկը)

Պ. Արմաւեանց. Եկան . . . դնացէք լնդ առաջ:

(Վազում է դէպի ծախ ղուոր: ) Լիզա, Լիզա, գնուրս  
Եկ: (Ժառան վազելով խորքի սենեակից:) Հիւրը Եկաւ:

Տ. Արմաւեանց. (ղուրս զալով:) Եկաւ... (ղի-  
տում է դէպի խորքը:)

Լուսի. (ղուրս զալով:) Լիզա, շտապիր...

(Ամենքը շտապում են խորքի սենեակը: Տ. Ար-  
մաւեանց եւ Հուսին կանգնում են ղուան ժօտ: Խոր-  
քում պ. Արմաւեանցը հիւրեւի հետ ծանօթացնելուց  
յատոյ, առաջնորդում է Դաւթեանցին ներս, որտեղ  
ծանօթացնում է նրա հետ կնոջն ու քննուն:)

### ՏԵՍԱՐԱՆ 7.

Պ. Արմաւեանց, Տ. Արմաւեանց, Լուսի, Սամսոնքի,  
Դաւթեանց, Օգնական:

Տ. Արմաւեանց. Համեցէք, պ. Դաւթեանց, այս-  
տեղ համեցէք: (Ցոյց է տալիս զահատրակի վրա):

Դաւթեանց. Մի նեղանաք, տիկին... Դուք նստե-  
ցէք այդտեղ, իսկ ես այստեղ, ձեր կողքին:

(Ամենքը նստում են:)

Տ. Արմաւեանց. Ճանապարհից յոդնած կը լինիք:  
Դաւթեանց. Ո՛չ, ընդհակառակը թարմացայ,

ՃՃելով ձեր երկրի մաքուր ու առողջարար օդը:

Սամսոնքի. Չեզ համար, ի հարկէ, նկատելի կը  
լինի, ապրելով միշտ բազմամարդ քաղաքում:

Պ. Արմաւեանց. Քաղաքում օդը ճնշուած է:

Սամսոնքի. Օդը, իրաւ, ճնշուած է, բայց որ-

շափ հրապուրիչ է քաղաքային կեանքը իր բազմազան  
գուարճալիքներով:

Լուսի. Այստեղ կեանքը եռում է... շփում ես  
պէս պէս մարդկանց հետ... միով բանիւ զգում ես  
որ ապրում ես:

Դաւթեանց. Ճշմարիտ է, սակայն այդ եռացող  
կեանքը այնչափ տաղտկալի է, որ երբեմն կարեորու-  
թիւն ես զգում մի առժամանակ հեռանալ աղմկալից  
կեանքից և հանդստանալ բնութեան ծոցում, այսպի-  
սի մի հրաշալի երկրում, որպիսին է ձեր աւանը, մա-  
նաւանդ նրա շրջակայքը:

Սամսոնքի. Միթէ ծանօթ էք մեր երկրին:

Դաւթեանց. Տասն և վեց տարի սրանից առաջ  
երիտասարդութեանս հասակում, անտառապետի օգ-  
նականի պաշտօնով, չափչիել եմ բոլոր շրջակայքը:

Տ. Արմաւեանց. Ո՛հ, այդ շատ վազուց է եղել:  
Այն ժամանակից շատ բան փոխված կը լինի, շատ  
բան էլ գուցէ մոռացած լինիք:

Դաւթեանց. Բնութիւնը առհասացակ չէ վոխ-  
վում. բնակիչների մէջ, ի հարկէ, փոփոխութիւն կա-  
րող է լինել: Հենց վերցնենք ձեր աւանի միակ եկե-  
ղեցին, որ այն ժամանակ հնութիւն չէր ներկայաց-  
նում... իսկ այժմ նա այն չէ... մամռապատ...  
կիսաքանդ:

Սամսոնքի. Ուզում էք ասել որ պատիւ չէ բե-  
րում մեր աւանին այդ հանդամանքը:

Պ. Արմաւեանց. Աւանը անփոյթ է:

Օգնական. Տեղացիք ուրիշ շատ կարեօր հոգսեր  
ունին:

Սամսոնքէզ. Իրեւ այս երկրի կալուածատէր կարող եմ հաւատացնել ձեզ, որ բազմիցս արծարծել եմ եկեղեցու նորոգութեան խնդիրը, սակայն ոչինչ չեմ կարողացել անել: Ժողովրդի մէջ պակասել է ջերմեռանդութիւնը:

Տ. Արմաւեանց. Երեխ պատճառներ կան . . .

Դաւթեանց. Ինչ և իցէ, ցաւալի է այդ հանդամանքը:

Պ. Արմաւեանց. (վեր կենալով) Իրաւ պատճառներ կան, սակայն դրանց քննութիւնը մեզ հեռու կը տանէր: Աւելի լաւ է զբաղուենք մեզ գաւառացիներիս համար սիրելի գործով: Պարօն Գաւթեանց, հիւրերս փոքր ինչ անհամբեր գտնուեցին: Ճեր գալուց առաջ նստոտեցին թուղթ խաղալու, բայց և այնպէս կարող եմ ձեզ համար էլ սալքել որ և է խաղ: Աբա, Սամսոնքէդ . . .

Սամսոնքէզ. Պատրաստ եմ . . .

Դաւթեանց. Տարաբաղդաբար, ես թուղթ չեմ խաղում:

Սամսոնքէզ. (վեր կենալով,) Զէք խաղում:

Լուսի. Միթէ . . .

Պ. Արմաւեանց. Ուրեմն մինչև իրիկնահացը պէտք է ձանձրանաք:

Դաւթեանց. Ո՛չ, ես ձանձրանալու առիթ չեմ ունենալ, քանի որ սիրելի տանտիկինը և շնորհալի օրիորդը ինձ հետ կը լինեն: Դուք, ի հարկէ, թուղթ չէք խաղում:

Տ. Արմաւեանց. Առ հասարակ խաղում եմ, բայց այս անդամ ոչ:

Դաւթեանց. Ուրեմն այս անդամ պէտք է ձեզ պատճեմ:

Տ. Արմաւեանց. Ո՛չ, ոչ, խնդրեմ, մի նեղանաք: Սամսոնքէզ. Ուրեմն, գուք չեք խաղում, պարոն Դաւթեանց . . . Ափսան . . .

Դաւթեանց. Ես էլ եմ շատ ափսոսում որ խաղալ չգիտեմ և այդ պատճառով տանտէրներին մեծ հոգու եմ պատճառում:

Սամսոնքէզ. Իսկ ես խաղում եմ ամեն տեսակ խաղ: Երէկ բաւական պատճուեցի, հարկաւոր է վրէժը հանել: Օրիորդ Լուսի, այսօր էլ կը փորձեմ ձեր բազգը:

Լուսի: Ոչ, ոչ, հարկաւոր չէ . . . Տեսնում էք որ բազգը չէ օգնում ձեզ:

Սամսոնքէզ. Բայց և այնպէս, էլի կը փորձեմ: Ի՞նչ կասէք, պարօն Դաւթեանց:

Դաւթեանց. Կատարեալ յաջողութիւն եմ ցանկանում ձեզ:

(Պ. Արմաւեանց, Սամսոնքէզ, Օգնականը դուրս են գնում:)

### ՏԵՍԱՐԱԿ 8.

Տ. Արմաւեանց, Լուսի. Դաւթեանց:

Տ. Արմաւեանց. Միթէ ձեզ մօտ թղթախադ չկայ:

Դաւթեանց. Ի՞նչպէս չկայ . . . Թուղթ խաղացողը միշտ կարող է դանել տեղ ու ժամանակ խաղալու

Համար: Պէտք է նկատել ձեզ, սիրելի տիկին, որ թշղթախաղը դառնում է սովորութիւն նրանց համար, ու բոնք չեն իմանում թէ ինչպէս անցկացնեն ժամանակը:

Տ. Արմաւեանց. ձշմարիտ էք ասում . . . երբ խա. զը չի սարքվում, ձանձրանում եմ և ճարահատեալ պատիանս եմ բաց անում:

Դաւթեանց. Դուք, տիկին, զաւակներ ունիք, ձանձրանալու ժամանակ չեք ունենալ:

Տ. Արմաւեանց. Ո՞հ, մի ասէք, պ. Դաւթեանց, հէնց զաւակներիս հոգու ինձ մեծ նեղութիւն է պատճառում: Ահա, նրանք արդէն այն հասակի մէջ են մտնում, որ հարկաւոր է նրանց ուսում տալ. բայց այստեղ, ինչպէս դիտէք, դպրոց չկայ:

(Այս ժամանակ պ. Արմաւեանցը երեսում է խորքի սենեակից, մտնում է եւ մօտենում ձախ կողմի դռան, բաց է անում այն եւ յետոյ առաջ է զալիս:)

Պ. Արմաւեանց. Լիդա, դուրսը ինչ որ կարգադրութեան են սպասում: (Գնում է նորից խորքի սենեակը:)

Տ. Արմաւեանց, իսկըն: (Դաւթեանցին:) Ուզարկել նրանց բաղաք չեմ վատահանում և որ գլխաւորնէ՝ մեծ ձախս է պահանջում, որ . . .

Պ. Արմաւեանց. (Խորքից:) Լիդա, կանչում են: (Հեռանում է:)

Տ. Արմաւեանց. (Վեր կենալով:) Գնում եմ այս բոպէիս . . . (Դաւթեանին:) Սրանից կարող էք իմաստալ, պ. Դաւթեանց, թէ որքան ձանր է մեզ համար այստեղի ապրուստը . . . Առ այժմ ներեցէք . . . էլի ժամանակ կ'ունենանք այս մասին խօսելու: (Գնում է ձախ դռնով:)

### ՏԵՍԱՐԱՆ 9.

Լուսի, Դաւթեանց:

Լուսի. Քոյրիկս, իրաւ, զրկուած է քաղաքային հրապոյներից:

Դաւթեանց. Ախս, օրիորդ, քաղաքն էլ ունի շատ պակասութիւններ:

Լուսի. Ոհ, ինչ էք ասում . . . Միթէ կարելի է համեմատել այս յետ ընկած տեղը քաղաքի հետ: Այնտեղի կեանքը, զուարձութիւնները . . ոհ . . . Դուք յաճախում էք թատրոն, երեկոյթներ:

Դաւթեանց. Թատրոն, այն . . . բայց երեկոյթներ այն ժամանակ, երբ տալիս են բարեգործական նպատակով, այն էլ ստիպողական, երբ հարկաւոր է լինում գնալ:

Լուսի. Միթէ . . . իսկ ես այնքան սիրում եմ յաճախել . . . Ա. Ախս, որքան հրապուրիչ է այնտեղ . . . որքան սիրելի է տեսնել նոր տարազի զուքսեր, աչքը շացնող ակնեղիններ, որոնք իրանց փայլով գերազանցում են երեկոյթի լուսաւորութիւնը:

Դաւթեանց. Ա. Ա. . .

Լուսի. Քոյս եթէ զենէք այստեղ, ես երբէք չեմ դալ այս աւանը:

Դաւթեանց. Ոհ, ինչ մեծ զոհաբերութիւն ձեր կողմից: Սակայն ինչպէս էք անցկացնում այստեղ ձեր ժամանակը:

Լուսի. Աշխատում եմ գտնել որ և է զուարձու-

թիւն։ Սովորել եմ ձի նստել և ժամերով արշաւում եմ այս ու այն կողմը։

Դաւթեանց, Դուք նկատել եք թէ մրգան դեղեցիկ է այստեղի բնութիւնը։

Լուսի. Ուղիղ ասած, ես այնքան էլ չեմ հրապուրվում բնութիւնից։ Բնութիւնը ինձ երեսում է միատեսակ, տաղտկալի . . . նա չէ լարում զգացմունքներս։

Դաւթեանց. Միթէ . . . Սակայն, որքան գիտեմ, օրիորդները շատ գիւրդգած են։ Օրինակի համար, միթէ այստեղի ստուերախիտ անտառը, ուր արեի ճառագայթները հաղիւ են թափանցում, ուր մի տեսակ անուշ հոտ է բուրում։ միթէ այս բոլորը չէ լարում ձեր զգացմունքները և չէ կազդուրում ձեզ։

Լուսի. Ո՞չ, ես անտարբեր եմ։

Դաւթեանց. Դիտէք ի՞նչ . . . կարծում եմ որ դուք ոչ թէ անտարբեր եք, այլ գիտել եք հարեանցի, անցողական։ բայց եթէ ստիպէք ձեղ կենտրոնանալու նրա հրաշալիքների վրա, դուցէ այն ժամանակ . . .

Լուսի. Ո՞չ, ոչ . . .

Դաւթեանց. Յայն դէպս ես դժուարանում եմ հասկանալ ձեր անտարբերութիւնը,

Լուսի. Քանի որ նա անշարժ է և չէ խօսում սրտիս հետ, ինձ թվում է թէ նա մեռած է ու անախորժ։ Այդ իսկ պատճառով հեռանում եմ շուտով այս երկրից և նորից ընկնում քաղաքային եռուն կեանքի մէջ։

Դաւթեանց. Շատ լաւ . . . բայց ի՞նչ եք անում քաղաքում։

Լուսի. Ո՞հ, շատ բան . . . Ցերեկը ինձ միշտ կը

տեսնէք զբօռնելիս քաղաքի աչքի ընկնող փողոցներում։ Սիրում եմ կանգնել երկար ժամանակ որ և է խանութի առաջ, ուր ի ցոյց են դրուած նորանոր ապրանքներ . . . մանաւանդ այցելում եմ ակնավաճառների կրպակները և դիտում գոյնզգոյն ակնեղէնները . . . Հենց հիմա, աչքս չեմ հեռացնում ձեր այդ մատանուց . . . Հիմանալի է, հիմանալի։

Դաւթեանց. Ո՞հ, մրգան ափսոսում եմ որ չեմ կարող զարդարել ձեր գողտրիկ մատը սրանով . . . Սա իմ անբաղդ մօրս միակ յիշատակն է, որ մնացել է ինձ . . .

Լուսի. Բայց ի՞նչ հրաշալի յիշատակ . . .

Օգնական. (Վենելով խորքից) Օրիորդ Լուսի, Սամսոնբէգի բաղդը շուռ է եկել։ Տեսէք թէ ինչքան փող է գիզուած նրա առաջ։

Լուսի. (Վեր թռչնելով) Իրան . . . Գնամ տեսնեմ . . . Զէ որ այսօր էլ փորձում է նա իմ բաղդը։ (Վազում է դէպի խորքը)։

## ՏԵՍԱՐԱՆ 10.

Դաւթեանց, Օգնական։

Դաւթեանց. (Վեր կենալով) Դուք պատրաստէլ էք տուել անտառի երկու կտորի նախագիծը։

Օգնական. Այն, պատրաստ է։

Դաւթեանց. Վաղը ցոյց կը տաք ինձ երկու կը տորին էլ։ Զարմանում եմ թէ ինչո՞ւ համար այդչափ ձգձգեցիք վէճը, մինչդեռ կարող էիք տեղն ու տեղը

վերջացնել առանց իմ միջամտութեան:

Օգնական. Այն կտորը, որի համար վիճում է ժողովուրդը, ի հարկէ, չարժէր այդքան դրագրութեան:

Դաւթեանց. (Խիստ) Ուրեմն պարապել էք զուր ժամավառութեամբ և մեզ անհանդիստ արել:

Օգնական. Մեղաւորը Արմաւեանցն է, որ չի ուզում զիջանել ոչ մի պայմանով:

Դաւթեանց. Ժողովրդի հետ հարկաւոր է հաշտ լինել, այդ մեր վարչութեան սկզբունքն է . . . իսկ դուք բանը հասցրել էք մինչև այնտեղ, որ նախարարին անհանդիստ էք արել մի այդպիսի չնչին բանի համար:

Օգնական. Գիւղի մէջ կան ազգեցիկ մարդիկ, որոնք գրգռում են ժողովրդին:

Դաւթեանց. Ովքէր են դրանք:

Օգնական. Հէնց առաջինը տեղիս կալուածատէր տիկին Աշխարբէգեանցը, որին աջակից է գիւղից դուրս եկած մի տղայ:

Դաւթեանց. Եւ ձեզ համար ամօթ չէ որ չկարողացաք խափանել մի թոյլ կնոջ ազգեցութիւնը:

Օգնական. Դուք ինքդ կը տեսնէք որ տիկին Աշխարբէգեանցի հետ դիւրին չէ դործը դլուխ բերել նա յամառ է, իբրև սատանայ, և ոչ մի կերպով չի ուզում զիջանել . . .

Դաւթեանց. Ալսր, նրան ի՞նչ . . . նա խօմ չունի մասն ու բաժին:

Օգնական. Չունի, ճշմարիտ է, բայց ժողովուրդը դործում է նրա դրդմամբ:

(Խորքի սենեկում աղմուկ է բարձրանում: Այնտեղից ներս է զալիս տ. Աշխարբէգեանցը առաջնորդութեամբ տ. Արմաւեանցի. սրանց հետեւում են պ. Արմաւեանց եւ Լուսի:)

### ՏԵՍԱԲԱՆ 11

Դաւթեանց, Օգնական, Տ. Աշխարբէգեանց, Տ. Արմաւեանց, Պ. Արմաւեանց, Լուսի:

Տ. Արմաւեանց. Կատեա, սիրելիս, ի՞նչ հիանալի սիւրպիզ պատրաստեցիր ինձ համար . . .

Տ. Աշխարբէգեանց. Մի բոպէով եկայ այստեղ դործ ունէի. կարող էի միթէ քեզ չտեսած վերադառնալ:

Տ. Արմաւեանց. Զեր մի բոպէն, հրաշալի տիկին, կը դառնայ ամբողջ երեկոյ, որ յոյս ունեմ կ'անցկացնէք մեզ հետ:

Տ. Աշխարբէգեանց. Ոչ, ոչ, անկարելի է . .

Տ. Արմաւեանց. Քեզ համար երբէք անկարելի բան չի եղած, հիմա ի՞նչ պատահեց: (Առաջ են զալիս,) Խնդրեմ ծանօթանալ . . . Տիկին Կատարինէ Աշխարբէգեանց . . . պարոն Լևոն Դաւթեանց:

Պ. Արմաւեանց. Մեր պարոն քննիչը, որ պէտք է մեզ հաշտեցնէ:

Տ. Աշխարբէգեանց. Մենք միշտ հաշտ ու բարեկամ ենք եղել, պարոն Արմաւեանց, բայց և այնպէս ուրախ եմ ծանօթանալու պարոն Դաւթեանցի հետ:

Տ. Արմաւեանց. Բրաւո . . . Տեսար, Գարեգին,

այստեղ էլ յաղթեց քեզ բարեկամուհիս:

Պ. Արմաւեանց. Յաղթում է, ամեն տեղ յաղթում . . . այդ մի արժանաւորութիւն է:

Տ. Աշխարբեանց. Ո՛չ, այդ արժանաւորութիւն չէ . . . աւելի լաւ է ասել՝ արդարութիւն է . . Ա՛հ, բարե, պարօն Օգնական, ի՞նչպէս էք . . .

Օգնական. Ծնորհակալ եմ, տիկին, ի՞նչպէս միշտ . . .

Տ. Աշխարբեանց. Եատ ուրախ եմ . . . բայց ես պատճառ ունիմ ձեզանից դժգոհ լինելու. մի շաբաթ մեր կողմերում էք եղել և ինձ չէք յիշել . . .

Օգնական. Ներեցէք, տիկին, ես շատ զբաղուած էի:

Տ. Աշխարբեանց. Մեր երկիրը այնքան ամայի է որ հիւրի այցելութիւնը դարագլուխ է համարվում:

Պ. Արմաւեանց. Սակայն, տիկին, մենք մեր պաշտօնի պատճառով այնքան ստէպ ենք լինում ձեր կողմերում, որ կարող ենք ի չարը դործ դնել ձեր հիւրասիրութիւնը:

Լուսի. Տիկին, այս անգամ փեսայ Գարեգինը յաղթեց ձեզ,

Պ. Արմաւեանց. Յաղթեցի . . . ոչ, ոչ, այդպիսի մի բան չեմ մտածել . . ընդհակառակ, ես միշտ պատրաստ եմ ինձ յաղթուած համարել սիրելի տիկինոջ առաջ: (Օգնականին): Պարօն Նիկողայոս, իմնդրեմ շարունակէք խաղո՝ դուրսը ես դործ ունեմ: (Պ. Արմաւեանց եւ Օգնականը դուրս են գնում խորքի սենեակը:)

ՏԵՍԱՐԱՆ 12.

Դաւթեանց, Տ. Արմաւեանց, Լուսի, Տ. Աշխարբեանց: (Տ. Արմաւեանց եւ Լուսին այս տեսարանի միջոցին մի քանի անգամ տուն ու դուրս են անում:)

Տ. Արմաւեանց. Յաղթութիւնը վերջ ի վերջոյ միշտ կնոջ կողմն է լինում, այնպէս չէ, պ. Դաւթեանց: Դաւթեանց. Նայելով թէ ինչ գործի մէջ:

Տ. Արմաւեանց. Այստեղ, որտեղ տղամարդը լժուլասիրտ է ու անվստահ, գործի յաջողութեան համար հարկաւոր է կնոջ միջամտութիւնը:

Տ. Աշխարբեանց. Սիրելի Լիզա, դու ուզում ես ասել որ եթէ մի դործ սկսուած է կնոջ ձեռքով, նա առաջ կը տանէ յամառ տոկունութեամբ:

Տ. Արմաւեանց. Հէնց այդպէս է.

Դաւթեանց. Այս, կան կանայք, որոնց սկսած գործը պսակվում է յաջողութեամբ:

Տ. Արմաւեանց. Ուրեմն եթէ կինը ուզենայ, կարող է առաջ տանել դործը՝ դիմադրելով բոլոր արշելքներին:

Դաւթեանց. Եթէ նրա սկսած գործը արդար է, ի հարկէ: Անարդար դործը՝ ույ ձեռքով էլ սկսած մինի, կը մնայ անարդար:

Տ. Աշխարբեանց. Բոլորովին համաձայն եմ . . .

Դաւթեանց. Այս էլ պէտք է ձեղ ասեմ, թէ կինը այնքան քնքուշ ու զգայուն արարած է, որ երբէք չի վստահանալ միջամտել անարդար գործին: (Նստում են՝ Տ. Աշխարբեանցը գահաւորակի վրա, Դաւթ-

եանցը նրա մօտ բազկաթոռի մէջ։ Տ. Արմաւեանցը կանգնած է փոքր ժամանակ, յետոյ հեռանում է, նուրից մօտենում կամ դուրս է գնում միջին դռնից։ Լուսին կանգնած է կամ շըջումէ սենեակում։)

Լուսի. Արդար և անարդար գործը գժուար է որոշել։ Այն ինչ որ մէկի համար արդար է, միւսի համար կարող է լինել անարդար։

Դաւթեանց. Սիրելի օրիորդ, եթէ մի գործ վնասում է ուրիշին, ոտնակոխ է անում մէկի իրաւունքը, մինչև անգամ պատիւը, համարվում է անարդար, Այս գէպքում մարդկանց համակրութիւնը չի կարող լինել նրա կողմը, ով աշխատում է առաջ տանել այդպիսի գործ։

Տ. Աշխարբէգեանց. Այն էլ պէտք է ասել, որ կինը ամեն գործի չի միջամտում և միայն այն դէպքում է միջամտում երբ իրօք տեսնում է որ արդարութիւնը ոտնակոխ է լինում։

Տ. Արմաւեանց. Եւ այն ստիպողական գէպքերում, երբ կարիքը անհրաժեշտ է դարձնում այդ անելու։ Այսպէս չէ, պ. Դաւթեանց։

Դաւթեանց. Ճիշտ է . . . կարիքը շատ ստիպողական կողմեր ունի։

Տ. Արմաւեանց. Ճիշտ է, ճիշտ . . . ներեցէք, մի րոպէով կը հեռանամ ձեզանից . . . (Գնում է, ծանապարհին Լուսիին կը ան տակը վերցնում եւ մի կողմքաշելով։) Լուսի, գնանք, հրամայիր հացը պատրաստեն, ժամանակ է արդէն։

(Երկուսն էլ դուրս են գնում։)

Տ. Աշխարբէգեանց. Դուք շատ ճիշտ նկատեցիք

որ միւսի անգամ կնոջ մէջ լինում է հաստատ կամքու տոկունութիւն։ Երեխ այն էլ գիտէք, թէ որքան արդելքներ կան նրա առաջ, որոնց պատճառով նա չի կարողանում ազատութէն իրադործել իր դիտաւորութիւնները։

Դաւթեանց. Սիրելի տիկին, այդ արդելքները մենք ենք ստեղծում։

Տ. Աշխարբէգեանց. Ինչպէս . . . միթէ ձգտելով մի որոշ նպատակի և հանդիպելով արդելքների, ես ինքս եմ նրանց ստեղծում . . . Ո՛չ, իրանք իրանց են առաջ գալիս հակառակ մեր կամքի։

Դաւթեանց. Ո՛չ, դուք ինքներդ չէք ստեղծում, այլ առաջ են գալիս ձեր երեակայութեան մէջ։ — Այդպարզեմ ձեզ . . . Շատ անգամ մի նախապաշարմունք ձեզ յետ է մզում կատարելու մի այնպիսի գործ, որ կարող էր մեծ ծառայութիւն անել թէ ձեզ և թէ հասարակութեան։

Տ. Աշխարբէգեանց. (Մտածմունքի մէջ։) Իրաւ . . . Սակայն մենք անզօր ենք . . .

Դաւթեանց. Էնդ հակառակն . . . հէնց այդտեղ դուք պէտք է ցոյց տաք ձեր կամքի ոյժը . . . Հասարակական բարոյագիտութիւնն ինչքան էլ շաղախուած լինի նախապաշարմունքով, այնու ամենայնիւ մենք պարտական ենք տալ նրանց այս կամ այն ուղղութիւնը։ Երբ բնութեան տարրերքի գէմ մարդկային միտքը հնարաւոր գտաւ մաքառելու, միթէ նախապաշարմունքի գէմ կոխւը գժուար է, քանի որ մենք ենք նրանց ստեղծել և ուրեմն մենք էլ պէտք է խափանենք նրանց մեր ազատ կամքով։

Տ. Աշխարքեզեանց. Այսու ամենայնիւ այդ բանկը այնքան էլ զիւրին գործ չէ:

Դաւթեանց. Սխալվում էք, տիկին:

Տ. Արմաւեանց. (Մտնելով:) Կատեա, թիկնապահ Սիմոնդ եկաւ: Ես նրան ճանապարհ կը դնեմ, իսկ դու կը մնաս մեզ մօտ:

Տ. Աշխարքեզեանց. Ո՛չ, ոչ, վազը կարեար գործ ունեմ տանս:

Տ. Արմաւեանց, Գիշերավ ինչպէս կ'երթաս. կարելի է իրիկնահացը ուշ վերջանայ: Տես, դեռ էլի խաղում են, յայտնի չէ թէ երբ կը վերջացնեն:

Տ. Աշխարքեզեանց. Ո՛չ, անկարելի է... իսկ իրիկնահացի համար շնորհակալ եմ... դու գիտես որ ես չեմ ընթրում:

Տ. Արմաւեանց. Այստեղ էլ ես ուզում խօսք տռաջ տանել. (դուքս է զնում.)

Տ. Աշխարքեզեանց. (ծիծաղելով:) Ինչպէս միշտ...

Դաւթեանց. Հիմի ուշ է, տիկին, գնալ դիւդ:

Տ. Աշխարքեզեանց. Սովոր եմ... Առ հասարակ չեմ վախենում, քանի որ, ինչպէս առում է կիզան, թիկնապահս հետո է:

Դաւթեանց. Մի հասարակ դէպք էլ կարող է ձեզ վախեցնել:

Տ. Աշխարքեզեանց. Շուրջը խազաղ մարդիկ են ապրում և ինձ ճանաչում են:

Դաւթեանց. Ամառ-ձմեռ միշտ ապրում էք դիւդում:

Տ. Աշխարքեզեանց. Միշտ:

Դաւթեանց. Եւ դուք չէք ճանձրանում:

Տ. Աշխարքեզեանց. Երբէք... Ամբողջ օրերով պարապում եմ գիւղական գործերով, գիշերները կար եմ անում կամ կարդում: Աշակերտական նստարանից սիրել եմ կարդալ և դիրքը եղել է իմ անբաժան ընկերու:

Դաւթեանց. Քաղաք չէք յաճախում:

Տ. Աշխարքեզեանց. Հազուադիւտ գէպքերում, երբ կարիքը ստիպում է:

Դաւթեանց. Մեծ անձնագոհութիւն է...

Տ. Աշխարքեզեանց. Սովորել եմ, պ. Դաւթեանց. Մինչեւ անգամ կարիք չեմ զգում քաղաքային ազմկալից կեանքի մէջ: Մի-մի անգամ միայն, երբ լսում եմ թէ քաղաքում եկել է երեելի երաժիշտ, գնում եմ նրան լսելու:

Դաւթեանց. Միրում էք երաժշտութիւն:

Տ. Աշխարքեզեանց. Շատ... Մոռացայ ասել, որ դրեբի հետ անբաժան ընկերս է նաև դաշնամուրը:

Լուսի. (Մտնելով խորքից:) Սամսոնքդի բաղդը սկսել էր ժամանակ, բայց հիմի նորից թարսուել է... սկսում է տանուլ տալ:

Տ. Աշխարքեզեանց. Նա սովոր է, սիրելիս:

Լուսի. Ախր, նա իմ բաղդն է փորձում:

Տ. Աշխարքեզեանց. Այդ ցաւալի է, իրաւ: (Դաւթեանցին:) Դուք ծանօթացանք Սամսոնքդի հետ:

Դաւթեանց. Այստեղի կալուածատիրո՞ն:

Տ. Աշխարքեզեանց. Այս... նա իմ դրացին է և մօտիկ աղքական: Շատ բարի երիտասարդ է: Մտաւ զինուրական ծառայութիւն, բայց շուտով թողեց և այժմ կառավարում է իր կալուածքը:

Լուսի. Հեծելազօրքի մէջ էր և հիանալի ձի է նստում:

Դաւթեանց. Օրիորդ, նա սովորացրեց ձեղ ձի նստել:

Լուսի. Այս . . . Արժէ տեսնել թէ ինչպէս ենք երկուսովս արշաւում,

Տ. Աշխարբէգեանց. Այս, իմացել եմ:

Լուսի. Երէկ թէ միւս օրը դժի պէս չափ տուինք ձեր տան մօտով, ուզում էինք ձեր ուշադրութիւնը դրաւել, բայց դուք, կարծեմ, տանը չէիք . . .

Տ. Աշխարբէգեանց. Այս, գնացել էի գիւղ . . . պարոն Դաւթեանց, դուք, երևի, շուտով կ'այցելէք մեր դիւզը. հաւատացած եմ ինձ չէք մոռանալ:

Դաւթեանց. Մեծաւ ուրախութեամբ կ'այցելեմ ձեզ: Ինձ լաւ յայտնի է ձեր դղեակը. շատ անդամ եղել եմ այնտեղ: Միտու է մի փոքրիկ գետակ քերում է ձեր պարտիզի մի կողքը, որի երկարութեամբ իմ ժամանակ տնկեցին մատաղ թեղիներ:

Տ. Աշխարբէգեանց. Այդ մատաղ թեղիները այժմ դարձել են բարձրաբերձ ու ստուերախիտ ծառեր:

Լուսի. Այդտեղ—տիկինը շինել է տուել մի հիանալի հովանոց:

Դաւթեանց. Եւ այդ հովանոցի տակ դուք անձնատուր էք լինում ձեր խոհերին . . . Ո՞հ, որքան երջանիկ էք . . .

Լուսի. Ի՞նչ երջանկութիւն է՝ նստել մեն մենակ, մտածել ու մտածել . . . ախր, չէ որ դա տաղտկալի բան է:

Տ. Աշխարբէգեանց. Տաղտկալի է, ասում ես,

Լուսի, միշտ ու հանապազ մտածելը . . . աակայն ի՞նչ արած, հոգիս, երբ այդ է վիճակուել ինձ:

Դաւթեանց. Մի տիկնոջ, մանաւանդ ձեր խոհերը պէտք է որ երջանիկ լինեն:

Լուսի. Չեմ կարծում որ երջանիկ լինի միշտ մտածել՝ թէ այս տարի հունձը ինչպէս է, առատ է թէ պակաս անցեալ տարուանից . . . Երբ լինում ես տիկնոջ մօտ նրա խօսակցութիւնը պարոն Արշակի հետ միշտ այդ է լինում:

Տ. Աշխարբէգեանց. (Ժիծաղելով:) Լուսին միշտ ձանձրանում է ինձ մօտ . . . ես չեմ կարողանում սրան զբաղեցնել: Օրիորդը չի սիրում ոչ ծաղիկներ և ոչ երաժշտութիւն: Ուրիշ զուարծութիւն որ սրան դուր է գալիս ինձ մօտ չկայ:

Լուսի. Երեւակայեցէք, պ. Դաւթեանց . . . մի օր ես և Սամսոնբէգը շտապով արշաւում ենք դէպի տիկինը, որ ընկերանայ մեզ և մի փոքր պտոյտ անէ շրջակայքում . . . Տեսնում ենք՝ տիկինը պ. Արշակի հետ խորը զբաղուած է մի ինչ որ ծրագիր կազմելով . . . ի՞նչ էր այն . . . հա . . . գիւղացիների մտաւոր և նիւթական բարեկեցութեան կաղմակերպութիւն . . . քիչ մնաց փրթկայինք . . . գիւղացիների համար ուսումնարան, լսարան, ընթերցարան և այլն և այլն . . . Լսեցէք՝ գիւղացիների համար . . .

Տ. Աշխարբէգեանց. Դուք երկուադ ծիծաղում էք, բայց և այնպէս կ'աշխատեմ կապել ձեղ այդ գործի հետ . . .

Լուսի. Ի՞նձ . . . Ո՞չ, ոչ, ինդրեմ ինձ ազատ անէք . . .

Տ. Արմաւեանց. (Խորքից մտնելով:) Թուղթ խաղցողները մեզ համար չեն մտածում: Երկի ձանձրացել էք, պարոն Դաւթեանց:

Դաւթեանց. Ամենեին... գուցէ տիկինը...,

Տ. Աշխարբէգեանց. Մենք այնպէս զբազութեցանք խօսակցութեամբ, որ ժամանակն աննկատելի անցաւ Լուսի. Քոյրիկ, պարոն Դաւթեանցը դիւղից էր խօսում, որ ինչպէս գիտես, շատ հաճելի է տիկնոջ համար:

Տ. Արմաւեանց. Շատ ուրախ եմ որ չեք ձանձրացել:

Դաւթեանց. Տիկինը այնքան բարի է որ եթէ ձանձրանայ էլ չի ասիլ:

Տ. Աշխարբէգեանց. Այս, ճշմարիտ եմ ասում որ ձանձրանալու առիթ չունեցայ: (Փոքը ինչ մտածելուց յիտոյ վեր է թոշում:) Գնալու ժամանակ է:

Տ. Արմաւեանց. Ուր, ուր, անկարելի է, շուտով խաղը կը վերջացնեն:

Տ. Աշխարբէգեանց. Ո՞չ, ոչ, սիրելի Լիզա... ուշ է արդէն: Ես սովոր եմ վաղ քնել և վաղ վեր կենալ: Յաեսութիւն, պարոն Դաւթեանց: Յուսով եմ արժանի կը համարեք տեսնելու ինձ դզեակիս մէջ:

Դաւթեանց. (Վեր կենալով:) Կ'աշխատեմ...

Տ. Աշխարբէգեանց. Ուրեմն ցտեսութիւն... վաղուանից հէնց ես տանե եմ... Լիզա, Լուսի, չմոռանաք ինձ... (Ծտապով դուրս է զնում. Նրան հետեւում են Տ. Արմաւեանց եւ Լուսի:

### ՏԵՍԱՐԱՆ 13.

Դաւթեանց.—մենակ:

Ո'քան նազելի արարած է... Սա կարող է ներշնչել կեանք ծերերին, հոգի տալ երիտասարդներին... Ի՞նչքան մտերժաբար վերաբերուեց ինձ... Քծնում էր իմ առաջ գործի պատճառով... բայց ինչու համար մի բառ անդամ չասաց այն շարաբաղդ վէճի մասին... Ո՞չ... այդ քնքուշ էակի մէջ չկար նենդութեան նշոյլ... Նա պարզ էր, ինչպէս նրա վճիտ ծով աչքերը, անկեղծ էր, իբրև մանուկ:

### ՏԵՍԱՐԱՆ 14.

Դաւթեանց, Պ. Արմաւեանց, յետոյ Տ. Արմաւեանց:

Պ. Արմաւեանց. (Վտնելով:) Թուաւ մեր նախշուն թիթեռնիկը... Զնկատեցիք, պարոն Դաւթեանց, թէ նրքան պօէզիա կայ այդ շնորհալի կնոջ մէջ:

Դաւթեանց. Այս, շատ հետաքրքիր կին է..

Տ. Արմաւեանց. (Վտնելով:) Ո՞վ, ով, կատեմնա

Պ. Արմաւեանց. Այս, բարեկամուհիդ...

Տ. Արմաւեանց. Համեցէք, պ. Դաւթեանց, իրիկ-նահացը պատրաստ է: (Դաւթեացնը առաջարկում է սրան իր թեւլը:) Ափսոս որ չմնաց... եթէ նրան մօտիկ ծանօթանաք, կը տեսնէք որ նա աւելի հետաքրքիր կին է, քան կարծում էք... Համեցէք... (Դիմում են դէպի խորքի սենեակը:)

յուսահատեցնել քեզ . . . քեզ, Սամսոնիդ, որ միշտ  
դոհ ես եղել կեանքից:

Սամսոնիդէգ. (Փոքը ինչ հեռանում է հովանոցից  
եւ նորից մօտենալով, համարեա կիսածայն:) Լուսին  
գնացել է քաղաք:

Տ. Աչսարբէգեանց. Օհօ . . . Սամսոն . . . դու  
ես . . . ինչպէս երեսում է այս անդամ շատ ես հրա-  
պուրուել . . . Շատ և շատ ուրախ եմ քեզ համար:

Սամսոնիդէգ. Այն, իրաւոնք ունիս . . . այս ան-  
դամ հրապոյրս անկեղծ է . . . Սակայն հէնց սկզբից  
հանդիպում եմ արգելքի:

Տ. Աչսարբէգեանց. Ո՞ւմ կողմից:

Սամսոնիդէգ. (Նստելով:) Հէնց այդ բանն է որ  
մութ է ինձ համար . . . Այն երեկոյից յետոյ, նա միշտ  
մուայլ ու տիսուր էր . . . Հարցնում եմ պատճառը,  
չի ասում. մինչեւ անդամ, կարծես, խուսափում էր  
ինձանից: Հարցրի քրոջից, փեսայից. նրանք էլ մի ու-  
րոշ բան չասացին: Երէկ գնացի նրանց մօտ, ինձ յայտ-  
նեցին, թէ ինչ որ ստիպողական պատճառով գնացել  
է քաղաք:

Տ. Աչսարբէգեանց. Կարելի է այդպէս էլ լինի:

Սամսոնիդէգ. Ոչինչ ստիպողական բան չի կարող  
լինել . . . Ախր, վազուան համար որոշել էինք կազմել  
պիկնիկ անտառի մէջ «կաթնաղբիւրի» մօտ: Նա ինքն  
էր մտածել այդ և այնքան հրապուրուած էր այդ  
մտքից, որ ինչ էլ պատահէր, յետ չէր կանգնելու  
նրանից:

Տ. Աչսարբէգեանց. Կարելի է հայրը կամ տա-  
նըցիներից մի ուրիշը հիւանդացել է:

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲԵՄԸ ՆԵՐԿԱՅԱԳՆՈՒՄ Է Տ. Աշխարբէգեանցի տան  
առաջ պարտէղը, ուր ամեն ուրեք կան մարդեր ծա-  
ղիկներով: Զախ կողմում կայ մի հովանոց: ԲԵՄԻ խոր-  
քում երեսում է վանդակապատ դուռը որ բացվում է  
դէպի դուրս փողոցը: Աջ կողմից մի քանի աստիճան-  
ներով կայ սանդուխ, որ տանում է տան ներսը: —  
Վարագոյրը բարձրանալիս Տ. Աշխարբէգեանցը նստած  
հովանոցում կազմում է ծաղիկներից փունջ: Սամսոն-  
բէգը կանգնած է նրա մօտ:

### ՏԵՍԱՐԱՆ 1.

Տ. Աչսարբէգեանց, Սամսոնիդ:

Տ. Աչսարբէգեանց. Զես ուղում ասել ինձ թէ  
ինչու ես քիթդ կախ արել: Այդ քեզ սազ շի գալիս:  
Սամսոնիդէգ. (ղժգոհ) է՞՞ . . .

Տ. Աչսարբէգեանց. Այս անդամ, երեխ, շատ ես  
տանուլ տուել:

Սամսոնիդէգ. (Զարացած:) Ե՞րբ եմ տանուլ տուած  
փողի համար տիսրել, որ այս անդամ տիսրէի:

Տ. Աչսարբէգեանց. Հապա, ինչ բան կարող էր

Սամսոնքէգ. Եթէ մի այդպիսի բան լինէր՝ կտսէին . . Հենց առաջինը տիկին. Արմաւեանցը կը վազէր . . Զէ, չէ, ոչինչ ստիպողական բան չկայ . . Գըլուխտ կասկածանքով լիքն է . . չեմ իմանում ի՞նչ բանի վերագրել նրա շտապով հեռանալը այստեղից: (Վեր է կենում անհանգիստ:)

Տ. Աշխարբէգեանց. Լաւ է . . . շատ էլ մի մտածիր: Ես մի կերպով կ'իմանամ ամեն բան . . . Վեր առայս փունջը և դիր ամանի մէջ: (Տալիս է փունջը Սամսոնքէգին, որ դնում է ամանի մէջ:)

Սամսոնքէգ. Հեշտ է ասել՝ շատ էլ մի մտածիր . . . թէ կարողանայիր սրտիս մէջ նայել, այդ չէիր ասիլ . . .

Տ. Աշխարբէգեանց. Սամսոն, Սամսոն, կարծղ էի միթէ նոյն իսկ երևակայել թէ դու, բօն վիվանդ, կարող էիր այդքան շուտ ընկնել սիրոյ փորձանքի մէջ:

Սամսոնքէգ. Ինչու համար . . . միթէ մենք մեռած կամ անզգայ է:

Տ. Աշխարբէգեանց. Ո՛չ, ես այդ չէի կարծում . . . ընդ հակառակը՝ ես միշտ այն էի ասում որ քեզ պէս անհոդ մարդը մի օր կը զգայ և չարաչար կը զգայ սիրոյ մաշող տանջանքը . . . փաստը ակներեւ է . . . Հիմա տեսնում ես թէ ինչ մեծ հոդս ու տանջանք է պատճառում սէր ասած բանը. տեսնում ես թէ որ շափ յուսահատական մտքեր է զարթեցնում նա մարդուս մէջ. զգում ես անձամբ սիրոյ լափող կրակը . . . Դու ծիծաղում էիր այն ժամանակ . . . հիմա հաւատում ես որ ուղիղ էր խօսքս:

Սամսոնքէգ. Քո վերաբերմամբ ես նոյն համոզմունքն ունիմ, ինչ որ բազմիցս քեզ կրկնել եմ . . . Քո

աէրը, Եթէ միայն անկեղծ է, մի անբնական երևոյթ է, որ չէ սազում ոչ քո գիրքին և ոչ քո անուան:

Տ. Աշխարբէգեանց. (առող: ) Մէրը չի ճանաչում ոչ դիլք և ոչ անուն:

Սամսոնքէգ. (Նստելով:) Մխալվում ես . . . Ահա քեզ էլի բացատրեմ . . . ինչ որ դու մտածել ես, այդ հակառակ է այն շրջանին, որին դու պատկանում ես: Այդ քայլում մեզանից ոչ ոք չի կարող քեզ համար կրել: Քո շրջանի և քո շրջանից դուրս մարդկանց կարող է միայն ծիծաղ պատճառել:

Տ. Աշխարբէգեանց. Ինչու, ինչու . . . միթէ մենք մարդ չենք . . . միթէ մենք զրկուած ենք մեր ցանկացածը ազատուէն կատարելու իրաւունքից:

Սամսոնքէգ. Ո՛չ, ես ասել եմ և նորից կրկնում եմ որ դու պարտական ես հաշիւու համար տալ այդ բանի մէջ քո շրջանի մարդկանց:

Տ. Աշխարբէգեանց. Դա մի նախապաշարմունք է, որ դու և քեզ հետ շատերը կրկնում են իրանց բռնութիւնը ծածկելու համար . . . Ինչու էք ինձանից հաշիւու համար պահանջում և թայլ չէք տալիս ինձ ես նոյնը անել, երբ . . .

Սամսոնքէգ. (Ընդհատելով վեր է թոշում:) Կատեա, մի նորօգիլ այն, ինչ որ անցել գնացել է:

Տ. Աշխարբէգեանց. Հենց այդտեղ է իմ իրաւունքը . . . Այժմ, երբ ես ամեն բան փորձել եմ, ոչ ոք իրաւունք չունի բռնանալու ինձ վրա դասակարգային յիմար նախապաշարմունքներով:

Սամսոնքէգ. Մխալվում ես, ոչ թէ միայն քո շրջանի մարդիկ այդպէս են դատում, այլ և քո շրջա-

նից դուրս անձինք . . . Մէկ տես, լսիր ու համոզուիր թէ ի՞նչ են ասում . . . Օգնականը բաւական է որ քո մասին տարածէ ամեն տեսակ բանբասանքներ։ Այն օրը հէնց դրա մասին էր խօսում ինձ հետ . . .

Տ. Աշխարբէգեանց. Ես ինձ ազատ ու բարձր եմ համարում այդ տեսակ բանբասանքներից . . . Բամբասանքներից թող նա վախենայ, ով կեղծութեամբ է գործում . . . կրկնում եմ՝ Ես ազատ եմ, ազատ այդ ամենից։

Սամսոնքէգ. Դու երբէք քեզ ազատ չես կարող համարել. իսկ եթէ դու կամենում ես կտրել քո յարաբերութիւնը թէ մեզ հետ և թէ դրսի մարդկանց հետ, այդ ուրիշ բան է։

Տ. Աշխարբէգեանց. Ես գաղտնի ու ծածուկ չեմ գործել և դուք ամենքդ պէտք է հաշտուէիք այդ մտքի հետ։

Սամսոնքէգ. Եթէ մերոնք մատների արանքների միջով էին նայում իւղբաշեանցի քեզ մօտ ստէպ գալու վրա, յուսով էին որ ձեր մէջ միայն մի գաղափար կայ, այն է՝ օգնել դիւղացիներին . . .

Տ. Աշխարբէգեանց. (ընդհատելով) Այդպէս էլ իմացէք . . .

Սամսոնքէգ. Եթէ միայն այդէս է . . . բայց փաստեր կան, որ ուրիշ բան են ասում . . . Ախ, եթէ միայն կասկածէին որ ձեր յարաբերութիւնը այդ գաղափարի սահմանից անցնելու է, իմացած կացիր, որ կարող էին վերջ դնել այդ բանին։

Տ. Աշխարբէգեանց. Ի՞նչ իրաւունքով։

Սամսոնքէգ. Այն իրաւունքով որ այդ անհաւա-

սար կապը հակառակ է մեր ընտանեկան աւանդութիւններին և վիրաւորական մեզանից ամեն մէկի համար։ Ես մինչև անդամ սոսկում եմ այն մտքից որ երեկուայ մեր ռաջպարը պէտք է մելիքենց տան վեսայ գառնայ։ Ոհ, սոսկալի է, սոսկալի . . .

Տ. Աշխարբէգեանց. (նախատելով) Սամսոն, Ես երբէք չէի հաւատալ որ դու էլ կարող ես լինիլ այն կարծիքի, ինչ որ ընդհանուր է հին սերունդի համար . . . Միւնոյնը լսում եմ տատիցս, հօրեղբօրիցս . . . Միթէ դու, երիտասարդ տեղովդ, պէտք է ձայնակից լինես նրանց և ունենաս նրանց պէս փտած համոզունքներ . . . Ախ, որքան, որքան անբաղդ եմ . . . (Վեր է կենում եւ մի ուրիշ փունջ տանում է դնելու ամանի մէջ։)

Սամսոնքէգ. Դու՝ ի՞նքդ ես մեղաւոր . . . դու քո երեակայական ազատութեամբ կամենում ես ստեղծել այնպիսի կեանք, որին իբնէ սովոր չես . . . Հեռանալով մեր շրջանից, չես կարող մօտենալ նորին . . . Լաւ կշռիր արած քայլդ։ Յտեսութիւն։ (Ծտապով դուրս է զնում պարտէզի դոնից։)

Տ. Աշխարբէգեանց. (սառնա) Յտեսութիւն . . .

## ՏԵՍԱՐԱՆ 2.

Տ. Աշխարբէգեանց—միայն։

(Երկար ժամանակ շրջում է մտածմանց մէջ, կանգնում է, նորից շրջում) — Կեանքիս նոր շրջանի մէջ մարդ չկայ որ փարատէր ցաւս, թեթևացնէր մո-

լորեալ վիճակս... (նստում է հովանոցի տակ եւ վերց-  
սելով ծաղիկը ջղածեւ փերթում է թերթիկներ:) Մի-  
թէ դասակարգային տարբերութիւնը կարող է արգելք  
լինել. նրանք սոսկում են որ երեկուայ ռաշպարը  
դառնալու է մելիքենց տան փեսայ... Սակայն այս-  
պէս է. կայ առիթ սոսկալու համար... կեանքի մէջ,  
իրաւ, այդ տեսակ մի իրողութիւն մարդիկ դատա-  
պարտելի են համարում... սակայն ինչու համար...  
Մի տարի է այդ երիտասարդը գրաւել է ուշադրու-  
թիւնս իր խոհեմ ու ուշիմ գործունէութեամբ. մի  
տեսակ համակրութիւն եմ տածում նրա դաղափար-  
ներին. սիրելի է ինձ լսել նրա կրակոտ ու վառվոռն  
խօսքերը. «Հ, ո՞րչափ համոզեցուցիչ են և վստահելի...  
սակայն... (ընկնում է խոր մտածմանց մէջ: Այս  
ժամանակ 8. Արմաւեանցը շտապով իջնում է տան  
կողմի սանդուխննից):

### ՏԵՍԱՐԱՆ 3.

S. Աշխարբէգեանց. S. Արմաւեանց:

S. Արմաւեանց. Կամեա, սիրելիս, դու այստեղ  
ես եղել:

S. Աշխարբէգեանց. (ընդ առաջ զնալով:) Ո՞ր-  
քան ուրախ եմ որ ինձ մտաբերեցիր. (Համբուրփում  
են: 8. Արմաւեանցի ծեռքը քոնած տանում է եւ նզս-  
տեցնում է հովանոցի տակ:) Եկ, եկ, սիրելիս, նստենք  
այստեղ. այստեղ աւելի հով է:

S. Արմաւեանց. Գարեգինը գալիս էր այստեղ  
դործով, ես էլ եկայ. Ասացի. բարեկամուհուս էլ կը

տեսնեմ և տեղնուտեղը կ'առնեմ տան համար հար-  
կաւոր պաշար: Մեր աւանում ամեն բան թանգ է,  
կլակի գին ունի:

S. Աշխարբէգեանց, Դու և պ. Գարեգինն էլ կը  
մնաք ինձ մոտ ճաշի:

S. Արմաւեանց. Կը մնանք, անպատճառ կը մը-  
նանք:

S. Աշխարբէգեանց: Լուսին քեզ հետ չէ:

S. Արմաւեանց. Ոչ... նա քաղաք գնաց:

S. Աշխարբէգեանց. Հա, զորդ Սամսոնն ասաց...  
ինչ է պատահել... տանը խոմ հիւանդ չկայ:

S. Արմաւեանց. Ոչ, փառք Աստուծոյ, ամենքը  
առողջ են... բայց խոմ դիտես Լուսիկի խռովկան  
քնաւորութիւնը... մի խօսք ասացի նրան, խռովեց  
ու շտապով փախաւ:

S. Աշխարբէգեանց. Սամսոնը շատ է զարմացել...  
մանաւանդ որ այս քանի օրերում նա կամեցել է ան-  
տառում պիկնիկ կազմել:

S. Արմաւեանց. Այդ... այդ բանը ինձ աւելի  
է զայրացնում... Զէ որ այդ պիկնիկը պէտք է լինէր  
ի պատիւ Դաւթեանցի... Եկի լաւ է որ նրան այդ  
մասին վաղօրօք ոչինչ չենք ասել, թէ չէ իսպառ խայ-  
տառակութիւն կը լինէր... Ի դէպ, այսօր Դաւ-  
թեանցն էլ կը լինի քեզ մոտ ճաշի:

S. Աշխարբէգեանց. Նա էլ կը լինի, պ. Արշակն էլ:

S. Արմաւեանց. (Դժգոհութեամբ:) Դու էլ մարդ  
գտար նրա հետ նստացնելու... պարոն Արշակը ոչ  
քո և ոչ նրա շրջանի մարդ չէ:

S. Աշխարբէգեանց. Իրաւ... իսկ ես կարծում

Եմ որ նրանց մէջ կայ միայն հասակի տարբերութիւն... երկուսն էլ լրջամիտ, խելօք, կրթուած...

S. Արմաւեանց. Կամեա, կամեա... զարմանում եմ քեզ վրա... միթէ կարելի է դրանց համեմատել... Գաւթեանցը մարդ է, կատարեալ մարդ... Ուղիղ ասած, սկզբում նրան չհաւանեցի. կարծեցի գոռող, հպարտ կը լինի, ինչպէս մի պաշտոնեայ, որ արագ հասնում է բարձր աստիճանի... բայց սխալուցի... շատ ուղղամիտ, ծանրաբարոյ մարդ է... Ա՛խ, ի՞նչ լաւ փեսացու է...

S. Աշխարբէզեանց. Ո՞ւմ համար...

S. Արմաւեանց. (Ժպտալով:) Ո՞ւմ համար... հէնց թէկուղ քեզ համար:

S. Աշխարբէզեանց. (Ծիծառելով:) Ինչեր ես ասում սիրելիս...

S. Արմաւեանց. Նա հիացած է քեզանից. շատ է գովում քեզ:

S. Աշխարբէզեանց. Յետոյ...

S. Արմաւեանց. Յետոյ այն, որ շատ լաւ էք գըտել իրար... լի սրտով ողջունում եմ և օրհնում սկըսած գործդ...

S. Աշխարբէզեանց. (Լըջօրէն:) Սիրելի Լիզա, դու գիտես որ ես պարզախօս ու անկեղծ մարդ եմ... թնջլ տուր քեզ նկատելու որ շատ ու շատ սխալվում ես... Գաւթեանցն, իրաւ, շատ համակրելի և արժանաւոր մարդ է. բայց նա չէ իմ իգէալը:

S. Արմաւեանց. Ափսնս... Ա՛հ, եթէ միայն կաշը լինէր, մեծաւ ուրախութեամբ կը համաձայնէի որ Լուսին նրան ուղէր... Դու չդիտես, կամեա, թէ

ինչ տեսակ ապագայ է սպասում նրան...

S. Աշխարբէզեանց. Լուսիկին էլ, ինձ էլ թնդ, որ մենք մեր սրտի ուզածն ընտրենք:

#### ՏԵՍԱՐԱՆ 4.

S. Աշխարբէզեանց, S. Արմաւեանց, Իզբաշեանց:

Իզբաշեանց. (Պանդակապատ ղընից շտապով մտնելով:) Տիկին, որպի՞սի գժբաղդութիւն... Ուկանենց Գիքօն անտառում փայտ կտրելիս սաստիկ վիրաւորել է իր ոտը... Սիմօնին իսկոյն ուղարկեցի սկզբնական օգնութեան համար, իսկ ես վազեցի այսեղ գեղերի համար:

S. Աշխարբէզեանց. (Ծփոթուած վեր է կենում:) Ա՛հ, խեղճ մարդ...

S. Արմաւեանց. Երեկի առանց հրամանի փայտ է կտրելիս եղել, Աստուածն էլ նրան պատժել է... Ախ, թէ ուրքան չարչարանք են պատճառում այդ տգէտ գիւղացիները իմ խեղճ Գարեգինին:

S. Աշխարբէզեանց. Ոչ, Լիզա, պարոն Ազշակը ամեն ժամանակ հոգում է թէ հրամանի և թէ նրանց միւս գործերի համար... Ա՛խ, խեղճ մարդ...

S. Արմաւեանց. Ոչ, մեծ բան է եղել որ վիրաւորել է... Արժէ միթէ դրա համար մորմօքուիլ...

S. Աշխարբէզեանց. Լիզա... դու չես իմանում... բազմամարդ ընտանիքի տէր է. նա է միակ նրանց սպրուստ տւողը:

Իզբաշեանց. Ամեն մարդ ընդունակ չէ իմանա-

լու գիւղացու ցաւն ու դարդը . . . Շտապեցէք, տիւկին . . .

S. Աշխարբէզեանց. Իսկոյն . . . տանըցիք իմացան . . .

Իւզբաչեանց. Հիմա իմացած կը լինին:

S. Աշխարբէզեանց. Գնանք, Լիզա, գիւղ, միթթարենք խեղճերին:

S. Արմաւեանց. Կը դնամ . . . միայն ուրիշ դործի համար:

S. Աշխարբէզեանց. Ինչպէս կ'ուզես . . . (զնալով:) Պարոն Արշակ, մի փոքր սպասեցէք, իսկոյն կ'ուղարկեմ: (Դնում է սանդուիներով դէպի տուն:)

### ՏԵՍԱՐԱՆ 5.

S. Արմաւեանց, Իւզբաչեանց:

S. Արմաւեանց. Գիւղացին ծանր է վիրաւորուած: Իւզբաչեանց. Ծատ է հետաքրքրում ձեզ:

S. Արմաւեանց. Ինչպէս չէ . . . Վերջապէս ինչ էք քիթներդ կախել . . . Անքաղաքավարութիւն է ձեր կողմից: Զեղ բան եմ հարցնում, շնորհով պատասխանեցէք . . .

Իւզբաչեանց. Զեր ներկայութեամբ արդէն տիկնողը եղելութիւնը պատճեցի:

S. Արմաւեանց: Ուրեմն իմացէք՝ ինչ որ տիկնող է վերաբերում, ինձ շատ է հետաքրքրում, այդ պատճառով էլ հարցը:

Իւզբաչեանց. Զի երեսմ:

S. Արմաւեանց. Մի ուրիշ բան ևս հետաքրքրում է ինձ . . . Ասացէք, ինդրեմ, Դաւթեանցը նրան յաճախ է այցելում:

Իւզբաչեանց. Հարցրէք դռնապանից:

S. Արմաւեանց. Միայն դռնապանից . . . Բայց, գիտէք որ կայ մէկը, որ հսկում է նրա ամեն քայլին . . . Դուք չէք իմանում թէ ով էր այն մարդը, որ երեկոյեան դարանամուտ էր եղած այս պարտէղի դռան մօտ:

Իւզբաչեանց. Հարցրէք նրա թիկնապահից:

S. Արմաւեանց. Այսինքն ձեզանից . . .

Իւզբաչեանց. Ես նրա թիկնապահը չեմ:

S. Արմաւեանց. Ո՛չ, գիտեմ . . . դուք ձգտում էք աւելի բարձր պաշտօնի . . . Հա, հա, հա . . . Հազիւ թէ ձեզ այդ յաջողի . . .

Իւզբաչեանց. Երեխ ձեզ է ընտրել միջնորդ . . .

S. Արմաւեանց. Այդ ձեր գործը չէ . . . դարանամուտ . . . Փի . . . ինչպէս շփոթուել է այն պատուական մարդը . . .

Իւզբաչեանց. Շփոթուել է . . . Հա, հա, հա . . . Դող՝ սիրտը դող . . .

S. Արմաւեանց. Ներեցէք . . . դողունի չէր նրա արածը . . . Նրանք թեանցուկ ճեմելիս են եղել պարտէղի մէջ, հասել են այն դռանը և որպէս զի շուտ հասնի տուն, Դաւթեանցը դուրս է եկել այդ դռնից:

Իւզբաչեանց. (Ինչն իրան: ) Թեանցուկ . . .

S. Արմաւեանց. Այս, թեանցուկ . . . Միասին փունջ են եղել կազմելիս այս հովանոցում . . . Երկար ժամանակ զբուցելով՝ աննկատելի կերպով մութն ընկել է:

Իւզբաշեանց. (մի կողմ:) Այդպէս էլ կարծում:  
Տ. Արմաւեանց. (շարունակելով:) Եւ այդպատշառով ընտրել է կարճ ճանապարհ:

Իւզբաշեանց. Կարճ ճանապարհ...

Տ. Արմաւեանց. Տեսնում էք հիմա, որ կարճ ճանապարհը գիւղին է հասցնում մարդուս իր նպատակին.... Այն որ զօրապետն է եղել որ ասել է՝ եկայ, տեսայ, յաղթեցի: Դուք, պարոն, կիմանաք գոնէ պատճութիւնից:

Իւզբաշեանց. (զրգուած:) Դուք, տիկին, այն էլ կիմանաք որ կարճ ճանապարհը խորդութորդ է... դժուար չէ մարդու համար սայլմաքուել:

Տ. Արմաւեանց. Բայց նա անցաւ անվտանգ:

Իւզբաշեանց. Հաւատացնում եմ, տիկին, որ վտանգաւոր է... կուժը միշտ ջուր չի բերիլ:

Տ. Արմաւեանց. Հիմի այլ ևս ուշ է... կուժը գլուխեց՝ գտաւ իր խուփը...

Իւզբաշեանց. Մինչեւ գտնելը քարին կը գիտչի, կը կոտրուի:

Տ. Արմաւեանց. Հանգիստ եղէք, պարոն Արշակ, նա այն խեցատը չէ որ կոտրուի... կոտրուող կժեր որսնեցէք ձեր գիւղի բրուտի մօտ...

Իւզբաշեանց. (յուզուած:) Այն էլ հասկացէք, տիկին, որ ապագան պատկանում է գիւղին.... նա պարունակում է իր մէջ կենարար ոյժ, որ պէտք է սթափեցնէ ձեր քաղաքացիների բքեալ սիրտն ու թըմրած ուղեղը... Գիւղացին իր հուժկու բազուկների շնորհիւ և իր քրտնաշան աշխատանքով նեցուկ է ձեր քայլայած ու զեխ կեանքի համար... Դուք, տիկին,

այժմ ծաղրում էք գիւղացուն, նրա շէնքս ու կազմը, բայց հաւատացէք որ նա յաղթանակով գուրս կը տանի իր գլուխը և իր բազուկներով կը հեռացնէ ճանապարհից ամեն խոչընդոտն... Գլխովս եմ երդգում, որ այդպէս է: (Մտնում է ծառան փաթեթը ծեռին. Իւզբաշեանցը շտապով դիմում է դէպի նրան եւ խլում նրա ծեռքից փաթեթը:) Տնւր ինձ... Ահա, տիկին... դուք այստեղ երազեցէք երջանիկ օրեր, իսկ ես կերթամ օգնելու հայրենակցիս: (Շտապով հեռանում է պարտէզի խորքը: ծառան ծաղկամաններ տանում է դէպի ներս:)

### ՏԵՍԱՐԱՆ 6.

Տ. Արմաւեանց.—մէնակ:

Տրեխաւոր գիւղացի... ինչ վստահ էլ խօսում է... Մի փոքր այլուբենի հոտ է առել և յանդգնում է մեծ-մեծ խօսել... Անտաշ գիւղացու գլուխը ինչ տեսակ յօյսեր կարող է արծարծել: Բայց հարկաւոր է մի-մի անդամ սրա գլխին սառը ջուր ածել, որ իր չափը ճանաչէ... Այդքան էլ երես տալ կը լինի՞ սըրան... Բոլորը, բոլորը կատեայի մեզն է... Բայց նա իր հալը կը տեսնէ. Սամսոնը գրել է կատեայի հօրեղբորը ամեն բան և նա խոստացել է գալ... նա մի-այն կարող է տեսնել այս ամբարտաւան գիւղացու գատաստանը... Ո՞հ, որքան փոխուել է աշխարհը: (Գնում է դէպի սանդուխը. այս ժամանակ ներսի դու-

որ աղմուկով բացվում է. ոռան շեմքում երեւում է  
Զարեանցը:)

ՏԵՍԱՐԱՆ 7.

Տ. Արմաւեանց, Զարեանց:

Զարեանց. (սանդուխի գլխից:) Գնացել է... Այս  
ինչ նոր կարգեր է հնարել եմ եղբօր աղջիկը.. Մե-  
լիքին ոչ ոք չէ դիմաւորում:

Տ. Արմաւեանց. (խորը գլուխ տալսվ:) Բարե էք  
եկել, մելիք..

Զարեանց. (նրան նկատելով, իջնում է:) Հա..  
դուք էլ այստեղ էք մէնակ, .. Երևակայեցէք, գիւղ  
է գնացել... Մէկ չի մտածում թէ մարդ կարող է  
գալ հիւր... Ահա, դուք էլ եկել էք և նրան չէք  
տեսնում... .

Տ. Արմաւեանց. Հա, հա, մելիք... գնացել է...  
մարդ մէկ հարցնէ թէ ինչ հտրկաւորութիւն կար գլ-  
նալ գիւղ, այն էլ մի ինչ որ վիրաւորածին օգնելու  
համար:

Զարեանց. Գիտեմ, գիտեմ... բոլորը գիտեմ...  
բոլորը այն լակոտի բան է:

Տ. Արմաւեանց. Ո՞ւփ, լակոտ ասացիք ու պըր-  
ծաք... գլուխներս գանդ առաւ.. նա է հիմի դա-  
ռել գիւղի մելիքը. ինչպէս կուզէ, այնպէս է խաղաց-  
նում գիւղացիներին...

Զարեանց. Նրան սկզօղ ստրօյ պէտք է դցել...

Տ. Արմաւեանց. Հա, հա, մելիք. ես ձեզանից

պակաս չեմ տանջվում. մեր խելօք, պատուասէր կա-  
տեան ընկել է այդ ուշազարի ազդեցութեան տակ.  
նրան էլ է խաղացնում, ինչպէս կուզէ.. Քանի քանի  
անդամ զգուշացրել եմ նրան, ինդընել եմ ձեռք քա-  
շել նրանից, չէ լսում:

Զարեանց. Զէ լսում... ես կը բղաւեմ նրա ա-  
կանջին որ լսէ:

Տ. Արմաւեանց. Այսօր հէնց այդ մտքով էի եկել  
այստեղ. աւանում արդէն բացարձակ խօսում են թէ  
կատեան ուզում է նրան...

Զարեանց. Խօսում են..

Տ. Արմաւեանց. Եկել էի, որ աշխատեմ հանել  
նրա գլխից այդ տղայի անունը և մի ուրիշի համար  
գրաւեմ նրա սիրտը:

Զարեանց. Ո՞վ է այդ ուրիշը...

Տ. Արմաւեանց. Ահ, մելիք, չէք իմացել... Մեզ  
մօտ անտառի գործով եկած է այստեղ Գարեգինիս  
ընկերը... մի շատ խոհեմ, մեծ աստիճանի հասած  
պաշտօնեայ որ եկած օրից յափշտակուեց կատեային  
տեսնելով. նա միշտ այն է կրկնում թէ երջանիկ մարդ-  
կը լինի նա, ով որ կը կապէ իր կեանքը նրա հետ:  
Այնքան, այնքան հրապուրուած է, մելիք, որ ասելը  
դժուարանում եմ...

Զարեանց. Ո՞վ է դա, ինչ ազգից է:

Տ. Արմաւեանց. Լեռն Դաւթեանց... Գարեգի-  
նիս ընկեր է, միասին են աւարտել ճեմարանը...  
բայց իր լրջութեամբ ու խոհեմութեամբ ահա հիմի  
հասել է բարձր պաշտօնի:

Զարեանց. Դաւթեանց... հէնց գիտենաս լսել

Եմ դրա մասին. այդ ազգանունով մէկին լաւ ճանաշում էի . . . Դաւթեանց . . . Ստեփան Դաւթեանցի մըդին խոռ չէ:

Տ. Արմաւեանց. Հա, հա, մելիք, հէնց նա է . . .

Զարեանց. Ես նրա հօրը ճանաշում էի . . . նա միշտ բարի ու աղնիւ մարդ էր. լաւ պաշտօնի մէջ էր, բայց մեռաւ աղքատութեան մէջ:

Տ. Արմաւեանց. Է՞ս, մելիք, հօր, աղնուութիւնը ժառանգել է դա . . . բայց ի՞նչ մեծ ոռնիկ է ստանում, փառք ու պատուի մէջ է. նրա մէկ խօսքը հերիք է, որ Գարեգինիս տեղափոխեն մի այլ, աւելի բարձր տեղ . . . Ուղիղ ասեմ ձեզ, մելիք, ձեզանից շեմ ուղում թագցնել, որ եթէ քոյրս Սամսոնքդից դրաւուած չինի և տարիքով մեծ լինի, ես ինձ բաղդաւոր կը համարէի նրան ինձ փեսայ դարձնելու . . .

Զարեանց, Բայց ի՞նչ է ասում Կատեան:

Տ. Արմաւեանց. Է՞ս, մելիք, մի փոքր առաջ էլ ձեզ ասացի, որ այն ուշպարի ազգեցութիւնը այնքան զօրեղ է որ ոչինչ չէ ուղում լսել . . . Թողլ ինձ ասում է, որ ես իմ սրտի ընտրածը ուղեմ . . . Սրտի ընտրածն էլ այդ տրեխաւոր գիւղացին է:

Զարեանց. Մկօղ ստրօյ նրա սրտի ուղածին . . . Ես նրան այստեղից աքսորել կը տամ . . . ինչպէս է համարձակվում մելիքենց հարսի վրա աչքը բռնել . . .

Տ. Արմաւեանց. Ո՞ս, թէ մի այդպիսի բան պատահի, իսպառ խայտառակութիւն կը լինի հինաւուրց օջախի համար:

Զարեանց. Անպատճառ աքսորել կը տամ . . . Ա՞յ, դու գեադմ . . .

Տ. Արմաւեանց. Այս, միակ ելքը այդ կը լինի. այն ժամանակ Կատեային էլ համոզել հարկաւոր չի լինիլ: Ուզէ, չուզէ Դաւթեանցին կը խոստանայ իր ձեռքը . . . Մնաք բարով, մելիք:

Զարեանց. Գնում էք . . . Կատեային չէք սպասում . . .

Տ. Արմաւեանց. Ճաշին կը դամ . . . Հիմա կուղեմ դիւղ գնալ . . . մեր տարաբաղդ աւանում ոչինչ չի ճարգում. ամեն բան կը դին ունի: (Խորը զըլուկս տալով զնում է: ) Ապա տեսնենք, արեխաւոր գիւղացի թէ այս առիւծի ճանգից մնց ես դուրս պրծնում . . . (դուրս է զնում սանդուխներով: )

### ՏԵՍԱՐԱՆ 8.

Զարեանց մէնակ. յետոյ Սիմօն:

Ստիպել, ոչ թէ համոզել: . . . Ես մէկ զինւոր մարդ եմ, երկար-բարակ խօսել շեմ սիրում . . . Մէկ, երկու, վերջացաւ՝ ուզել Դաւթեանցին և բաստա . . . Դաւթեանց . . . Հա, շատ լաւ էի ճանաշում նրա հօրը . . . Հիմի միայն միսս չէ թէ որտեղ եմ տեսել նրան. բաւական է որ նրա որդին այդ բարձր աստիճանի է հասել . . . (Տեսնելով Սիմօնին, որ մտնում կ պարտէզի խորրից:) Ա՞ս . . . գեադա . . . Ես քեզ ցոյց կը տամ . . . Ակօղ ստրօյ կանցկացնեմ քեզ . . . Այս ի՞նչ տեսակ կարդեր ես հնարել . . . Ես, մելիքս, դալիս եմ, ոչ ոք ինձ գիմաւորող չկայ . . . Մերացել ես, խելքդ կորցրել ես . . .

Սիմօն. (Պատկառանքով ծեռքը համբուրելով.)  
Բարով էք եկել, մելիք : .

Զարեանց. Ո՞ւր էիր, ո՞րտեղ է կատեան :

Սիմօն. Մելիքը ապրած կենայ, դիւղն էինք դը-  
նացել . . .

Զարեանց. (Ժաղթելով:) Գիւղն էինք դնացել . . .  
Մելիքը ձեզ մօտ հիւր է գալիս, դուք դնում էք  
դիւղ . . . մի ինչ որ ռաջպարի հետ սազ ու բազ էք  
սարքում . . . Սկզօղ ստրօյ քեզ, քաւթառ : Մելիքենց  
հարսին, մելիքենց աղջկան քեզ պահ ենք տախիս, քեզ,  
օջախի հին գեադային, որ աճքդ վրէն ունենաս, իսկ  
նա ինչ որ դիւղացի տղայի աղջեցութեան տակն է  
ընկել . . . Ո՞վ է այն տղան, ո՞ր աղդիցն է . . .

Սիմօն. (Շփոթուած:) Ո՞ր տղան . . .

Զարեանց. (Ժաղթելով:) Ո՞ր տղան . . . քաւթառ  
աղուէս, իբր թէ չես իմանում : Ում հետ հէնց հիմի  
դնացիք դիւղ վիրաւորածին օգնելու համար . . .

Սիմօն. Իւզբաշի Պետի տղան էր, մելիքը ապրած  
կենայ :

Զարեանց. Ի՞նչ գործ ունի նա Մելիքենց դար-  
բասում . . . ինչու նրա ոտը այս տանից կտրել չտուիր . . .  
Ա՞հ, դու քաւթառ, դու էլ ես միացել նրա հետ և  
իմ խեղճ երեխիս խելքահան արել . . .

Սիմօն. Մելիքը ապրած կենայ . . . ես գործից խա-  
բար չեմ, թէ ինչ էք հրամայում . . .

Զարեանց. Ա՞յ, դու քաւթառ աղուէս . . . խա-  
բար չեմ . . . հապա, մէկ քեզ ու քեզ հարց չտուիր թէ  
ի՞նչու համար է այդ գեղի լակոտը այստեղ շուտ շուտ  
դալիս : Դու կարծում էիր թէ ինձանից թագ կը կե-

նայ, ես ոչինչ չեմ իմանայ . . .

Սիմօն. Նա գալիս էր խանումի հրաւերով. Խա-  
նումը գործից խորհուրդ էր հարցնում :

Զարեանց. Ապա, մենք մեռանք, մենք ոչինչ, որ  
նրանից խորհուրդ էր հարցնում . . . Այս օրուանից  
քեզ այստեղից կը վանտեմ, քաւթառ անասուն : . (Զա-  
րացած ման է զայիս, նարձրածայն աղաղակելով:)  
Դուրս, դուրս, կորիր աչքիցս . . .

### ՏԵՍԱՐԱՆ 8.

Տ. Աշխարբէզեանց, Զարեանց, Սիմօն.

Տ. Աշխարբէզեանց. (Երեւում է սանդուխների  
գլխին:) Հօրեղբայր . . . (Շտապով իջնում է նու ընկ-  
նում Զարեանցի զիրկը .) Ո՞հ, որքան ուրախ եմ . . .

Զարեանց. (Ծննդյան) Կատեա, սիրելիս, տներ ինձ  
մէկ լաւ համբուրեմ քեզ : (Համբուրում է ծակատից :)

Տ. Աշխարբէզեանց. Դուք եկել էք և ինձ ոչինչ  
չեն ասում . . . Սիմօն, ինչու վազ չտուիր ինձ իմաց  
տալու . . . Հօրեղբայրս, քանի ամիս է ձեզ չեմ տեսել . . .

Զարեանց. Անիծեալ պատագրէս ինձ տանջում  
է . . . տասը ամիս է, հա, տասը ամիս է քեզ չեմ տե-  
սել . . . իմացայ որ եկել էիր ինձ տեսնելու . . . բայց ես  
դիւղ էի դնացել . . . Ապա, ապա մէկ լաւ քեզ նայեմ . . .  
Ախ, Կատեա, հէնց դիւղենաս լղարել ես . . . հա, էնչ  
է, ուղիղ է . . .

Տ. Աշխարբէզեանց. Ոչ, հօրեղբայր, ձեզ այդպէս  
է երեսում . . .

Զարեանց. Ոչ, իմ ծերացած աչքերս մի ինչ որ  
անբնական բան նշմարում ենքո մէջ . . . Այս, հատեա,  
կատեա, հօրեղբօրիցդ ծածկում ես . . . Անպատճառ,  
անպատճառ մի որ և իցէ միտք քեզ շատ է նեղաց-  
նում . . .

Տ. Աշխարքեգեանց. Ոչ, հօրեղբայր, հաւատաց-  
նում եմ . . . Մի փոքր յոգնել եմ . . . գիւղ էի գնա-  
ցել . . . մէկ խեղճ գիւղացի կացնով իր ոտը վիրաւո-  
րել էր . . . գնացի նրան օգնութեան . . .

Զարեանց. Գիւղացի, հըմ, գիւղացի, գնացիր  
օգնելու . . . գու, ինչ է, հաքիմ ես, թէ գթութեան  
քոյր . . . վիրաւորել է . . . ջնանդամը նրանց գլուխը թէ  
վիրաւորել է. քեզ ինչ փոյթ . . . Տես, յոգնել ես . . .  
չարժէ այդ գեադաների համար մորմոքուելը . . . նրանք  
լաւութիւն չեն հասկանում:

Տ. Աշխարքեգեանց. Ոչ, հօրեղբայր, նրանք ան-  
բաղդ են . . . նրանց համար հոգա տանող չկայ . . .

Զարեանց. Աւելորդ է քո մասնակցութիւնը . . .  
նրանք իրանք իրանց գլսին առանց քեզ էլ ճար ու  
դարման կանեն . . . Այդ թողնենք . . . ես քեզ հետ  
շատ բան ունիմ խօսելու . . .

Տ. Աշխարքեգեանց. Ես էլ ունիմ, հօրեղբայր . . .  
բայց դուք ճանապարհից յոգնած կը լինիք . . . գնանք,  
մի փոքր հանդստացէք, մինչև որ ճաշն էլ պատրաստ  
կը լինի . . .

Զարեանց. Այդ շատ լաւ բան ասիր . . . Դէն  
գնանք . . . է՞ս, քաւթառ, գնա, պատրաստիր ջուր  
լուացուելու համար:

Սիմօն. Իսկոյն, մելիքը ապրած կենայ: (Առաջ է

զնում եւ դուրս է զնում սանդուխտի դոնից:)

Զարեանց. Ես այդ քաւթառ աղուէսին մի լաւ  
շպրեցի . . .

Տ. Աշխարքեգեանց. Ինչո՞ւ համար, հօրեղբայր . . .

Զարեանց. Ինչո՞ւ համար . . . Հըմ . . . որովհետեւ  
ծերացել է, քոռացել է և շատ բան ինչ որ պատա-  
հում է այստեղ չի տեսնում . . . (Տ. Աշխարքեգեան-  
ցին ծախ ծեռքով զըկած առաջ է զնում:) Ինձ իմաց  
չէ տալիս թէ այստեղ եկել է մի հազուագիւտ հիւր,  
լաւ բարեկամիս որդին, որի համբաւը հասել է ամեն  
ուրեք . . .

Տ. Աշխարքեգեանց. Հօրեղբայր, դուք ասում էք  
իւղբաշեանցի մասին. իրաւ է, շատ հազուագիւտ ե-  
րիտասարդ է . . .

Զարեանց. Ի՞նչ . . . իւղբաշի Պետի տղան . . . նա ինչ  
գեադա է, որ նրա մասին խօսեմ . . . Ոչ, սիրելի զա-  
ւակս, ես սովորութիւն ունիմ խօսել ինձ լայեղ մարդ-  
կերանց մասին . . . Ես ասում եմ Պաւթեանցի, Պաւ-  
թեանցի մասին . . . (Դուրս են զնում սանդուխտի դոնից:)

## ՏԵՍԱՐԱՆ 10.

Պաւթեանց, պ. Արմաւեանց, Օգնական:

(Երեւում են վանդակապատ դուան մօտ եւ խօ-  
սակցելով մտնում են ներս:)

Պաւթեանց. Իզուր էք այդքան չարչարուել:

Պ. Արմաւեանց. Տեղը որոշուած է կապալի հա-  
մար և կարող է լաւ արդիւնք տալ:

Դաւթեանց. Բայց և այնպէս չի կարելի դրկել ժողովրդին նրա միակ ապրուստից: (Օգնականին) Դուք ասում եք որ նրանց միակ ապրուստը տաւարից է: Օգնական. Այս:

Դաւթեանց. Ուրեմն շատ հիմնաւոր է նրանց պահանջը... Վազը նշանակել եմ ժողով գաւառապետի նախագահութեամբ. թող ժողովուրդն իր ներկայացուցիների բերանով փաստաւոր հիմունքներ բերէ եր ուղածի մասին:

Պ. Արմաւեանց. Նրանց ուղածը մեզ լաւ յայտնի է:

Դաւթեանց. Այնու ամենայնիւ պէտք է ձեւակերպել պաշտօնապէս... կը կազմենք օրագիր և այնուհետեւ կը գործենք օրինական ճանապարհով:

Պ. Արմաւեանց. Ես գարձեալ պնդում եմ որ իմ որոշած կտորը բոլորովին բաւարար է նրանց համար:

Դաւթեանց. Շատ գովելի է ձեր եռանդը արքունական կալուածների վերաբերմամբ, բայց և այնպէս հարկաւո՞չ պնդել ձեր ասածի վրա: Այսօր պ. Օդնականի հետ մանրամասնօրէն քննեցի ձեր որոշած կտորը: Տեղը թէ նեղ է և թէ մեծ մասամբ ծածկուած ճահճով: Այնպէս չէ, պ. Օգնական:

Օգնական. Ճիշտ է:

Դաւթեանց. Ուրեմն և անպէտք նպատակի համար:

Օգնական. Բոլորովին անպէտք...

Դաւթեանց. Դէ՞հ, ուրեմն էլ հարկաւոր չէ երկարաբանել... կազմենք զեկուցագիր... Սակայն, ինդրեմ, պարոններ, այս մեր խօսակցութիւնը թող

մնայ մեր մէջ: Հաւանական է որ կենարոնական վարչութիւնը համոզուի մեր առաջարկի մէջ, բայց և այնպէս մինչև որ վերջնական վճիռ չստանանք, հարկաւոր է գաղտնապահ լինել, որպէս զի ժողովուրդը զուրյոյսեր չտածի և նրան աւելորդ դրդիու չպատճառենք:

Պ. Արմաւեանց. Ուրեմն կարծում եք որ վարչութիւնը կարող է մերժել:

Դաւթեանց. Ո՞վ է իմանում... Ասենք թէ մերժեց. ինչու համար զուրյոյսերով կերակրենք ժողովրդին... Ժողովուրդի հետ գործ ունենալու ժամանակ հարկաւոր է շատ զգոյշ լինել... Ի դեպ, գրել եք գաւառապետին որ վազը ներկայ լինի:

Օգնական. Այս, գրել եմ:

Դաւթեանց. Շատ լաւ... Ուրեմն... հա, մոռացայ... ինդրեմ ուղարկեցէք ինձ վեճի վերաբերեալ գործը:

Օգնական. Իսկոյն կուղարկեմ... Էլ ուրիշ գործ չունիք:

Դաւթեանց. Կարծեմ ոչ... ցտեսութիւն: (Մեկնում է ծեղքը Օգնականին, որ դուրս է գնում:)

Պ. Արմաւեանց. Ես էլ կ'երթամ:

Դաւթեանց. Դուք մւր եք գնում. չէք ճաշում մեզ հետ:

Պ. Արմաւեանց. Չգիտեմ, ինչպէս կ'ուղէ տիկինս: Դաւթեանց. Նա մւր է այժմ:

Պ. Արմաւեանց. Անպատճառ գիւղում շրջելիս կը լինի... նա օրինակելի տանտիկին է: Հէնց որ գալիս է գիւղ, հաւաքում է ամեն տեսակ պաշարեղէն—ձու, հաւճիւ... կատարեալ առօրեայ պրօղա... հակա-

ռակ նախշուն թիթեռնիկի պօէզիայի . . .

Դաւթեանց. Հա, հա, հա . . . նախշուն թիթեռնիկ . . . շատ լաւ անուն էք դրել . . . ի դէպ, ասացէք, ինդրեմ, թիթեռնիկդ չէ դտել այստեղ իր համար ծաղիկ . . .

Պ. Արմաւեանց. Ո՛չ, ո՛չ . . . մեր ճահճուտ անտառի ծաղիկները անուշ հիւթ չեն պարունակում . . .

Դաւթեանց. Սակայն այն երիտասարդ իւզբաշեանցը . . .

Պ. Արմաւեանց. Ո՛չ, միամիտ եղէք . . . նա միայն տիկնոջ գործակից ու գաղափարակից մի անձնաւորութիւն է, գիւղից գուրս եկած տղայ է, թէև ստացել է փոքրիկ կրթութիւն:

Դաւթեանց. Իրամւ . . .

Պ. Արմաւեանց. Հուատացնում եմ . . . Ես կ'երթամ տիկնոջս պտրտելու: Ցտեսութիւն: (Դուքս է զնում:)

### ՏԵՍԱՐԱՆ 11.

Դաւթեանց—մէնակ. յետոյ Խլզբաշեանց:

Դործակից . . . գաղափարակից . . . Շատ հետաքրքիր է . . . Սակայն այդ երիտասարդի յարաբերութիւնը տիկին Սշխարբէգեանցի հետ շատ է աչքի ընկնում . . . Որչափ կոպիտ է նա ինձ հետ, այնչափ քնքանում է տիկնոջ ներկայութեամբ . . . Սիրում է այդ պատանին, թէ յարգում է իր համախոհ տիկնոջ . . . Դժուար լուծելու հարց է, թէև աւանում տարածուած-

է նրանց մասին ամեն տեսակ բամբասանքներ . . . Տիկինը շատ դուրական անձնաւորութիւն է . . . ոհ, եթէ ինձ ախոյեան պէտք է հանդիսանայ մի այդ տեսակ կենսառատ երիտասարդը . . . այն ժամանակ պէտք է յոյսներս կարենք . . . Միթէ գիւղում չկայ աղջիկ, իր նման ժիր, աշխատասէր որ դրաւէր նրա սիրալ. միթէ մի այդպիսին աւելի երջանիկ չէր անի նրա կեանքը, քան տիկին Սշխարբէգեանը . . . բայց . . . (Պարտէզի խորքից երեւում է հողբաշեանցը, որ տեսնելով Դաւթեանցին թագ է կենում ծառի ետեւից:) Ահա նա . . . նորից հսկում է ինձ . . . թագ կացաւ . . . Ոչ, պէտք է արգելել դրան այդ տեսակ արարմունքը: (Իզր թէ զբաննելով, մօտենում է ծառին:) Ահ, պարմն իւզբաշեանց, դուք այստեղ էք եղել . . .

Խլզբաշեանց. (Առաջ զալով:) Ի՞նչ էք կամենում: Դաւթեանց. Ինձ թվում է որ խորշում էք ինձանից: Խլզբաշեանց. Զեղանից խորշելու պատճառ չունիմ . . . մենք համարեա թէ ծանօթ էլ չենք . . . Վերջապէս մեր մէջ չկայ ոչինչ առնչութիւն:

Դաւթեանց. (Ժպտալով:) Գուցէ կայ . . .

Խլզբաշեանց. Ոչինչ, ոչինչ չի կարող լինել . . . Դուք մի ժամանակաւոր այցելու էք այստեղ, որ վաղը թէ միւս օրը թողնելու էք մեր երկիրը և գնալու ձեր գործին: Իսկ ես շատ տեսակ նուիրական կապերով կապուած եմ գիւղիս հետ:

Դաւթեանց. Հէնց ձեր այդ յարաբերութիւնը գիւղի և նրա բնակիչների հետ ինձ շատ սիրելի է և հետաքրքիր:

Խլզբաշեանց. Միթէ . . . կասկածում եմ . . .

Դաւթեանց. Հաւատացէք . . . Այդ մի հազուագիւտ երեսյթ է մեր մէջ, որ մի ուսում առած պատանի, որին կարող էր վիճակուել լաւ ապագայ, նուիրելէ իր բոլոր մտաւոր և բարոյական ոյժերն իր հայրենակիցներին: Կրկնում եմ, շատ հազուագիւտ երեսյթ է:

Իւզբաւեանց. Ի՞նչն է արդելում ձեզ նոյնը անել, փոխանակ չափչելու այս խաւար երկիրը:

Դաւթեանց. Որովհետեւ ես ծնուել եմ քաղաքում: Բայց եթէ գէպք պատահի, մի բողէ էլ չէի մնալ քաղաքում . . . Գիտէք, եթէ ես իրաւունք ունենայի, կը քչէի քաղաքներից այն ուսում առած երիտասարդներին, որոնք գիւղից են գուրս եկած և որոնք բաղդորոնելու համար գատարկ ու սին յօյսերով թափառում են քաղաքից քաղաք գործ ճարելու համար: Քաղաքներում առանց նրանց էլ շատ կան գործողներ . . . ինչ պէս տեսնում եմ գիւղում շատ բան կայ անելու . . . Թողարկութիւն գործեն, բարձրացնեն իրանց հայրենակիցների մտաւոր հսրիզոնը և լաւացնեն նրանց տնտեսական գործիւնը . . . Այս պատճառով սիրելի է ինձ տեսնել ձեզ այստեղ գործի մէջ . . . Սիրում էք ձեր հայրենիքը, այսպէս չէ . . .

Իւզբաւեանց. Այս, սիրում եմ . . . սիրում եմ այս հաստաբուն ծառը (ձեռքով խիփում է մօտակայ ծառի ընին), որ մատակարարում է ինձ կեանք ու ապրուստ և որը չեմ փոխիլ ոչ մի երջանկութեան հետ:

Դաւթեանց. Սիրում էք և նրանց, որոնք սիրահար են այդ տեսակ կեանքին:

Իւզբաւեանց. (Շփոթուած). Ի՞նչ էք ուզում ասել?

Դաւթեանց. Ներեցէք, ձեր յարաբերութեան մէջ ինձ հետ ես նկատում եմ մի տեսակ անխոհեմութիւն: Այս բանը ինձ կասկածելի է թվում . . . Զէ որ ես էլ սիրահար եմ այդ կեանքին . . . մենք երկուսս էլ ուսումնասիրել ենք գիտութեան մի և նոյն ճիւղը թէկ տարեր շրջաններում: Ի՞նչու էք վերաբերվում ինձ այդչափ սառն ու կասկածու . . .

Իւզբաւեանց. Կրկնում եմ՝ մեր ուղիները տարբեր են, մեր նպատակները հակառակ են . . . դուք եկել էք այստեղ խանդարելու մեր անդորրութիւնը, մեր խաղաղ կեանքը:

Դաւթեանց. Սխալվում էք . . . եթէ ակնարկում էք անտառի վէճի հարցը, այն ժամանակ կ'ասեմ ձեզ որ ընդհակառակն՝ եկել եմ կանոնաւորելու ձեր և կառավարութեան յարաբերութիւնը . . . Բայց, ինձ թվում է որ ձեր սառը վերաբերմունքը ինձ հետ դրանից չէ առաջացած, այլ մի ուրիշ պատճառից:

Իւզբաւեանց. (Շփոթուած—արագ). Ոչինչ պատճառ չի կարող լինել . . .

Դաւթեանց. Տեսնենք . . . Հեռու չէ այն րոպէն, երբ ամեն բան կը պարզուի:

Իւզբաւեանց. Դուք մեծ կարծիք ունիք . . . ձեր յանձնարարութեան վրա մեծ յօյսեր էք տածում. կամենում էք դրանով առաջ տանել նրանից դուրս և ամեն բան: Միամիտ եղէք, կան արթուն աչքեր որ հսկում են ամեն բանի վրա:

Դաւթեանց. Ես այդ փորձով գիտեմ:

Իւզբաւեանց. (Խիստ եւ զարծը). Դուք իրաւունք չունիք կասկածելու ինձ վրա . . . չափազանցում էք

եղելութիւնը և այս մասին խայտառակ կերպով տարածում էք ամեն կողմը... Զեղ, պարոն, այդ բանը արժան չի նստիլ... Ժամանակով դուք կ'իմանաք թէ նում հետ ունիք դործ... Իսկ առ այժմ ցտեսութիւն... (Զայրացած զնում է պարտէզի խորըը):

Դաւթեանց. (Նրա ետեւից նայելով). Մէրը կուրացրել է սրան... բայց միթէ չքնաղ տիկինը հրապուրուած է նոյնպէս սրանից:

### ՏԵՍԱՐԱՆ 12.

Տ. Աշխարբէգեանց. Դաւթեանց:

Տ. Աշխարբէգեանց. (Իջնելով սանդուխներից). Ա՛ն, պ. Դաւթեանց, դուք էք եղել այստեղ և մենակ... Հապա այն ում հետ էիք այնքան բարձր խօսում:

Դաւթեանց. (Համբուրելով ձեռքը) Ճշմարիտ է, մենակ չեի... ինձ հետ էր իւզբաշեանցը:

Տ. Աշխարբէգեանց. Իւզբաշեանցը...

Դաւթեանց, Այն, նա... էլի նոյն վատ տրամադրութեան մէջ:

Տ. Աշխարբէգեանց. Մի գատապարտէք նրան... Հաւատացէք որ նրա կոպիտ արտաքինի տակ աղնիւ զգացմունքներ կան:

Դաւթեանց. Գիտեմ, գիտեմ, տիկին... Լսեցի այսօրուայ նրա քաջադործութիւնը... Իրաւ, սիրելի է տեսնել մի ուսում առած պատանի, որ նուիրուած

է իր հայրենակիցների շահերին: Ո՛հ, մրգան նախանձում եմ դրան:

Տ. Աշխարբէգեանց. Այնպէս չէ... ես ինքս յարգում եմ նրան՝ այդ յատկութիւնների համար... Գնանք, նստենք հովանոցի տակ մինչեւ որ մեզ կը հրաւիրեն ճաշի...

Դաւթեանց. (Իր թեւը տալով). Գնանք, նստենք ձեր երջանիկ խոհերի վայրում: (Նստում են): Դուք երէկ, սիրելի տիկին, սկսեցիք մի հետաքրքիր պատմութիւն, որ տարաբաղդաբար չկարողացաք վերջացնել:

Տ. Աշխարբէգեանց. Այն, չկարողացայ... Ա՛ն, ինչ անեմ... ես ի բնէ անվստահ եմ և չեմ համարձակում հաւատալ ամենքին անպայման:

Դաւթեանց. Սակայն խոստացաք լրացնել այսօր:

Տ. Աշխարբէգեանց. (Փոքր ժամանակ լրութիւնից յետոյ). Պ. Դաւթեանց, խնդրեմ չնախատել ինձ, եթէ միանդամից չկարողանամ պարզել այն, ինչ որ վաղուց հետէ զբաղեցնում է ինձ... Այսքան տարուայ մենակութիւնը, ինչպէս ասել եմ, զարձրել է ինձ անվստահ, կասկածու... Կեանքը եղել է ինձ համար մի շարք հալածանք... 17 տարեկան հասակում առունացրել են ինձ մի անծանօթ մարդու հետ:

Դաւթեանց. Անծանօթ...

Տ. Աշխարբէգեանց. Այն... մեր հայրերը խօսք էին տուել իրար մեզ ամուսնացնել և կատարեցին իրանց խոստամը՝ չհարցնելով մեր համաձայնութիւնը:

Դաւթեանց. նահապետական սովորութիւն, որ առաջացել է տղիտութիւնից:

Տ. Աշխարբէգեանց. Սակայն արժան չնստաւ ինձ

վրա այդ սովորութեւնը . . . Ամուսինս թէև բարի ու  
ազնիւ մարդ էր, բայց միշտ հիւանդ և վերին աստիւ-  
ճանի թոյլ կազմուածքի տէր: Դեռ չբոլորած մեր ա-  
մուսնութեան երկրորդ տարին, նա մեռաւ . . . մնացի  
նրա հօր—սկեսրայրիս հոգացողութեան տակ . . . նա  
անասելի չար մարդ էր . . .

Դաւթեանց, Ո՞հ, ես ճանաչում էի նրան . . .  
Մարդարաբէգը մի օտարօտի մարդ էր . . . Գիշերները  
մի աժդահայ թիկնապահի ուղեկցութեամբ պտտում  
էր անտառի մէջ և սարսափ էր ազդում ժողովուրդի  
վրա . . .

Տ. Ա. Ըստարբէգեանց. Այդ մարդը աւելի շուտ  
զգուանք պատճառեց ինձ, քան թէ հրապոյր . . . Մե-  
նակութիւնից ես դարձայ հետզհետէ անձնապաստան . . .  
մարդ չկար մօտս, որի առաջ բաց էի արել սիրտս,  
հոգիս . . . Սակայն նա էլ մեռաւ . . . այն ժամանակ  
մենակութիւնս կատարեալ եղաւ . . . Դուք տեսնում  
էք թէ նկրեր են ինձ շրջապատում . . . միթէ կարելի՞ է  
հաւատ ընծայել դրանց, բացուել դրանց առաջ . . .  
Դրանք աւելի ճոշող ու չարախօներ են, քան թէ  
մտերիմներ . . .

Դաւթեանց. Այն, ես այդ գիտեմ . . .

Տ. Ա. Ըստարբէգեանց. Զեր ականջին էլ է հասել . . .  
փառք Աստուծոյ . . .

Դաւթեանց. Ուշ միք դարձնիլ, տիկին . . .

Տ. Ա. Ըստարբէգեանց. Ո՞հ, ես ինձ շատ բարձր եմ՝  
համարում նրանց բամբասանքներից . . .

Դաւթեանց. Ուրեմն ուղիղ չէ . . .

Տ. Ա. Ըստարբէգեանց. Լսեցէք ինձ . . . Որքան եղաւ

ուրախութիւնս, երբ ես իմ այս կեանքիս շէմքում՝  
հանդիպեցի ձեզ . . . Ահա, ասացի ինձ ու ինձ՝ այն  
ուղղամիտ մարդը, որին կարող եմ վերաբերուել առ-  
մենայն վստահութեամբ . . .

Դաւթեանց. (Զգացուած). Հաւատացէք, տիկին,  
որ իմ մէջ կը գտնէք ձեր որոնած սրտակից ու մտե-  
րիմ բարեկամը . . . Ես տածում եմ գէպի ձեզ անհուն  
յարդանք . . . ու . . .

Տ. Ա. Ըստարբէգեանց. (Սեղմելով նըա ձեռքը). Մի  
ըսպէ անդամ չեմ կասկածում . . . Դուք ներշնչեցիք  
իմ մէջ այն, որից զրկել է ինձ ճակատագիրս . . . Մի  
թոյլ, բաղդաղուրկ այրի կնոջ ձգտումները յայտնի կը  
լինեն ձեզ . . .

Դաւթեանց. (Մի կողմ). Տէր Աստուծ . . . հա-  
ւատամ . . .

Տ. Ա. Ըստարբէգեանց. (Շարունակելով). Ասացի՝  
իմ նոր կեանքիս շէմքում կամենում եմ գիմել ձեր  
խորհրդին . . . Երեկուանից շատ եմ մտածել այն մի  
խօսքի մասին, որ յայտնեցիք ինձ մենակութեանս հա-  
մար: Ձեր գիտողութիւնը կապ ունէր այն մի շարք  
խօսքածութիւններիս հետ, որ մի տարուց ի վեր  
տանջում են ինձ . . . Այն, թէև ես միշտ գտնում եմ  
գործ ցրուելու մտածմունքներս, սակայն մենակու-  
թիւնս ինձ շատ է նեղացնում . . . Միթէ կարելի՞ է  
փախչել աշխարհից քսան և վեց տարեկան հասակում . . .  
Բնաւորութեամբ ես ուրախ եմ, զգում եմ որ ծնուած  
չեմ յաւիտեանս այրի մնալու ու ինձ ու ինձ հարց եմ  
տալիս՝ պէտք չէ արդեօք վաղ թէ ուշ կրկին ամուս-  
նանալ . . .

Դաւթեանց. Ճշմարիտ էք ասում... մենակութիւնը ուրախալի չէ, մանաւանդ վատ է ձեզ նման շնորհալի տիկնոջ համար:

Տ. Աշխարբեգեանց. Ես արդէն բացատրեցի ձեզ թէ որքան անաջող էր առաջին ամուսնութիւնս... կրկնել նոյն սխալը, նշանակում է անցեալից օգուտ չքաղել... Սակայն, հասարակութիւն, ազգականներ, մարդկային նախապաշարմունք...

Դաւթեանց. Դրանք իմ կարծիքով չպէտք է արդելեն ձեզ, քանի որ դուք ցանկանում եք կապել ձեր ապագան ձեր սրտի ընտրած մարդու հետ:

Տ. Աշխարբեգեանց. Չեզ նման խելացի, լրջամիտ մարդու կարծիքը դրաւական է իմ ապագայիս երջանկութեան համար.. (Վեր է թոշում). Ո՞հ, որքան բաղդաւոր եմ որ պատահեցի ձեզ...

Դաւթեանց. (Վեր կենալով). Ես ձեզ, սիրելի տիկին, ճանաչեցի միանդամից և հոգուս մէջ մեծ տեղ բռնեցիք...

Տ. Աշխարբեգեանց. Սակայն ես չեմ կամենում մաքառել մենակ նախապաշարմունքի դէմ... Առաջ կանգնած է մի արդելք.. սրան աւելանում է մի նորը... հօրեղբայրուն... որ հէնց այսօր եկաւ և դուք առիթ կունենաք նրա հետ ծանօթանալու...

Դաւթեանց. (Յուզուած). Ո՞չ մի աշուգելք, թէկ այդ լինի ձեր հօրեղբոր կողմից չի կարող ձեզ խոչընդուն լինիլ իրադործելու ձեր ցանկութիւնը...

Տ. Աշխարբեգեանց. Ուրեմն... Սակայն, ալ Դաւթեանց, պէտք է զդոյշ լինել... հարցը շատ փա-

փուկ է և վերաբերում է մի կեանքի, որ խոստանում է լինել երջանիկ.

Դաւթեանց. Այլապէս գործելը յիմարութիւն կը մինի...

Տ. Աշխարբեգեանց. Այս էլ պէտք է ձեզ ասեմ, պ. Դաւթեանց, որ հօրեղբայրուն եթէ ձեզ անձամբ չի ճանաչում, ձեր հօրը լաւ ճանաչելիս է եղել...

Դաւթեանց. Աւելի լաւ.. դա հարթում է մեր ճանապարհը..

Տ. Աշխարբեգեանց, Ուրեմն...

Դաւթեանց. Տուելք ինձ ձեռքը, շնորհալի տիկին, այնտեղ, ուր հարցը վերաբերում է վստահելի գործին, ոչ մի կասկած չի կարող լինիլ... (Վերցնում է տիկնոջ երկու ծեռքը եւ համբուրում է:)

### ՏԵՍԱՐԱԿՆ 13.

Տ. Աշխարբեգեանց, Դաւթեանց, Տ. Արմաւեանց:

Տ. Արմաւեանց. (Մտնելով պարտէզի ղոնից). Սիրելի է, սիրելի է տեսնել ձեզ, երկուսիդ այդչափ մտերմացած... Գիտէի, որ իմ սիրելի կատեան կը գրաւէ ձեր ուշադրութիւնը...

Դաւթեանց. (Մի կողմ). Այս շատախօս կինը կարող է ծուռ մեկնել ամեն բան:

Տ. Աշխարբեգեանց: Ախ, Լիզա, վերջապէս եկար: Այս բոպէիս այն էի մտածում որ Սիմօնին ուղարկեմ ձեզ կանչելու: Ո՞ւր է պարոն Գարեգինը...

Տ. Արմաւեանց. Գարեգինը հիմի կը դայ:

Դաւթեանց. Տիկինը, իրաւ, ժամտնակին եկաւ...  
Այն իմ անկեղծ յարդանքը, որ այս բոպէիս յայտնում  
էի ձեզ, վերաբերում է և սրան. դուք երկուսդ միա-  
տեսակ քաղցրացրիք իմ ներկայութիւնը այս օտար  
երկում: Տուէք ինձ ձեր ձեռքը, սիրելի տիկին, որ  
յայտնեմ ձեզ էլ իմ անկեղծ չնորհակալութիւնը:  
(Վերջնում է Տ. Արմաւեանցի ձեռքը եւ համբուրում է):

Մառայ. (Ներս մտնելով). Ճաշը պատրաստ է:  
(Դուրս է գնում):

Տ. Աշխարբէգիանց. Պատրաստ է...  
Ուրեմն գնանք և սպասենք միւս հիւրերին... Համե-  
ցէք, պ. Դաւթեանց, Լիզա, գնանք...

Տ. Արմաւեանց. Այս բոպէիս... Մէկ տեսնեմ  
թէ ինչո՞ւ ուշացաւ Գարեգինը: Այստեղ, հէնց քո տան  
մօտ գիւղացին պահեց նրան, դործ ունէր: (Անհան-  
գիստ այս ու այն կողմն է ընկնում):

Տ. Աշխարբէգիանց. Կը գայ ուրեմն շուտով...  
Գնանք...

Տ. Արմաւեանց. Դուք գնացէք, ես էլ կը գամ.  
մի խօսք ունեմ նրան ասելու:

Տ. Աշխարբէգիանց. Միայն չուշանաս... հօրեղ-  
քայրս խոմ գիտես անհամբեր մարդ է... Համեցէք,  
պ. Դաւթեանց: (Նրանք թեսանցուկ դիմում են դէպի  
սանդուխը եւ երկուսն էլ ներս են մտնուս):

ՏԵՍԱՐԱՆ 14.

Տ. Արմաւեանց մենակ. յետոյ Պ. Արմաւեանց.

Ինձ չէք խաբիլ... ամեն բան տեսայ... Պրծած  
է, պրծած բան է... Հայ թէ լաւ եղաւ որ մելիքը  
իր ժամանակին եկաւ... թէ չէ այդ յամառ կնոջ  
ով կարող էր խելքի բերել... Յուսով եմ որ Կատեան  
մեզ կը յիշէ, կը գնահատէ մեր բարեկամութիւնը և  
կը ստիպէ իր ամուսնուն բարեխօսելու մեզ համար...  
Վերջապէս մենք կ'աղատուենք այս արջի բնից... Հայ  
թէ լաւ եղաւ... Մէկն էլ է չի երեսում որ յայտնեմ  
այս նոր համբաւը... սիրոս ճաքվում է... Ո՞ւր է  
Գարեգինը... Հայ թէ նա էլ կուրախանայ... մեր  
բաղդը ինքն իր ոտով եկաւ... (Երեսում է պ. Արմաւ-  
եանցը վանդակապատ դուն մօտ:) Դէհ, արի, արի  
շուտ էհ...

Պ. Արմաւեանց. (Առաջ զալով). Հա, միքիչ ու-  
շացայ ճաշին...

Տ. Արմաւեանց. Շնորհաւորում եմ... մենք շու-  
տով կ'աղատուենք այս տարտարոս տեղից...

Պ. Արմաւեանց. Ի՞նչպէս...

Տ. Արմաւեանց. Տեսնում ես՝ էլի ես, թէ չէ դու-  
ինչ չնորհք ունես: Կապրենք մեծ քաղաքում... կը ստա-  
նանք աւելի սոճիկ.. կ'ընդարձակենք մեր նիստ ու  
կացը... մեր որդկերանց լաւ ուսում կը տանք... մէկ  
խօսքով կ'ապրենք այնպէս, ինչպէս ապրում են մարդիկ:

Պ. Արմաւեանց. Լաւ.. այդ որտեղից աղջիկապարոն..

Տ. Արմաւեանց. Ա՛խ, Գարեգին, թէ գիտենաս

որքան ուրախ եմ... Այս ըոպէիս մարդ ուղարկիր, որ հեռագիր տան Լուսիկին: Թող գայ այն խոռվկանը.. ի զուր, ի զուր նրա սիրտը կոտրեցի... Խեղճ Սամսոնբէդն էլ ուրուականի պէս ման է դալիս, երեսին գոյն չունի...

Պ. Արմաւեանց. ԱՇ կին, մէկ հասկացրու ինձ թէ ինչ ես ասում:

Տ. Արմաւեանց. Վայ, միթէ դեռ չեմ ասել... ուրախութիւնից մոռացայ... նոր լուր, լաւ լուր, ուրախալի լուր... եթէ Լուսիկինը չեղաւ, փոյթ չէ... Թող նա Սամսոնբէդին գնայ. նրան շատ է հաւանում...

Պ. Արմաւեանց. Լուսիկ, Սամսոնբէդ, նոր պաշտօն, քաղաք.. դէհ, ասա կարդին, ինչ է պատահել...

Տ. Արմաւեանց. Երբ որ մարդ իր համար չէ հոգում, թող որ ուրիշը մտածէ... ես կատեային կ'ասեմ որ յիշէ մեր բարեկամութիւնը, որ ստիպէ իր ամուսնուն ազատել մեզ այս աքսոր տեղից...

Պ. Արմաւեանց. ԱՇ կին..., ցնդուել ես, ինչ է.. ինչ կատեա, ինչ ամուսին:

Տ. Արմաւեանց. Հապա չեմ ասել... եհ, դու ոչինչ չես տեսնում, ոչինչ չես նկատում... Պարապիր պաշտօնական գործերովդ. մաշիր կեանքդ, քեզ գին գնող չկայ... Բայց ես մի բոպէում ամեն բան սարքեցի:

Պ. Արմաւեանց. Դէհ, կին, դու իսպառ ցնդուել ես: (Շուր է զալիս որ զնայ): Առանց այն էլ քաղցած էի, քո խօսքերից քաղցս աւելի սաստկացաւ...

Տ. Արմաւեանց. (Փահելով նըսան). Ո՞ւր ես գընում... Թող փոքր ինչ մենակ մնան, աղաւնիների պէս իրար գուրդուրեն:

Պ. Արմաւեանց. Ո՞վ, ինչ... ովքեր են այդ աշաւնիները...

Տ. Արմաւեանց. Կատեան և Դաւթեանցը... նրանք ամուսնում են:

Պ. Արմաւեանց. Ի՞նչ... ի՞նչ տեղից իմացար:

Տ. Արմաւեանց. Այս ըոպէիս ես վրա հասայ, երբ Դաւթեանցը համբուրում էր կատեայի ձեռքը և խոստանում էր զոհել իր կեանքը նրա համար:

Պ. Արմաւեանց. Ճշմարիտ...

Տ. Արմաւեանց. Ինքս ես իմ աչքով տեսայ... Ո՞հ, որքան մտերիմ էին... Ախր չէի ասում որ դըրանց մէջ մի բան կը պատահի... Կատարուեց խօսք թէ չէ...

Պ. Արմաւեանց. Անիրաւ, հապա ուր էիր հալածում խեղճ Լուսիկին:

Տ. Արմաւեանց. Լուսիկը թէ կատեան, մի և նոյն է... ես հասայ նպատակիս... կ'ազատուենք, կ'ազատուենք այստեղից:

Պ. Արմաւեանց. Ուրեմն պրծած բան է... Հապա իւղաշեանցը... Հիմի հասկանում եմ թէ այսօր ինչու էր հարցնում Դաւթեանցը նրանց յարաբերութեան մասին:

Տ. Արմաւեանց. Թող հիմի խրոխտանայ այն անտաշ գիւղացին թէ ինչ կը նշանակէ ձգտիլ կին ունենալու ազնուական տոհմից... Մելիքը կարող էր այդ մարսել... Վերջապէս հասկացրեց կատեային նրա սիալ քայլը: (Փարտէզի խորքից երեւում է իւզգաշեանցը):

Պ. Արմաւեանց. Ահա, նա էլ դալիս է . . . Ասե՞նք  
նրան:

Տ. Արմաւեանց. Ախր նա էլ է հրաւիրուած ճա-  
շի . . . Ասե՞նք, ասե՞նք, թող ինքն իր աչքով տեսնէ իր  
խայտառակութիւնը.

### ՏԵՍԱՐԱՆ 15.

Տ. Արմաւեանց, Պ. Արմաւեանց, Իւզբաշեանց:

Պ. Արմաւեանց. Լսեցիք նոր համբաւ, պարոն  
իւզբաշեանց:

Իւզբաշեանց. Գիտեմ, Մելիքը եկել է . . .

Պ. Արմաւեանց. Ոչ, գրանից աւելի հետաքրքիր  
համբաւ . . .

Տ. Արմաւեանց. Հիմի տեսնենք թէ ձեր բրուտի  
շինած կուժն է ամուր, թէ մեր քաղաքացիների կազ-  
մած ու շինած դործը . . . Գոռողաբար խօսելը յա-  
սուկ է միայն նրան, ով վատահ չէ իր անձի վրա . . .  
Զէ որ դուք ձգտում էիք մելիքի հարսին ուղել . . .  
Այժմ գնացէք վերև, ձեր աչքով տեսե՞ք թէ ումն է  
նա նուիրել իր սիրտը, իր հոգին . . . Դաւթեանցին,  
Դաւթեանցին . . . (Շուտ է զալիս զնալու). Արի, Գա-  
րեգին, երևի մեզ սպասում են ճաշի . . . Լսեցիք,  
պարոն իւզբաշեանց, իմ նազելի կատեան ուղում է  
Դաւթեանցին. (Դնում է):

Իւզբաշեանց. (Շուարած նայում է կամ մէկին,  
կամ միայն): Ի՞նչպէս . . .

Պ. Արմաւեանց. Այս լոպէիս մեր աչքի առաջ

Դաւթեանցը առաջարկութիւն արաւ տիկին Աշխար-  
բէգեանցին և նա սիրով ընդունեց . . . Մելիքն էլ օ՛հ-  
նեց նրանց:

Տ. Արմաւեանց. (Շուտ զալով): Ոչ թէ սիրով,  
այլ մի բան էլի աւելի . . . նրանք սրտանց համբու-  
րուեցին . . . Դաւթեանցը խոստացաւ չխնայել իր  
կեանքը նրա համար . . . Հէնց այստեղ, այստեղ . . .  
Զէք հաւատում . . . Եկէք, տեսէք և ուրախացէք . . . Արի,  
Գարեգին: (Բարձրանում է սանդուխներով եւ դուրս է  
զնում):

Պ. Արմաւեանց. Այս, վերջացած, պրծած բան  
է . . . Հոգւով չափ ուրախ եմ երկուսի համար էլ . . .  
Է՛հ, ինչ եղաւ, եղաւ.... Զէք գալիս . . . Ես շատ քաղ-  
ցած եմ... (Դնում է նոյն ծանալարհով):

### ՏԵՍԱՐԱՆ 16.

Իւզբաշեանց—մենակ:

(Երկար ժամանակ մտածմանց մէջ լինելուց յե-  
տույ). Վերջացաւ . . . Զքացան իմ քաղցը երազներ . . .  
իմ ապագայ երջանիկ կեանքը . . . Բոլորը, ըոլորը խոր-  
տակուեց այս մի քանի օրուայ մէջ: Այսուհետև ինչ  
գին ունի իմ կեանքը . . . Բայց միթէ ուղիղ է . . . մի-  
թէ այլ ևս չպէտք է փայփայեմ իմ երազած կեան-  
քը.... Միթէ մեղաւոր եմ որ ճնուել եմ գիւղացի . . .  
միթէ գիւղացու սիրտը այնպէս չէ բարախում, ինչ-  
պէս որ բարախում է քաղաքացու սիրտը . . . Հապա,  
Աստուած, ինչու ձգեցիր սրտիս մէջ այս կրակը, որ

իմ անքուն գիշերներիս միակ երջանիկ յոյսն ու սփոշիանքն էր... կարելի է խաբում են Արմաւեանցները... կարելի է ստոյդ չեն հասկացել.. դրանք սովոր են եղելութիւնը յեղաշընել... Անպատճառ, անպատճառ այդպէս կը լինի... Իսկ եթէ ուղիղ է...

Ծառայ. (*Մտնելով*). Պարոն Արշակ, ձեզ սպասում են ճաշի:

Իւզբաշեանց. Ճաշի... (Փոքր ժամանակ մտածելուց յետոյ). Լաւ. (Ժառան ուզում է զնալ). Սպասիր... Այնտեղ, այնտեղ... ի՞նչ տեսար... ի՞նչ են ասում...

Ծառայ. Մելիքը բարկանում է որ ճաշը ուշացաւ... Իւզբաշեանց. Միթէ ուշ է... Ա'խ... Հա, հա, ուշ է...

Ծառայ. Ասեմ թէ կը գաք...

Իւզբաշեանց. Հա... Սպասիր... (*Մտածելուց յետոյ*). Հա, հա, ասա թէ կը գամ: (Ժառան դուրս է զնում). Կ'երթամ, կ'երթամ... Ի՞նչ կայ որ... Գիւղացին չպէտք է վհատի. նա արձակ, համարձակ պէտք է դիմաւորէ իր առաջ դրած բոլոր պատահարներին. նա պարտաւոր է բաց աչքով տեսնել ու լսել իր գատագիտուք, իրան որոշած վիճակը... Կ'երթամ, կը տեսնեմ ամեն բան... Ա'խ, ախ, սիրտ իմ դիմացիր... (*Շտապրով զնում է դէպի սանդուխներ*):

ՎԱՐԱԳՈՅՐ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Տիկին Աշխարքէդեանցի տան առանձնասենեակը: Զարեանցը՝ խալաթը հագին, ծխամորչը ձեռքին, թէկ ընկած է թախտի վրա: Սիմօնը հեռու—մօտիկ կանգնած է:

ՏԵՍԱՐԱՆ 1.

Զարեանց. Սիմօն:

Զարեանց. Ասում ես թէ բէշիք քէրթմա է արած: Սիմօն: Հրամանքիս, մելիք: Զարեանց. Ո՞ւմ հետ: Սիմօն. Մեր գիւղի Հանէսի աղջկայ հետ: Զարեանց. Այդ որ Հանէսն է: Սիմօն. Գօդօրենց Հանէս կասեն, որ հիմի գիւղի սուդիս է:

Զարեանց. Համար, ի՞նչու չէ պսակում: Սիմօն. Տղան ասում է, մելիքը ապրած կենայ, թէ աղջիկը ուսում չունի, ես, ասում է, անուսում աղջկայ հետ չեմ պսակուի:

Զարեանց. Տօ, շան լակոտ, ասմ, դու իբր թէ մեծ ուսումով ես որ գիւղի աղջկան էլ չես հաւան

կենում . . . Հապա, աչք ունի մելիքենց հարսի վրա, հա . . Ես նրան նշանց կը տամ . . . Հապա, գիւղի պապական օրէնքը ուղում է խախտել . . . Ժողովուրդը ինչ է ասում:

Սիմօն. Ժողովուրդը ինչ պէտք է ասի: Զեն ուղում նրա խաթրին դիպչել, թէև նրա աղ ու հացով դուրս եկած է . . . նրա փողով ուսում առած . . .

Զարեանց. Ո՞նց թէ նրա փողով . . .

Սիմօն. Ախր, Պետին որ մեռաւ, այդ տղան Ռուսէթում գիր էր կարդում այն ժամանակ . . . Խւզբաշի Պետին շատ ողորմած մարդ էր, գիւղի համար իր գլուխը յետ դրած ունէր. Այն տարին խոլերայ էր. Փախչողը փախաւ գիւղից, Խւզբաշին իր ընտանիքով մնաց գիւղում ու խոլերայով բռնուածներին պահում, նրանց համար հոգս քաշում . . . Վերջը ինքն էլ բըռնուեց ու մահացաւ . . .

Զարեանց. Յետոյ . . .

Սիմօն. Գիւղը նրա արած ծառայութիւնը չմոռացաւ. Ռուսէթում կարդացող նրա տղին իրանից փող էր ուղարկում, բայցամ մարդ դառնայ, գիւղի համար օդտակար լինի:

Զարեանց. Հապա, ինչու է քրքրվում . . . ինչու համար ժողովուրդին անպատիւ անում և նրա դրած օրէնքը չէ կատարում:

Սիմօն. Մելիքը ապրած կենայ, մենակ այդ բանում հակառակում է, թէ չէ ամեն բանում իր գեղին ծառայութիւն է անում: Որին օգնում է դատաստանում գործ եղած ժամանակ, որին—սովորացնում է տաւարը ոնց պահելը. որին ինչ . . . հիմի էլ այս ան-

տառի վէճի մէջ ձեռքից եկածը չէ խնայում, որ այս վէճը գիւղի օդտին վճռուի . . . Այդ պատճառով գիւղը նրա անունով է երդվում . . . Նրա առած ծառայութիւնը տեսնելով ժողովուրդն էլ շատ չէ պնդում, թէև Հանէսը իւզբաշուն գանգատ է տուել:

Զարեանց. Կանչիր ինձ մօտ Հանէսին . . . Խւզբաշուն էլ կանչիր . . . Պապական օրէնքն է, պէտք է կատարուի . . . Երբ է եղել որ բէշիք-քերթմա եղածները չպսակուեն . . . Եղած է. հարցնում եմ քեզ:

Սիմօն. Հրամանքիս, եղած չէ:

Զարեանց. Թէ եղած չէ, հապա հարկաւոր է որ կատարուի . . . Խելքին զօր է տալիս, որ ասում է թէ ուսում առած եմ, անուսումին չեմ ուզի . . . Այդ որ ասում է, գրանով ում պէտք է զարմացնի . . . Հապա գիւղի աղջկերքը պէտք է տանը նստեն, իրանց մուրազին չհասնեն: Բէշիք-քերթմա է եղած Հանէսի աղջկայ հետ, ուղէ չուզէ պէտք է կատարէ պապական օրէնքը: Այս է իմ կտրական հրամանը:

## ՏԵՍԱՐԱՆ 2.

Զարեանց, Սամսոնքի, Սիմօն:

Սամսոնքի. (Մտնելով). Բարի լոյս, մելիք, այդինչ հրաման ես արձակում:

Զարեանց. Երկարակայիր, այն շան լակոտը, Խւզբաշի Պետի տղան սուդիա Հանէսի աղջկայ հետ բէշիք-քերթմա է եղած, նա էլ նազ ու թող է անում:

Սամսոնքի. (Սիմօնին): Սովորայի հետ:

Սիմօն. Հրամանքիս, բէդ:

Սամսոնիք. Վայ . . . այ նրա վիզը կոտրուի . . .  
այնպիսի սիրուն աղջկայ հետ ուզում են նրան պսա-  
կել, նա էլ նազ ու թող է անում:

Զարեանց. Ոնց որ տեսնում եմ, Սամսոն, դու էլ  
ես աչքդ անկել նրա վրէն:

Սամսոնիք. Վայ, մելիք, եթէ դու էլ տեսնես,  
հաւատացած եմ որ ծերութեանդ ժամանակ բեզ էլ  
դուր կը դայ:

Զարեանց. Այ, դու անամօթ . . .

Սամսոնիք. Հաւատացնում եմ, մելիք, մէկ այն-  
պէս սիրուն աղջիկ է, մէկ այնպէս, մելիք, որ . . .  
չը . . . Ասուած վկայ, մելիք, երկու աչք էլ ուրիշը  
կուղես նրան մտիկ տալու համար. այնպիսին է որ  
հէնց ջէյրան լինի կասես . . .

Զարեանց. Սնւս կաց, լաքաթա . . .

Սամսոնիք. (Ժիծաղելով). Հա, հա, հա . . . ինչ  
ես բաշկանում, դա շատ բնական բան է . . . գեղեց-  
կութիւնը գրգռում է մեր նեարդերը, յափշտակում է  
մեր երեակայութիւնը . . .

Զարեանց. Սամսոն, սիրու չունեմ հանաքներիդ  
համար. դինջ կաց:

Սամսոնիք. Լաւ, մի բարկանար . . . Մէկ ասա  
թէ ինչու չէ ուզում այն գեղեցիկ աղջկան . . . հապա  
ինչ է ասում:

Զարեանց. Ես նրան ցոյց կը տամ թէ ինչ է նշա-  
նակում չէ ուզում . . . Այ, կանչել եմ Հանէսին, դիւզի  
իւզբաշին էլ կը դայ, տեսնեմ, նրանք ինչ են ասում:  
Չի ուզի, կը յամառի, կուղենայ իրա խօսքը դուրս

տանի, ժողովուրդի վճիռով դիւզից քշել կը տամ:

Սամսոնիք. Քշել էր հարկաւոր, դրանից աւելի  
լաւ առիթ կար, բայց Դաւթեանցը պաշտպանեց:

Սիմօն. (Մը կողմ). Հիմի այդ բանը դցիր որա  
ականջը:

Զարեանց, ի՞նչ բանի համար պաշտպանեց:

Սամսոնիք. Ախոր, գիւղում ժողով կար անտառի  
վէճի մասին գաւառապետի ներկայութեամբ: Ժողո-  
վրդից ընտրած էր այդ Պետի տղան Արշակը, որ պէտք  
է նրա դատը պաշտպանէր . . . Սա իրան այնպէս ան-  
վայել է պահել, այն տեսակ կոպիտ պատասխաններ  
է տուել Դաւթեանցի հարցերին որ խեղճ մարդը ապ-  
շած է մնացել: Գաւառապետը ուզեցել է դրա հա-  
մար արձանագրութիւն կազմել նահանգապետին ներ-  
կայացնելու, բայց Դաւթեանցը այնքան վեհանձն է  
դանուել, որ խնդրել է ուշագրութիւն չգարձնել նրա  
այդ անպատշաճ վարմունքի վրա:

Զարեանց. Տես, տես . . . Այ, դու գեադա . . . ախոր,  
դու նրա ոտի պճեղին էլ արժանի չես, համարձակ-  
վում ես նրան անպատուել: Յետոյ:

Սամսոնիք. Յետոյ սինչ . . . Արմաւեանցը ինձ  
ասաց թէ Դաւթեանցը Կատեայի պատիւը պահելով  
ներեց նրան այդ վարմունքը . . .

Զարեանց. Կատեան ինչ դործ ունի այստեղ:

Սամսոնիք. Զէ որ Կատեան այդ տղային յար-  
դում է . . .

Զարեանց. Դու էլ ինչ յիմար յիմար դուրս ես  
տալիս . . . ինչ է նշանակում յարդում է: Ո՞վ է նա,  
որ Կատեային յարդէ կամ չյարդէ:

Սամսոնիկ. Ախր, մելիք, դու այդ պատճառով  
չէ որ եկել ես այստեղ... Տեսնում ես ինքութէ որ-  
քան կամակոր է և ոչ ոքի մասին բացի դրանից լսել  
չէ ուզում:

Զարեանց. (Բարկացած վեր է կենում). Այս բո-  
լորը քո մեղն է, քաւթառ աղուես... դու որ աչքդ-  
վրէդ ունենայիր, այս բոլորը չէր պատահի... Արի,  
հազգը շորերս... Մէկ դնամ տեսնեմ թէ ինչ եմ  
անում: (Բարկացած դուրս է զնում):

Սիմօն. (Ցնալով). Դու էլ մւր էիր դցում սրա-  
բերանը այս բանը:

### ՏԵՍԱՐԱՆ 3.

Տ. Աջարբկեանց. Սամսոնիկ:

Տ. Աջարբկեանց. (Շտապով մնոնում է). Սամ-  
սոն, դու ես եղել այստեղ...

Սամսոնիկ. Ախ, կատեա, կատեա, ուր էիր  
գնացել, քեզ այստեղ վնարում էի և ճարը կտրած  
եկայ մելիքին տեսնելու և նրա հետ ժամանակ անց-  
կացնելու:

Տ. Աջարբկեանց. Դիւլ էի գնացել վիրաւո-  
րածին այցելելու համար: Հա, ինչ է պատահել...

Սամսոնիկ. Ուրախութիւն, ուրախութիւն...  
Տիկին Արմաւեանցը հեռագիր է քաշել Լուսիկին, որ  
վերադառնայ. նա էլ պատասխանել է թէ այս երե-  
կոյեան գնացքով գալու է... Լսեցիր, լսեցիր կա-  
տեա, գալիս է...

Տ. Աջարբկեանց. Վերջապէս երեսդ փայլեց,  
թէ չէ ինչի նման էիր այս քանի օրը... Ծանր էր  
քեզ վրա նայել:

Սամսոնիկ. Հէշտ է միթէ մնալ անդիտութեան  
մէջ... Հազար ու մէկ մտքեր անց ու դարձ էին  
լինում գլուխ մէջ: Մէկ մէկ յիշում էի բոլոր հան-  
գամանքները և չէի կարող ինձ հաշիւ տալ թէ ար-  
դեօք ես եմ առիթ տուել նրան այստեղից անակն-  
կալ փախչելու համար:

Տ. Աջարբկեանց. Վերջապէս իմացար թէ ինչ  
էր պատճառը:

Սամսոնիկ. Ո՞րտեղից կիմանայի... ես գոնեա  
ոչինչ մի այնպիսի բան չեմ ասել կամ արել որ ինձա-  
նից նեղանար... Արմաւեանցներն էլ չեն ասում...  
Մէկ թող դայ, ամեն բան կ'իմանամ նրանից:

Տ. Աջարբկեանց. Սամսոն, դու նրան շատ ես  
սիրում:

Սամսոնիկ. Ո՞հ, շատ, շատ կատեա:

Տ. Աջարբկեանց. Ի՞նչպէս, ի՞նչպէս ես սի-  
րում... մի թագցնիր ինձանից... Ապա մէկ ասա...  
Արի, նստենք, պատմիր... (Երկուսն էլ նստում են):

Սամսոնիկ. Ուղիղն ասեմ քեզ, սկզբում նրա  
վրա մինչեւ անդամ ուշադրութիւն չէ դարձնում...  
առանձին դժոհութեամբ ընդունեցի նրա առաջար-  
կութիւնը սովորացնել նրան ձի նստել... Սակայն  
յետոյ մտերմացայ այնքան որ նրա ներկայութիւնը  
ինձ համար պահանջ դարձաւ. առանց նրան ես տըխ-  
րում էի...

Տ. Աջարբկեանց. (Մի կողմ). Նոյնը և ինձ

հետ էր պատահում... (թարձր). Յետոյ, յետոյ, Սամսոն, ասա, ասա խնդրեմ...

Սամսոնիք. Յետոյ... նկատեցի որ նա էլ ինձ է համակրում... Միթէ գու չէիր տեսնում որ նա սկսեց յաճախ գալ իր քրոջ մօտ... դրանից առաջ տարին մէկ երկու անդամ եթէ գար, այն էլ մեծ բան էր:

Տ. Աշխարքիզեանց. Ճշմարիտ է... Յետոյ...

Սամսոնիք. Երբ տեսնում էի որ նա չէր գալիս, ինքս էի գնում քաղաք: Ամբողջ օրերով մենք միասին էինք լինում: Մի խօսքով հետզհետէ մտերմացանք:

Տ. Աշխարքիզեանց. Յետոյ նա քեզ յայտնեց որ սիրում է քեզ:

Սամսոնիք. Միթէ հեշտ է աղջկայ համար այդ բանը... բայց նրա վերաբերմունքը ինձ հետ ցոյց էր տալիս որ համակրում է ինձ:

Տ. Աշխարքիզեանց. Դու էլ չես ասել թէ սիրում ես:

Սամսոնիք. Չեմ ասել... բայց հիմի անպատճառ կ'ասեմ...

Տ. Աշխարքիզեանց. Միթէ գու այնքան վստահութիւն ունես որ բացարձակ ասես թէ սիրում ես իրան...

Սամսոնիք. Վայ... քանի որ սիրում եմ, ինչու չեմ ասիլ...

Տ. Աշխարքիզեանց. Իսկ եթէ գու սխալ հասկացած լինես և նա քեզ մերժէ, ինչ կանես...

Սամսոնիք. Մերժէ... այն ժամանակ... (ըլունցը դնելով Շակատին). Հըպ... և վերջացաւ...

Տ. Աշխարքիզեանց. Ա՛խ... Սամսոն, ինչ ես ասում... միթէ կարելի է...

Սամսոնիք. Վախեցար... Հանգիստ կաց, այդ չի պատահիլ և գու այս քանի օրս կը տեմնես որ ես նրան առաջարկութիւն կ'անեմ և ամեն բան կը վերջանայ, էլ համբերութիւն չունիմ...

Տ. Աշխարքիզեանց. Լսիր, Սամսոն, ինչպէս կ'անես նրան առաջարկութիւնդ...

Սամսոնիք. Այդ հանգամանքից է կախուած... Հա, ինչու ես ինձ հարց ու փորձ անում... գու արդէն այդ բանը փորձով գիտես... Մոռացայ քեզ շնորհաւորեմ, կատեա... Ներիր որ ուշացրի... Լուսիկի գալը այնքան ուրախացրեց ինձ որ քիչ մնար մոռանում էի... Շնորհաւորում եմ, շնորհաւորում եմ... շատ, շատ լաւ բան ես մտածել...

Տ. Աշխարքիզեանց. (Վեր կենալով). Ի՞նչ... ինչ ես շնորհաւորում...

Սամսոնիք. Որ քեզ Դաւթեանցն առաջարկութիւն է արել և գու սիրով ընդունել ես: (Վեր է կենում):

Տ. Աշխարքիզեանց. (Դժգոհ). Ո՞վ ասաց քեզ այդ յիմար բանը...

Սամսոնիք. Յիմար... ուրեմն ուղիղ չէ...

Տ. Աշխարքիզեանց. Հարցնում եմ ով ասաց քեզ...

Սամսոնիք. Տիկին Արժաւեանցը... Բայց նա այդ բանը արդէն համարում է վճռած ու վերջացած:

Տ. Աշխարքիզեանց. Ուրեմն նա է տարածել այդ յիմար լուրը... Ախ, Աստուած, Երբ կ'աղատուեմե դրանցից:

Սամսոնքէզ. Բայց գիտեմ, Կանտեա, այդ շատ լաւ բան է . . . Մելիքն էլ է նրան շատ հաւանում . . . Ասում է՝ իսկ և իսկ մեր շրջանի մարդ է նա . . .

Տ. Աշխարքէզեանց. (Խիստ). Սամսոն . . . էլի սկսեցիր . . . վերջապէս մինչև երբ պէտք է ինձ հաւածէք, կրկնելով այդ դասակարգային նախապաշտամունքը . . .

Սամսոնքէզ. Սակայն ես համոզուած եմ որ նա չի մերժիլ, եթէ դու այդ բայց անես:

Տ. Աշխարքէզեանց. (Խիստ). Սամսոն, խնդրում եմ վերջ դնես այդ բանին:

Սամսոնքէզ. Այս ասեմ թէ ինչն . . . Այսօր տիկին Արմաւեանցը Դարեգինից լսած մի նոր լուր հաղորդեց, թէ Դաւթեանցը մտադրուել է զիջանել և տալ գիւղին ցանկացած կտորը:

Տ. Աշխարքէզեանց: Անկարելի է . . .

Սամսոնքէզ. Քեզ հաւատացնում եմ . . . միայն խնդրեմ ոչ ոքի չասես, որովհետեւ սա մի գաղտնիք է և ես խօսք եմ տուել տիկին Արմաւեանցին ոչ ոքին չասել . . . Բայց քեզ ասում եմ, որովհետեւ դէպք եղաւ . . . Եւ գիտես թէ ինչն է ուզում զիջանել . . . քեզ յարգելով ու . . .

Տ. Աշխարքէզեանց. Լոիր, Սամսոն . . .

Սամսոնքէզ. Ինչու ես բարկանում . . .

Տ. Աշխարքէզեանց. Որովհետեւ դու տակից գըլխից ես խօսում . . . Դու լաւ գիտես որ ինձ այդ բանը դուր չէ գալիս . . .

Սամսոնքէզ. Գիւղատնտես մարդ է . . . Գործերդ կը կառավարէ . . . դու չ՞ս որ գանդատվում ես թէ

կառավարիչներդ քեզ խաբում են, սխալ հաշիւ են ներկայացնում: (Հարեւան սենեակից լսվում է բարձր ձայն) Այս ի՞նչ ձայներ են . . . Մէկ տեսնեմ թէ ի՞նչ տուր ու դոմբոց է այնտեղ: (Ծտապով դուրս է զնում հարեւան սենեակից: Զայները սաստկանում են):

Տ. Աշխարքէզեանց. (Այլայլուած). Տէր Աստուած, ի՞նչ է պատահել . . . Արշակի ձայն է . . . ախր նա էլ Սամսոնի պէս գիւրագրգիռ է . . . Զինի մի փորձանք է արել իր գլխին: (Սաստիկ շփոթուած ու անհանգիստ մօտենում է միջին դռան): Սիմօն, Սիմօն, վազիր օդնութեան . . .

#### ՏԵՍԱՐԱՆ 4.

Տ. Աշխարքէզեանց. Սիմօն:

Սիմօն. (Մտնելով). Ի՞նչ կը հրամայէք . . .

Տ. Աշխարքէզեանց. Ի՞նչ կայ դուրսը . . . այս ում ձայներ են . . .

Սիմօն. Մելիքի մօտ են մեր գիւղից Հանէսը և իւզբաշին . . . Արշակն էլ այնտեղ է . . .

Տ. Աշխարքէզեանց. Ինչու համար են եկել:

Սիմօն. Մելիքը կանչել էր մի դործի համար:

Տ. Աշխարքէզեանց. (Ինքն իրան). Ի՞նչ գործ կարող էր ունենալ նրա մօտ: (Այլայլուած մօտենում է ծախս դռան եւ յետ է զալիս). Սիմօն, գնա կաց այնտեղ: . . . Հօրեղբայրս անհամբեր մարդ է . . . Արշակն էլ գիւրագրգիռ է . . . Մի փորձանք չը պատահի . . . Սիմօն, ի՞նչ ես կանգնել, գնա, ասում եմ քեզ: (Անհանգիստ դրութեան մէջ):

Սիմօն. Ախր, խանում.. ոչինչ չի կարող պատահել.. գործի համար էր կանշել... Այ, էլ ձայն չէ լսվում, վերջացրել են գործը..

S. Աշխարբէզեանց. Ա՛յ.. . (Նստում է յուսահատուած: Սիմօնը փոքը ժամանակ նրան նայելոց յետոյ, գլուխը շարժելով դուրս է գնում միջին դռնից):

### ՏԵՍԱԲԱՆ 5.

S. Աշխարբէզեանց.—միայն:

Երեխ խեղճը յուսահատուել է, լսելով այն ստորբամբասանքը որ Լիզան աջ ու ձախ տարածում է իմ և Դաւթեանցի մասին... Երեխ եկել է հօրեղբորս մօտ իր ցաւը նրան յայտնելու... բայց ինչո՞ւ համար գնաց նրա մօտ... ինչո՞ւ ինձ չի դիմում որ բաց անեմ նրա աչքերը... Միթէ Սամսոնի չափ վստահութիւն չունի որ բացարձակ գայ խոստովանի ինձ իր սէրը, որ ընկնեմ նրա գիրկը, բաց անեմ սիրտս, հոգիս... Ե՞ս առաջինը անեմ այդ քայլը... Ո՞չ, ոչ, այդ անկարելի է... չեմ կարող.. էլ ուր գնամ... ում ասեմ ցաւերս... Դաւթեանցի վրա յոյս ունէի, որ կը միացնէ նրան ինձ հետ... բայց նա այնքան է զբաղուած անտառի հարցով, որ ժամանակ չէ դտնում ինձ մօտ գալու... Երկու օր է չեմ տեսել... Ասեմ հօրեղբորս... (Վեր է կննուած եւ ուզում է մօտենալ ծախ դռան, որտեղից դուրս են զալիս Զարեանց եւ Խաղաշեանց):

### ՏԵՍԱԲԱՆ 6.

S. Աշխարբէզեանց, Զարեանց, Իւզբաւեանց:

Զարեանց. (Բարկացած մտնելով). Ե'կ եկ.. Ահա այստեղ է գիւղի տիրուհին, թող սա անէ քո դատաստանը:

Իւզբաւեանց. (Յուզուած մտնելով). Իմ դատաստանը իմ խղճմտանքն է որով զեկավարվում եմ ամեն գործում և ամեն տեղ:

Զարեանց. Բայց և այնպէս դու չես պրծնիլ մարդկային դատաստանից որ գործում է ամեն անդամ: Այդ դատաստանը տուած է Աստուածանից ժողովուրդին և սրա դրած օրէնքից ոչ ոք չի կարող խուսափել: Ուսում առած ես ձեւանում, այս էլ պարտական ես հասկանալ: (Նստում է):

S. Աշխարբէզեանց. (Այլայլուած). Ի՞նչ է, հօրեղբայր, ի՞նչ է պատահել:

Զարեանց. Ես լսել եմ, որ դու, սիրելի Կատեա, այս գիւղի տղային երես ես տուել այնքան որ իր շափը կորցրել է...

S. Աշխարբէզեանց. Հօրեղբայրս... (Մօտենում է նրան եւ նստում է նրա կողքին):

Զարեանց. Մի հակաճառիր, այդ երեսում է աւմեն բանից:

Իւզբաւեանց. Դուք, մելիք, չէիք կարող ոչինչ տեսնել..

Զարեանց. Որ դու, գիւղի տղայ, բէշիքքերթմա ես եղած հանէսի աղջկայ հետ սնւտ է... Զէ որ դու

ինքդ այս ըոսկէիս լսեցիր իրան չանէսից և ձեր գիւղի  
իւղբաշուց:

Իւզբաշեանց. Ամեն մարդ պարտական է կար-  
գագրել իր ապագան այնպէս, ինչպէս ինքն է ցան-  
կանում և ոչ թէ ստիպելով նրան անել այն, ինչ որ  
նրա սրտովը չէ . . .

Տ. Ա. Ըխարբէզեանց. Այդ հանդամանքում պարոն  
Արշակը իրաւացի է . . .

Զարեանց. Ի՞նչ . . . Ուրեմն դու էլ սրա մտքի  
ես . . . Հապա պապական օրէնքը . . . Երդումը որ  
տուած են այս մասին ծնողները . . . այս բոլորը պէտք  
է սոնակոխ լինի քո կարծիքով . . .

Տ. Ա. Ըխարբէզեանց. Այդ օրէնքն էլ, այդ եր-  
դումն էլ առաջ են եկած ծնողների անդուշութիւ-  
նից և անհեռատեսութիւնից. ինչու համար մարդիկ  
պէտք է տուժեն դրանից:

Զարեանց. Երբ դու, դիւզի տիրուհի, այդ տե-  
սակ մտքերով ես ուզում կառավարել, այն ժամանակ  
զարմանալի չէ, որ այս և սրա նման գեադաները  
ունին իրաւոնք դլիսիդ վրա նստելու:

Իւզբաշեանց. Մելիք . . .

Տ. Ա. Ըխարբէզեանց. Հօրեղբայր . . . ինչու ես  
վիրաւում սրան:

Զարեանց. (Ժաղըլով). Ի՞նչու ես վիրաւում . . .  
Հապա սրա հասցրած վիրաւորանքը ամբողջ դիւզին  
դու ոչինչ բանի տեղ չես զցում . . .

Տ. Ա. Ըխարբէզեանց. Հօրեղբայր . . . դիւզը դիտէ  
և սա . . . մեր ինչ բանն է խառնուել դրանց դոր-  
ծում . . .

Իւզբաշեանց. Դիւզը անզօր է անել այն ինչ որ  
սրտով չէ . . .

Զարեանց. Միթէ . . . հա, հա, հա, ինչ պարզա-  
միտ ես եղել . . . դիւզը վեր կենայ—դերանը կը կոտ-  
րէ . . . Անզօր է, հա, հաա . . .

Իւզբաշեանց. Միայն փտած գերանը . . . բայց  
քանի որ գերանը զօրաւոր է, նա կը դիմադրէ . . .

Զարեանց. (Տ. Աշխարբէզեանցին( : Այ, այ . .  
տես, տես ինքդ թէ քո ցանած սերմերը ինչ պտուղ  
են տալիս . . . (հշխանեանցին). Դու քեզ երեակայում  
ես զօրաւոր, դու կ'ուզես դիմադրել ժողովրդին . . .  
դու ուզում ես ոտի տակ տալ նրա ծէսն ու օրէնքը  
և ազստամտութեամբ գործել . . . այդ քեզ չի յաջո-  
ղուի . . . Բաւական է այն որ քո կոպիտ վարմունքի  
համար Դաւթեանցը վեհանձնութեամբ քեզ ներել է . . .  
Ժողովրդին հասցրած վիրաւորանքը քեզ չեն կարող  
ներել . . . Հասկացար . . . Ազատամիտ իրան ձևացնողին  
և ժողովրդի մէջ կարդ խանդարողին մեզ մօտ չեն  
սիրում . . . Հէ . . . քշում են հեռու:

Տ. Ա. Ըխարբէզեանց. Հօրեղբայր . . . այդ ինչ  
սպառնալիք ես տալիս սրան . . . միթէ կարելի է . . .  
Խնդրում եմ, հօրեղբայր, զլսիցդ հանել այդ բանը,  
կրկնում եմ մեզ չէ վերաբերում դրանց դարձը և իրա-  
ւոնք էլ չունինք խառնուելու . . .

Զարեանց. Ակվօդ ստրնյ սրան . . . Ասել եմ սրան  
և դարձեալ քո ներկայութեամբ կրկնում եմ ո՞չ սա  
պէտք է ուզի Հանէսի աղջկան համաձայն իրանց ծնողը  
ների խոստման և երգման . . . Ապա թէ ոչ . . .

Տ. Ա. Ըխարբէզեանց. (Ընդհատելով). Ապա թէ ոչ . . .

Զարեանց. Ես չեմ ինայիլ ոշինչ որ այդ բանը  
սրան ստիպեմ անելու. իսկ հակառակ դէպքում կա-  
նեմ այն, ինչ որ ձեռքից կը գայ . . .

Տ. Աշխարբէզեանց. Հօրեղբայր, միթէ դուք այդ-  
բանը կ'անէք . . .

Զարեանց. Կ'անեմ և չեմ ամաչի . . .

Տ. Աշխարբէզեանց. Հօրեղբայր, ինդրում եմ,  
աղաջում եմ ձեռք վերցնել այն բանից որ մեր անուան  
ու պատուին վայել չէ . . . կրկնում եմ, հօրեղբայր,  
որ մեր բանը չէ խառնուել սրանց ընտանեկան յարա-  
բերութիւնների մէջ, որ առաջացել է նախապաշար-  
մունքից . . .

Զարեանց. Նախապաշարմունք . . . հա, հա, հա . . .  
մի քանի րոպէ սրանից առաջ միւնոյնը սա ասաց . . .  
Հա, հա, նախապաշարմունք . . . Ուրեմն, դու էլ այն  
կարծիքի ես, որ ժողովրդի դրած ծէսն ու օրէնքը  
նախապաշարմունք է: Լաւ, թող այդպէս լինի . . . բայց  
այդ քո ասած նախապաշարմունքը պէտք է որ կա-  
տարուի . . .

Տ. Աշխարբէզեանց. (Վեր կենալով). Եթէ այդ-  
պէս է, հօրեղբայր, ուրեմն ես, ինչպէս գիւղի տիրու-  
հի, այդ բանին արգելը կը դնեմ . . .

Զարեանց. (Հեղնորէն): Օհօ . . . մրտեղից է հա-  
սել քեզ այդքան քաջութիւնը . . . (Խիստ). Ոչ գիւղի  
տիրուհին և ոչ ոք իրաւունք չունի արգելել կատա-  
րելու Աստուածանից դրած օրէնքը . . . Երկուսովդայս  
բանը լաւ հասկացէք . . .

Ծառայ. (Մտնելով). Պարոն Դաւթեանցն է . . .

Տ. Աշխարբէզեանց. Խնդրիր գահինքը, այս լո-

պէիս կը գամ: (Ժառան դուրս է գնում):

Զարեանց. Ես կընդունեմ նրան . . . Դու այստեղ  
կաց . . . մէկ լաւ հակիր սրա ականջը, ինչ որ ասացի,  
յետոյ դուրս եկ գահինքը: (Դուրս է դնում աշ դոնից):

### ՏԵՍԱՐԱՆ 7.

Տ. Աշխարբէզեանց. Խզբանաց:

Խզբանաց. Տիկին, մելիքի սպառնալիքը ա-  
ռանց պատճառի չէ: Արան, երեկի, թշնամացրել են  
իմ դէմ . . .

Տ. Աշխարբէզեանց. (Նստելով). Նստեցէք, պա-  
րոն Արշակ: Ո՞վ կարող էր թշնամացնել ձեր դէմ . . .  
Հօրեղբայրս բռնկւող բնաւորութեան տէր մարդ է . . .  
Լուցկի պէս գառվում է և իսկոյն հանդչում . . .

Խզբանաց. (Նստելով): Ո՛չ տիկին, ես նկա-  
տում եմ նրա խօսքերի մէջ մի շատ լաւ լարած մե-  
քենայ . . . Եատ ճարտար կերպով բարդել են միմեանց  
վրա և՝ Հանէսի աղջկայ պատմութիւնը և՝ Դաւթեան-  
ցին իմ տուած պատասխանները ժողովում . . . Այս  
բոլորը անում են նոյն մտքով, որ ինձ գիւղից հեռաց-  
նեն որպէս զի ժողովուրդը մնայ նոյն տղիտութեան  
մէջ, որին սովոր են տեսնել ամենուրեք և որից տու-  
ժում է ամբողջ գիւղը . . .

Տ. Աշխարբէզեանց. Միամիտ եղէք, այդպիսի մի  
բան չի կարող պատահել . . . Բայց և այնպէս հարկա-  
ւոր էր զգոյշ լինել և աւելի չդրդուել մարդկանց:

Խզբանաց. Պաշտօնական անձինք թէկ չեն

սիրում ցոյցեր, բայց խրատվում են նրանից . . . Արժէր այդ ձեր պարոն քննիչին և կառավարութեան միւս ներկայացուցիչներին փոքր ինչ խրատել:

Տ. Ա. Եփարքեզեանց. (Վախեցած). Ինչ էք ասում... Ա՛խ, տէր իմ Աստուած, այս ինչե՞ր էք մտածում:

Իւզբաշեանց. Հանգիստ եղէր, ես այդ չեմ անիլ: Խօսք էր՝ ասացի:

Տ. Ա. Եփարքեզեանց: Բոնի ոյժ գործ գնել այնտեղ, ուր այդ աւելորդ է, այնտեղ, որտեղ հարկաւոր է խոհեմութիւն, փոքր ինչ հաւատ դէպի իր արդար գործը . . . Ի հարկէ, դուք լաւ էք հասկանում որ անօդուտ բան է:

Իւզբաշեանց. Բայց, ինչու համար են իդերև հանում նրանք մեր յոյսերը . . . ինչու համար են ոչնչացնում մեր իդերը:

Տ. Ա. Եփարքեզեանց. Համբերութիւն, պարոն Արշակ, փոքր ինչ էլ անկեղծութիւն . . . Այն ինչ որ կատարվում է ծածկաբար միշտ մնում է անորոշ և զանազան կասկածանքի առիթ է տալիս . . . Ի դուք էք դուք տեղիք տալիս այդ կասկածանքին . . .

Իւզբաշեանց. Սակայն հանգամանքներ այդ չեն ցոյց տալիս . . . Սիրոս բորբոքվում է, երբ շուրջս տեսնում եմ այն, ինչ ո՞ս երբէք չեի մտածել . . . Ահա, այժմ գրանք իրանց աջակից են ընտրել պատուելի մելիքին և նրա միջնորդութեամբ գործում են որ ինձ տապալեն, ինձ խայտառակեն, խլեն ինձանից այն՝ որ սուրբ է ու նուիրական ինձ համար, որ փայփայել եմ պրտիս մէջ նադ ու գորովով . . . Հարցնում եմ ձեզ,

նազելի տիկին, ինչու ինչու համար այս այսպէս պէտք է լինի . . .

Տ. Ա. Եփարքեզեանց. (Քնքշութեամբ). Որովհետեւ դուք յափշտակվում էք ամեն մի չնչին բանից . . . ամեն մի եւեղթ, մի հասարակ թիւրիմացութիւն՝ որ կարող է ծագել մի ստոր բամբասանքից, կարող են խանգարել մարդու անդորրութիւնը. բայց միթէ վայել է մեզ տալ դուանց որ և է նշանակութիւն . . .

Իւզբաշեանց. (Կասկածանօք). Ո՞ւրեմն . . .

Տ. Ա. Եփարքեզեանց. Կրկնում եմ՝ գործեցէք համարձակ . . .

Իւզբաշեանց. Սակայն . . . այն լարած մեքենան . . .

Տ. Ա. Եփարքեզեանց. Ինչպէս էլ որ ճարտար կերպով լարեն մարդիկ մեքենան, սա իր գործողութիւնը չի կարող կատարել եթէ նրան ենթակաները ձեռքերը ծալած կը նստեն . . . Լոել էք դուք այն առածը որ ասում է՝ խոտորնակին խոտորնակ . . .

Իւզբաշեանց. (Ցեղից վեր թոշելով). Ա՛խ, տիկին, եթէ միայն գիտենայի . . . Ո՛չ, ոչ . . . ոչ . . . մելիքի սպառնալիքը՝ եթէ մինչեւ անդամ երկնային կրակի փոխուի . . . ժողովուրդի տրտունջը՝ եթէ մինչեւ անդամ անէծքի և իմ տառապանքի աղբիւր դառնայ, ես հաւատացած եմ որ չեն համնի նրան, որից բըզիսում է իմ երջանկութիւնը . . . Տիկին . . . իմ մոլորուած ու տարակուսուած սրտիս մէջ ձեր խօսքերից մի անասելի սփոփանք և անպատճելի յոյս ներշնչուեցան . . . Մեռած ու տանջանքով լի հոգուս մէջ կենարար լոյս փայլեցաւ . . . Տիկին, շնորհակալ եմ . . .

(Յուզուած ու գրգուած դուրս է վազում միջին ռոնից):

Տ. Աշխարբեգեանց. (Վերկենալով): Վերջապէս հասկացաւ . . . Թող գործէ լի հաւատքով ու յուսով . . . Գնամ հիմի Դաւթեանցի մօտ որ սուան էլ քաշեմ մեր կողմը և երեքովս գրոհ տանք մարդկային նախապաշտոմունքի գէմ: (Առաջ է զնում զնալու, այն ժամանակ մտնում են աջ ռոնից Զարեանց եւ Դաւթեանց).

### ՏԵՍԱՐԱՆ 8.

Տ. Աշխարբեգեանց, Զարեանց, Դաւթեանց.

Զարեանց. Բաւական երկար ժամանակ խլեց քեզանից այն յիմարը որ հասկացրել էիր . . . վերջապէս հասկացրիր . . . շատ լաւ . . . իսկ մենք պարոն Դաւթեանցի հետ քեզ սպասում էինք:

Դաւթեանց. (Չեզը համբուրելով). Այս, նազելի տիկին, սպասեցինք . . . բայց ի վերջոյ բաղդ եմ ունենում ձեզ տեսնելու . . .

Տ. Աշխարբեգեանց. Բարով, պարոն Դաւթեանց . . . Ներեցէք որ սպասել տուեցի ձեզ . . . Հենց ես էլ հիմա ուզում էի գալ դահլիճը ձեզ մօտ . . . Հաւատացած եմ, որ հօրեղբայրս ինձ փոխարինեց:

Զարեանց. Այս, այն . . . ես բոլորը պատմեցի . . . պարոն Դաւթեանցը նոյն համոզմունքի է, ինչ որ ես . . . ժողովուրդի սահմանած օրէնքը նուիրական է և պատառարական նրա անդամների համար . . .

Կրթաշեանց. Այս, եթէ նա չէ խանդարում

մարդուս անհատականութեան գաղափարը:

Տ. Աշխարբեգեանց. (Նստելով). Նստեցէք, պարոն Դաւթեանց . . . Տես, հօրեղբայր, որ դուք այնպէս չէք հասկացել պարոն Դաւթեանցին . . . ես գիտէի որ պարոնը չէ համակրում այն գաղափարին, որ մեռցը նում ու ոչնչացնում է մարդուս մէջ անհատականութիւնը . . .

Զարեանց. Անհատական է թէ հատական այդ ձեր ասած գաղափարը, այդ ինձ չէ վերաբերում . . . ես միայն այն գիտեմ և պահանջում եմ որ իւղբաշի Պետի տղան պէտք է ուզէ Հանէսի աղջկան և վերջացաւ բանը . . . բաստա . . . Բայց ի գրանից մի լաւ բան էլ գիտեմ, որ . . . Թող այդ ինքը պարոն Դաւթեանցը քեզ ասէ . . .

Տ. Աշխարբեգեանց. (Ուրախացած). Անտառի վէճի մասին . . .

Զարեանց. Այդ էլ կայ . . .

Տ. Աշխարբեգեանց. Սամսոնը մի այդպիսի բան ասաց . . . Գիտէի, գիտէի, որ պարոն Դաւթեանցը ժողովրդի կարիքը կը վերադասէ ամեն բանից . . .

Զարեանց. Գիտէիր և նորից իմացիր . . .

Տ. Աշխարբեգեանց. Պարոն Դաւթեանցի աղնուութեան վրա ես միշտ վստահ էի և փաստը աշկարան է.

Դաւթեանց. Խնդրեմ, խնդրեմ, տիկին, մի գըրգուէք իմ համեստութիւնը . . . Ամեն տեղ ես արդարութիւն եմ որոնում և փառք Աստուծոյ որ այս գործի մէջ էլ գտայ այդ:

Տ. Աշխարբեգեանց. Ուրեմն ուղիղ է . . . (Սեղ-

շան թուղթ

մելով նրա ծեռքը). Ա՛խ, որքան ուրախ եմ... շնորհակալ եմ... անվերջ շնորհակալ եմ ձեզանից... Ո՞րքան բերան կը օրհնէ ձեզ այդ բանի համար:

Զարեանց. Առաջինը, երեխ, կը լինի այն Պետքան, որ չպատկառեց այս պատուական մարդու առաջ և յանդղնեց սրան վիրաւորել իր բիրտ ու կոպիտ արարմունքով...

Դաւթեանց. Ահ... այդ թողնենք, խնդրեմ... գիւրագրգիռ պատանի է որ չէ կշռում իր արածը...

Տ. Աջսարբէգեանց Բայց գուք գիտէք որ նա աղնիւ է...

Զարեանց: Ա՛զնիւ է... Հըմ... գիւղի տղան աղնիւ է... Ազնիւը սա է, սիրելիդ իմ կատեա, որ այդ բանը նրան ներեց, թէ չէ հիմի... էհ... ուր կը լինէր քշած, միայն Աստուած գիտէ:

Դաւթեանց. Ա՛չ, այդպիսի մի բան ես չեի անիլ... Թող մնայ գիւղում և գործէ իր հայրենակիցների օդտին...

Զարեանց. Ար խանդարէ իր ազատամոռթեամբ գիւղացիների հանգստութիւնը և մերը... Ա՛չ, ա՛չ... այդ տեսակ պատանիներ աւելի վնասակար են քան օգտակար գիւղի համար:

Տ. Աջսարբէգեանց. Սակայն փաստը ուրիշ բան է ասում...

Զարեանց. Փաստը... փաստը... այդ տեսակ փաստի գիմաց կան հաղարաւորներ, որից երեսում է որ նրա ներկայութիւնը գիւղում վնասակար է... էհ... դա ապագայի հարց է... դրա մասին քեզ հետ շատ խօսելիք ունիմ... Առ ժամանակ թողնենք... Պարօն

Դաւթեանց, գուք կը ներէք ինձ որ պարտաւոր եմ յանձնել ձեզ եղբորս աղջկայ հովանաւորութեանը մի փոքր ժամանակով... կարելի է...

Դաւթեանց. Սրանից աւելի լաւ հովանաւորութիւնը գուք չէիք կարող գտնել ինձ համար...

Զարեանց. Այդպէս չէ... Դեհ, ուշեմ՝ ցաեսութիւն... Իսկոյն, իսկոյն կը գամ.. (Դուրս է գնում ծախ դռնից):

### ՏԵՍԱՐԱՆ 9.

Տ. Աջսարբէգեանց. Դաւթեանց:

Տ. Աջսարբէգեանց. Պարօն Դաւթեանց... ուրեմն ուզիղ է... գուք զիջեցիք գիւղացիներին անտառի այն կտորը, որի մէջ նրանք մեծ կարիք են զգում:

Դաւթեանց. Այս, սիրելի տիկին... այդ մտքով մի թուղթ եմ գրել վարչութեան, որ յուսով եմ կը համաձայնի իմ առաջարկութեան և գիւղացիները կը ստանան ցանկացած կտորը:

Տ. Աջսարբէգեանց. Տէր Աստուած, որքան աղնիւ էք և վեհանձն. ձեր արածը մի այնպիսի բարիք է որի նմանը մի չտեսնուած ու լոււած երեսյթ է ժողովրդի համար մտածող ու աշխատող, ժողովրդի բարեկեցութիւնը իրանց նպատակ գարձնող մարդկանց համար... Ա՛խ, եթէ գիտենաք թէ ի՞նչը կ'ուրախանայ Արշակ Իւղբաշեանցը, որին, ինչպէս գիտէք, այդ հարցը շատ է հետաքրքրում:

Դաւթեանց. Ինձ փոյթ չէ, ազնիւ տիկին, թէ  
նրան ինչ է հետաքրքրում . . . Ես գոհ եմ որ ես դրա-  
նով ձեղ ուրախութիւն և զուարճութիւն պատճառեցի  
ի տրիտուր այն մտերմական յարաբերութեան որ տա-  
ծում էք դուք դէպի ինձ . . . Ուզիդ ասեմ ձեղ, ճա-  
կատագիրս ինձ երբէք չէ ժպտած . . . Կնոջ մտերմու-  
թիւնը մինչև այժմ մի անհասկանալի երեսյթ էր ինձ  
համար . . . մայրական, կնոջ գորովից զրկուած փոքր  
հասակից ի վեր, աստանդական թափառել եմ հօրս  
հետ, երբ նա ստիպուած էր լինում պաշտօնի պատ-  
ճառով տեղափոխուել մի դաւառից միւսը, մի քաղա-  
քից մի այլ քաղաք . . .

Տ. Աշխարքիկեանց. Ո՞հ, որքան ծանր է եղել  
ձեր դրութիւնը . . .

Դաւթեանց. Այնուհետև էլ ես դադար չունե-  
ցայ . . . նոյն աստանդական կեանքը, նոյն վիճակիս  
անորոշութիւնը թոյլ չտուին ինձ կենդրոնանալու իմ  
մէջ և մտածելու ապագայիս համար . . . Ահա, այժմ,  
ինչպէս տեսնում էք, չնայելով քառասուն տարեկան  
հասակիս, ես մնացել եմ ամուրի և չեմ իմանում թէ  
ինչ վերջ կունենայ կեանքս . . .

Տ. Աշխարքիկեանց. Մարդուս կեանքի անորոշու-  
թիւնն ինձ միշտ մեծ յուղմունք է պատճառել և ես  
սրտանց համակրում եմ ձեր դրութեանը . . . Նոյն  
անորոշութիւնը ես փորձում եմ ներկայումս իմ նոր  
կեանքի չէմքում, վասն որոյ ինձ հարկաւոր է ձեր ա-  
ջակցութիւնը: Ես չեմ կարող մէնակ մաքառել նախա-  
պաշարմունքի դէմ, որ այս լոպէիս՝ շնորհիւ ինձ շըր-  
ջապատող անձանց, այնքան փափուկ ու լուրջ կերպա-

բանք է ստացել . . . Կրկնում եմ, հարկաւոր է և շատ  
է հարկաւոր ինձ և ինձ հետ էլ պարոն Արշակին ձեր  
աջակցութիւնը . . .

Դաւթեանց, (Այլայլոսած). Զեզ . . . ձեղ հետ էլ  
պարոն Արշակին . . . Զեմ հասկանում . . . Ուրեմն ես  
ուզիդ չեմ հասկացել ձեզ: Ես կարծում էի որ ձեղ  
հարկաւոր է իմ աջակցութիւնը մաքառելու այն նա-  
խապաշարմունքի դէմ, որով արդելում են ձեղ կապել  
ձեր կեանքը մէկի հետ, որին դուք ընտրելու էք . . .  
Հէնց որ իմացայ ձեր այդ վճիւը, իմ մէջ զարթեց  
մի մեծ փափագ լինել ձեղ մօտ, հրճուել ձեր առաջ  
տարած գործից . . . սակայն մի ինչ որ նոր բան, որի  
մասին ես կասկածել անդամ չէի վստահանայ, առաջո  
է գալիս իբրև արգելք . . . Արդեօք ականջս ինձ չէ  
դաւաճանում . . . հիմասթափուեմ . . .

Տ. Աշխարքիկեանց. Իմ անկեղծ մտերմութիւնը  
դէպի ձեղ առաջ եկաւ շնորհիւ այն լուրջ վերաբեր-  
մունքի, որ զարթեց ձեր մէջ իմ անորոշ դրութեանս  
պատճառով . . . Ուրեմն գնահատելի էր ինձ համար  
ձեր համակրութիւնը . . . Այս երկու շաբաթուայ մէջ  
մեր տեսակցութեան միջոցին գուք ինձ անդադար  
կրկնում էիք լինել աչալուրջ և չընկճուիլ տեղացինե-  
րիս ասակրուների ազդեցաւթեան տակ . . . Դուք քա-  
ջալերում էիք ինձ առաջ տանել սկսած մտադրու-  
թիւնս և խոստացաք չխնայել ձեր աջակցութիւնը,  
երբ ես նրա մէջ կզգամ կարիք . . . Հօրեղբօրս եկած  
օրից աւելի քան մեծացաւ . . . այդ կարիքը . . . աննե-  
րելի ճանապարհով մէկը միւսից անճոռնի ու տղեղ

արդելքներ բարդվում են շուրջս... Պարօն Դաւթեանց,  
չյուսամ ձեղ վրայ...»

Դաւթեանց. Թայլ տուէք ինձ մտածելու:

Տ. Աժսարբէգեանց. Ժամանակը կարճ է... դուք  
վերջացնելով ձեր յանձնարարութիւնը կը հեռանաք  
այստեղից և խաւարամիտները իրանց խօսքը առաջ  
տանելով կ'իրագործեն մտադրուած շարիքը...

Դաւթեանց. Հաւատացէք, նազելի տիկին, որ ձեր  
ասածները ինձ համար նոր բան չեն, բայց և այնպէս  
ես միշտ հեռու էի նրանց որ և է նշանակութիւն  
տալու... Սակայն ես պարտաւոր եմ ձեղ զգուշաց-  
նել որ մենք այնքան էլ խիստ չպէտք է լինինք դէպի  
նրանց, մանաւանդ դէպի ձեր հօրեղբայրը որ ունի  
մի որոշ կարծիք և դա շատ բնական է... Մնած ու  
զարդացած դասակարգային մթնոլորդի մէջ նա պէտք  
է մշակէր յայտնի հայեացքներ, որոնք հակառակ են  
մերիներին... Վասն որոյ եթէ նրանք դործ են դնում  
որ և է ճնշում որ չիրականանայ իրանց կարծիքներին  
հակառակ մի երեսյթ, դրա համար դատապարտել  
նրանց անկարելի է...

Տ. Աժսարբէգեանց. Ուրեմն, ինչ պէտք է անել...

Դաւթեանց. Ա՛խ, նազելի տիկին, երանի թէ  
դուք ինձ այդ հարցը շտայիք... Ես այնքան յուզուած  
եմ որ դժուար թէ կարողանամ դրան մի լուրջ և  
նպատակայարմար պատասխան տալ...

Տ. Աժսարբէգեանց. (Վեր թռչելով). Սակայն  
չարիքը քայլ առ քայլ մօտենում է... դուք ինքդ լսե-  
ցիք հօրեղբօրս սպառնալիքները:

Դաւթեանց. (Վեր կենալով). Սիրելի տիկին, եթէ

դուք ակնարկում էք այն շարաբաղդ դէպիքը որով  
շօշափեցաւ իմ անձնական պատիւը, հաւատացած ե-  
զէք որ առանց ինձ հետ խորհրդակցելու ոչինչ չեն  
կարող անել... իսկ ինչ որ վերաբերում է միւս հան-  
գամանքին—դա մասնաւոր դործ է և չի վերաբերում  
սստիկանութեան:

Տ. Աժսարբէգեանց. (Ուրախ). Ուրեմն նա ազատ  
է... Գնամ, գնամ կանչել տամ նրան, թո՞ղ ուրախա-  
նայ... (Ուզում է զնալ). Ներեցէք, իսկոյն...

Դաւթեանց. Տիկին...

Տ. Աժսարբէգեանց. (Շուռ զալով). Դուք ինձ  
ձայն տուիք...

Դաւթեանց. (Փոքր ժամանակ տատանւան մէջ):  
Ո՛չ... ոչ... Սակայն... (Յանկարծ մօտենում է նր-  
դան, վերցնում է նրա երկու ձեռքը եւ յուզուած)  
Նազելի տիկին... Ո՛հ... Ներեցէք... (Թողնում է  
նրա ձեռքերը եւ փոքր ինչ հեռանում, ճակատը շը-  
փելով):

Տ. Աժսարբէգեանց. Դուք բան ունեիք ինձ ա-  
սելու...

Դաւթեանց. Ո՛չ... այն, այն... (Նրան մօտե-  
նալով). Նազելի տիկին, եթէ աշխարհում գտնուի մի  
մարդ, որի երեակայութեան մէջ առաջ դար մի պատ-  
կեր որ մեծ նմանութիւն ունենար ձերի հետ և հիա-  
ցած այդ պատկերից պաշարուէր ամբողջ հոգով, նը-  
րան, ի հարկէ, կը քշէիք ձեզանից, հեռու, որքան  
կարելի է հեռու...

Տ. Աժսարբէգեանց. (Այլայլուած մի կողմ): Սա  
իրան է ակնարկում... Զէի կասկածում... (Բարձր)

Սակայն, պարոն Դաւթեանց, ինչու համար էք ասում այդ . . .

Դաւթեանց. (Փոքը լոռվթիւնից յետոյ). Նազելի տիկին, դուք ձեր մտերմութեամբ ամբողջապէս համակեցիք հոգիս մի ինձ անծանօթ քաղցրութեամբ . . . Մի դատապարտէք ինձ, եթէ ձեզ ասեմ որ այդ հանգամանքը մեծ զարկ տուաւ սրտիս զգալ այն, որից ես զրկուած եմ եղել . . . Դուք դրանով ներշնչեցիք հաւատ և ես ինձ հպատ էի զգում . . . Ես աւելի առաջ գնացի երեսակայութեանս մէջ և մի գաղտնի ձայն ինձ հաւատացնում էր որ կը դայ մի օր որ մեր մտերմութիւնը կը փոխուի մի այլ զգացմունքի, որի մասին ես մինչեւ անգամ դաղափար շունէի ցայսօր:

Տ. Աշխարբէգեանց. (Այլայլուսած) Պարոն Դաւթեանց . . . խնդրեմ . . .

Դաւթեանց. Դուք հանդիպեցաք ինձ կեանքիս շաւղում և ես սկսեցի ինձ ոյժ տալ մտածելու ապագայիս մասին:

Տ. Աշխարբէգեանց. Դուք այդ կարող էիք անել . . . սակայն . . . ես ձեզ վրա ուրիշ աչքով էի նայում . . .

Դաւթեանց. Այն . . . Զեր վիճակը, իմ անորոշ գրութիւնը հսկայական քայլերով մղում էին ինձ դէպի առաջ այն յուսով, թէ կարո՞ղ են արդեօք երկու հակառակ վիճակներ իմի ձուլուել . . . Այն, իրաւ է, դուք ինձ չէիք քաջալերում այս ասպարէզի վրա, բայց մի աներեսոյթ ձեռք առաջնորդում էր ինձ և յոյս տալիս . . . Միթէ ձեռնթափ պէտք է մնամ . . .

Տ. Աշխարբէգեանց. (Մի կողմ). Տէր Աստուած, այս ինչ սոսկալի պատիժ է . . .

Դաւթեանց. Դուք լուռ էք . . . Ասացէք մի բան . . . Ասացէք որ ես ձեզ իսպառ մոռանամ . . .

Տ. Աշխարբէգեանց. Ո՞չ, ոչ . . .

Դաւթեանց. (Վերջնելով նրա երկու ձեռքը): Ուրեմն, դուք համակրում էք ինձ . . .

Տ. Աշխարբէգեանց. Ի՞ սէր Աստուածոյ. (Խլում է ձեռքերը):

Դաւթեանց. Զէք տեսնում որ ես ամբողջապէս ձերն եմ և ձեզ եմ յանձնում կեանքոս . . . (Լոռվթիւն) Նազելի տիկին . . . դուք լուռ էք . . . դուք ինձ չէք պատասխանում . . . Ասացէք, յետ կենամ մաքիցս . . . թէ յուսամ . . .

Տ. Աշխարբէգեանց. (Տատանմունքից յետոյ). Ո՞չ, ոչ երբէք . . . (Հնկեկալով դուրս է վազում):

## ՏԵՍԱՐԱՆ 10.

Դաւթեանց. միայն (Փոքը ժամանակ լոռվթիւնից յետոյ):

Մնացէք բարեաւ երազած ցնորքներ . . . Տիկին Աշխարբէգեանցը, երեխ, իբաւունք ունի հրապուրուելու Արշակ իւզբաշեանից . . . Ա՛խ, միայն թէ շուտով ստանամ սպասած թուղթը . . . փոքր ինչ սթափուեմ, յուզմունքներս հանդարտուեն և նորից կանգնեմ ինձ վիճակուած շաւղիս վրա . . . ինչպէս տարին ունի իր եղանակները, նոյնպէս և մարդուս կեանքը ունի իրանը . . . Ո՞վ է լսել որ մարդ ձմռան բուք ու բորանին վարդ քաղէ կամ ուղենայ սոխակի դայլայլիկներ

լոել . . . կեանքիս դարունքից չքաղեցի օգուտ . . . և  
այժմ այսպէս չարաշար տանջուեցի . . Ա՛յս, որքան ես  
միամիտ էի . . .

ՏԵՍԱՐԱՆ 11.

Տ. Արմաւեանց. Դաւթեանց:

Տ. Արմաւեանց. (*Մանելով աջ դռնից*): Այս ի՞նչ  
բան է . . . Կատեան մերժեց ձեր առաջարկութիւնը . . .  
Դաւթեանց. Ի՞նչ աեզից գիտէք . . .

Տ. Արմաւեանց. Ինքն ասաց ի՞ս հօրեղբորը . . . Նա  
գիտէո, որ դուք կ'անէք նրան առաջարկութիւն և  
սպասում էր ելքին . . . Հենց որ դուքս եկաւ Կատեան,  
իսկոյն սկսեց նրան հարց ու փորձ անել և իմանալով  
եղելութիւնը, կրակ ու բոց է թափում նա այնտեղ:  
Բայց, պարոն Դաւթեանց, մի յուսահատուէք. դա մի  
կանացի պշրանք էր . . Կատեան հաւատացնում եմ որ  
կը կակզի . . .

Դաւթեանց. Սիրելի տիկին, դուք, երեխ, ձեր  
բարեկամուհուն չեք ճանաչում . . . Նա շատ լուրջ է  
վերաբերվում իր արած քայլին . . . Այս հանդաման-  
քումն էլ նա առաջ կը տանի իր սկսած գործը . . .

Տ. Արմաւեանց. Եթէ միայն չխափանեն . . . Նա  
հօրեղբայրը այն պտուղը չէ, որ ուզենայ իրան հա-  
կառակ գնան: Տեսէք, թէ ինչեր է մտածում անել  
որ կարողանայ Կատեայի դլիսից հանել տալ այն ցնորք-  
ները, որոնց յուսով ձեր առաջարկութիւնը շնորհուեց:

Դաւթեանց. Նա ոչինչ չի կարող անել . . .

Տ. Արմաւեանց. Սիալվում էք . . . Ամեն բան ար-  
դէն պատրաստ է . . . Նա արդէն տեսակցել է դաւա-  
ռապետի հետ . . .

Դաւթեանց. Գաւառապետն էլ ոչինչ չի կարող  
անել . . . Վերջապէս, ով ունի իրաւունք խառնուելու  
մասնաւոր գործի մէջ . . .

Տ. Արմաւեանց. Դա մամնաւոր գործ չէ . . . Դա  
շօշափում է ամբողջ մելիքենց ազգի պատիւը . . . Կինը  
այնքան կուրանայ որ մի գոեհիկ գիւղացուն վերա-  
գասէ ձեղ պէս ազնիւ ու պատուաւոր մարդուց, դա  
մի լսած և չտեսնուած բան է . . . Ի՞նչեր չաշեցիք որ  
նրա սիրաց շահէք, իսկ նա . . . Ա՛յս, Կատեա, Կատեա,  
որքան պարզամիտ ես . . .

Դաւթեանց. Է՞հ, այդ թագնենք, տիկին . . . Ասա-  
ցէք ո՞րտեղ է ձեր ամուսինը . . .

Տ. Արմաւեանց. Նա այս բոպէխս 0գնականի հետ  
էր . . Ինչ որ թուղթ էին գրում . . .

Դաւթեանց. Հենց այդ թուղթը ինձ շատ է հե-  
տաքրքում . . . Գնամ, տեսնեմ ուղարկել են, թէ չէ . . .  
Յտեսութիւն . . . Խնդրեմ իմ կողմից Մելիքին կասէք  
որ ների ինձ, որ առանց նրան տեսնելու գնացի . . .

Տ. Արմաւեանց. Ճաշի չէք գայ այստեղ:

Դաւթեանց. Զէ որ մենք այսօր ի պատիւ օրի-  
որդ Լուսիկի վերադարձի միասին ձեղ մօտ ենք ճա-  
շում . . .

Տ. Արմաւեանց. Իրաւ, այդ այդպէս է . . . Բայց  
գուցէ ուզենաք այստեղ ճաշել . . . Ո՞վ է իմանում,  
կարելի է ճաշի ժամանակ էլի խօսք բացանէք . . .

Դաւթեանց. Ոչ, ոչ, տիկին . . . այլ ևս ոչ մի խօսք,

ամեն բան վերջացաւ մեր մէջ... Ես նրանցից չեմ որ  
նորից վերադառնամ մի հայցի, որից օդուտ չէ սպաս-  
վում. Ցտեսութիւն... (Դուքս է զնում միջին դռնից):

ՏԵՍԱՐԱՆ 12.

Տ. Արմաւեանց. Միայն:

Ինքն էլ լաւ է իմանում, որ վերջը կատեան սրա-  
նը կը լինի, թէ չէ այսչափ սառնարիւն կը լինէր...  
Ի՞նչպէս կարող էր դիմանալ... եթէ այդ կարծիքի  
չինէր... կվեցնէր նրա պատուասիրութիւնը... Աշխր  
մեծ մարդ, պաշտօնի մէջ յաջողակ մարդ թոյլ չէր  
տալ որ իրան այսչափ անպատուէին մի տրեխաւոր  
գիւղացու պատճառով... Հայ գիտի ժամանակ, ժա-  
մանակ, ի՞նչեր չէ պատահում... Այսպիսի մարդը ա-  
ռաջարկութիւն է անում և նրան մերժում են... Այս  
բոլորը նրանից է, որ կատեան գիւղում նստած մարդ  
չէ տեսել, աշխարհի հետ չէ շփուել...

ՏԵՍԱՐԱՆ 13.

Տ. Արմաւեանց, Տ. Աշխարքիզեանց, Զարեանց:

Զարեանց. (Բարկացած). Այս ի՞նչ է... գնաց  
Գութեանցը...

Տ. Արմաւեանց. Հապա, ի՞նչ էիք մտածում...  
կարծում էիք, որ այստեղ կը մնար, որ նորից մի որ  
և է անպատճան նրան հասցնէիք....

Զարեանց. (Տ. Աշխարքիզեանցին): Ահա, քո ազա-  
տամտութեան պառզները... Ահա թէ դու ուր հասց-  
րիր դործը... (Տ. Արմաւեանցին) Նեղացած էր, հա...

Տ. Արմաւեանց. Նեղացած... դանակը խփէիք  
բողազին մի կաթիլ աշխին չէր դուրս գայ... Ինչու,  
ինչու: Այն պատճառով որ քեզ յարգելով, քո խաթը  
պահելով առաւ այն ինչ որ ոչ մի ծառայող մարդ  
չէր վատահանայ... Գարեգինս ասում է որ վարչու-  
թեան մէջ երկի մեծ պատիւ ունի որ վատահանում  
է արքունական հողից տալ գիւղացիներին այն թան-  
կադին կտորը..

Զարեանց. Եւ սա, և' սա այն պատուաւոր մար-  
դուն անպատուեց մինչ այն, որ մեզ հետ չտեսնուած,  
մեզ մնաս բարով չասած, մեր, մելիքենց անից, սրտա-  
խոսով հեռանում է... Եթէ դու, մելիք Մարդարքէզի  
հարսդ, այդ բանը ոչինչ չես համարում... ես, Մէջ-  
լումբէդս, այդ խայտառակութիւնը չեմ տանիլ...  
Գնացէք, տիկին Արմաւեանց, ոշտեղ էլ լինի գտէք  
նրան. ասացէք որ վերադառնայ, ասացէք թէ կա-  
տեան չէր հասկացել թէ ինչ էիք ուղեցել ասել նրան...  
թէ հիմի փոշմանում է...

Տ. Արմաւեանց. Հա, այդ լաւ ասիք, կերթամ  
խկոյն...

Տ. Աշխարքիզեանց. Ոչ ոք իրաւունք չունի իմ  
անունից նրան բան ասել... Ես նրան ձեզանից պա-  
կաս չեմ յարգում և գիտեմ նրա բարեմասնութիւն-  
ները, նրա վեհանձն հոգին... բայց նրան մարդու  
գնալու համար երբէք չեմ մտածել...

Զարեանց. Պահանջում եմ որ հիմի մտածես...

Տ. Աշխարքիզեանց. Հիմի էլ ուշ է . . . ես ընտրել եմ ինձ փեսացու և եթէ դուք հաւան չեք կենում, կրկնում եմ, հօրեղբայր, որ ես շատ ափսոսում եմ . . .

Զարեանց. Կամեա, Կամեա . . . քո ընտրածը ոչքեղ և ոչ մելիքի անուան ու պատուին վայել մարդչէ . . խելքդ գլուխի ժողովիր և լաւ մտածիր անելիքիդ վրա . . .

Տ. Աշխարքիզեանց. Ի զուր եք աշխատում համոզել ինձ . . . Վճիռս կտրական է և մահը կարող է ինձ նրանից անջատել . . .

Զարեանց. Այդպէս է ուրեմն . . . ես ուրիշ մահով նրան քեզանից անջատել կը տամ . . . քաղաքացիական մահով . . .

Տ. Աշխարքիզեանց. (Վախեցած): Ի՞նչ ես ուզում անել . . . այդ ի՞նչ մահ է . . .

Զարեանց. Այդ իմ գիտնալու բան է:

Տ. Արմաւեանց. Է՛հ, մելիք, ի զուր եք չարանում . . . խոմ գիտէք Կատեայիդ ընաւորութիւնը . . . Հիմի յամառում է, բայց յետոյ կը կակզի և ձեր ուզածը կը կատարէ . . . Կամեա, սիրելիս, խնայիր հօրեղբարդ . . . տես . . . տես որքան նեղանում է . . . մի պղտորիլ սրա արիւնը, տնաւր քո համաձայնութիւնը:

Տ. Աշխարքիզեանց. Լիզա . . . ես երեխայ չեմ որ այդ տեսակ խօսքերով ուզում ես ինձ համոզել . . . Հօրեղբայր, ասացէք ինդրեմ թէ ի՞նչ եք մտագիր անելու նրա հետ . . . Հօրեղբայրս, (Լաց է լինում): Մի տանչէք ինձ նրա հետ . . . (Մօտենում է Զարեանցին զգություն): Հօրեղբայրս . . .

Զարեանց. (Յետ մղելով նրան): Հեռացիր ինձանից . . . ես սիրս չունեմ քեզ լսելու: (Այս ժամանակ միշտն դունից մննում է Սամսոնքզը): Հա, ինչ եղաւ, Սամսոն . . .

ՏԵՍԱՐԱԿԻ 14.

Տ. Աշխարքիզեանց, Տ. Արմաւեանց, Զարեանց, Սամսոնքզ:

Սամսոնքզ. Ի՞նչպէս որ ասացիք, այնպէս էլ կը լինի: Բայց էժան չը նստեց ինձ վրա քո յանձնարարութիւնը, մելիք . . . Կէս ժամուայ մէջ (Չեղքերն աջ ու ձախ խաղացնելով). այսպէս անելով, երեք հարիւր ոռորիս գրպանը դրաւ:

Զարեանց. Դէհ, հալաւ լինի նրան . . . Հիմի թնդաս մելիքի հարսն իրան երազներով մխիթարէ:

Տ. Աշխարքիզեանց. Սամսոն . . . Սոս ինձ թէ ի՞նչ եք մտածում . . .

Սամսոնքզ. Մելիքը չասաց քեզ . . .

Զարեանց Սա ոչինչ չէ ուզում հասկանալ . . . միշտ իրանն է պնդում և ահա տես թէ ի՞նչ դրութեան ինձ հասցըեց . . . Իմ երախտիքը այսպէս է ուզում հասկանալ . . . ինձ, մելիք Մէջլումբէղիս ամօթահար արաւ: Գնանք . . . Տիկին, համեցէք . . . (Քնալով):

Տ. Արմաւեանց: Ես տուն պէտք է գնամ . . . Սամսոնքզ . . . զնանք. հէնց որ է Լուսիկը կը գայ այստեղ: Կամեա, գիտես . . .

Սամսոնիք. Կատեան արդէն գիտէ . . . Ես նրան  
ասել եմ . . .

Զարեանց. Գնա, որդի . . . ամբողջ սրտով ուրախ  
եմ քեզ համար: (Դուքս են զնսմ):

Տ. Աշխարքիզեանց. (Նըանց ետևից): Հօրեղ-  
բայ . . . Սամսոն . . . Լիզա . . . մի թագցրէք ինձա-  
նից . . . խնդրեմ . . . աղաչում եմ . . . (Յետ զալով):  
Ախ, Աստուած, ինչու ես տալիս ինձ այսքան տան-  
ջանք . . . (Ղնկնում է մօտաւոր աթոռի վրա):

### ՏԵՍԱՐԱՆ 15.

Տ. Աշխարքիզեանց. յետոյ Սիմօն:

Տ. Աշխարքիզեանց. (Կամաց-կամաց սմափուե-  
լով): Այս ի՞նչ բան է . . . ի՞նչ են ուզում անել . . . Ո՞հ,  
ո՞քան ես անբաղդ եմ որ չեմ կարող նրան աղատել . . .  
Դաւթեանցը . . . թէ նա խոստացաւ . . . Բայց այժմ . . .  
յանձնառու կը լի՞նի . . . նեղացաւ . . . գնաց . . . մինչեւ  
անգամ առանց մնաս բարովի մեկնեց այստեղից . . .  
Բայց ի՞նչու համար . . . Միթէ չհասկացաւ որ սէրս  
փայփայել եմ ուրիշի համար . . . ես, ես եմ մեղաւոր  
որ այսքան ժամանակ խորը թագցրած սրտիս մէջ չէի  
յայտնում նրան . . . Ահա . . . փայփայած այդ սէրը  
տանջանքի փոխուեց . . . Չէ, չէ . . . պէտք է նրան իմաց  
տալ . . . Թող նա գնա, մի հնարով գոնէ իմանայ թէ  
ի՞նչ որոգայթ են լարում նրա գէմ . . . Սիմօն . . . Սիմօն . . .

Սիմօն. (Մտնելով): Ի՞նչ կը հրամայէք, խանում . . .  
Տ. Աշխարքիզեանց. Չէս իմանում Սամսոնը գլ

ուր էր գնացել և ինչու համար:

Սիմօն. Ինչու համար չեմ իմանում, բայց գնացել  
էր մելիքի յանձնարարութեամբ գաւառապետի մօտ:  
Տ. Աշխարքիզեանց. (Դառն): ԱՌ. ա . . . գնա . . .

իսկոյն այստեղ կանչիր Արշակին . . . շուտ, շուտ, Սիմօն . . .

Սիմօն. (Դնալով): Իսկոյն . . . (մի կողմէ): Էլի պէտք  
է խայտառակուեմ մելիքից:

Տ. Աշխարքիզեանց. (Յուսահատուած): Ի՞նչ են  
ուզում նրանից . . . (Հեկեկալով ընկնում է աթոռի  
մէջ):

ՎԱՐՍԳՈՅՐ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐԾՈՐԴ

Պ.ՍԿԵՐ 1.

Գիւղի մէջ հրապարակ։ Հեռուից երեսում են շաբէշար խրճիթներ։ Հրապարակի մօտ մի խրճիթ յատկացրած է իբրև բնակարան Դաւթեանցի համար։ Բնակարանի պատուհանները բաց են։ Այդ խրճիթի առաջկային նստարան, Վարդոյրը բարձրանալիս՝ մըտնում են իւղաշեանցը և մի գիւղացի։

ՏԵՍԱՐԱՆ 1.

Իւզբաշեանց։ Գիւղացի։

Գիւղացի։ Զանիդ մատաղ, Արշակ ջան, ես մենակ չեմ կարող գնալ։

Իւզբաշեանց։ Ա'գա, ինչ վախկոտ մարդ ես։

Գիւղացի։ Ախր, ես ոնց գնամ, լեզու չգիտեմ։

Իւզբաշեանց։ Սուդի դաւթարխանումը մէկ շէկ միրքաւոր տղայ կայ, ճանաչում ես նրան։

Գիւղացի։ Գիտում չեմ որի համար ես ասում։

Իւզբաշեանց։ Ա'գա, Քեօշի գիւղի տէրտէրի տը-

ղէն, անունը Մեխակ է։ Որ դաւթարխանա ես մտնում, աջ կռան ստոլի աղաքն նստածն է։

Գիւղացի։ Հա, հա, ճանաչում եմ . . . պուճուր շէկ մօրուքով . . . ծաղկատար . . .

Իւզբաշեանց։ Հա, հէնց նա . . . Յարեկամ տղայ է . . . կ'ասես իրան թէ Արշակը ինդրեց, մէկ գործի երեսը կարդայ և թղթի վրա գրէ, ինձ զրկէ, իմաց տուր թէ գործը ինչ հալի է . . . Հասկացար . . .

Գիւղացի։ Արշակ ջան . . . ախշ նա . . . Զէ, մատաղ ըլիմ քեզ, լաւ կ'անես որ հետո գաս։

Իւզբաշեանց։ Ախր, ասի քեզ թէ էսօր չեմ կարող։ Անտառի գործ կայ . . . էսօր նորից պէտք է շափեն այն կտորը. առանց ինձ խոժ գիտես չի կարելի։

Գիւղացի։ Հա, գիտում եմ . . . էստեղ էլ հարկաւոր ես . . . բաս մենակ գնամ . . .

Իւզբաշեանց։ Գնա, գնա . . . նա ամեն բան կ'անէ, իմ խաթրը շատ ունի։

Գիւղացի, Յաս գու գալիս չես . . .

Իւզբաշեանց։ Ախր, թէ ասի որ գործ կայ այս տեղ . . . Դու հիմի գնա, մի վախենա, էգուց—էլօր ինքս կ'երթամ, ինչ որ հարկաւոր լինի, կը հոգամ։

Գիւղացի։ Հա, հա, ջանիդ մատաղ . . . Աստուածքեղ երկար կեանք տայ . . . մուրազիդ համնես . . . Լսի վայ ըլի քո հօրն ու մօր գերեզմանը . . . գնամ հա . . . (Փոքը տատանմունքից յետոյ դուքս է զնում)։

ՏԵՍԱՐԱՆ 2.

Իւզբաշեանց.—մէնակ:

Երանի քո օրհնանքը լսէ Աստուած և իմ լքեալ  
արտիս ճար ու դարման հասցնէ... Մելիքը, ասում  
են, շատ է դիմադրում, բայց ես հաւատացած եմ որ  
տիկինը այնքան ոյժ ունի որ կարող է առանց որ և է  
փոշանքի դուրս տանել իր գլուխը... Այս, արքան  
ես նրան սիրում եմ, Տէր Աստուած... Կանչել էր,  
երկու անդամ գնացի, ասացին տանը չէ... վակում  
են առջես դռները, թէ ի՞նչ է... Մաքումս ինչեր են  
դալիս... Աստուած իմ... սիրոս որ միշտ մաքուր է  
եղել, ինչու են պղասրում... Այլ ես անկարելի է  
համբերել... Ո՞նց որ լինի, այսօր պէտք է նրան  
տեսնեմ... (Փոքր ժամանակ կակզնած մտածում է):  
Ո՞չ, պէտք է գնալ... Ի՞նչ էլ որ լինի պէտք է նրան  
տեսնել... (Ուզում է զնալ մտնում է Սիմօնը).

ՏԵՍԱՐԱՆ 3.

Իւզբաշեանց. Սիմօն:

Սիմօն. Աղա, նոր ես հպարտացել, որ խանումը  
քեզ կանչում է, չես դալիս...

Իւզբաշեանց. Ո՞նց թէ չեմ դալիս.. Երկու ան-  
դամ եկայ, ասացին տանը չէ:

Սիմօն. Այդ ով ասաց քեզ:

Իւզբաշեանց. Գրիգորն ասաց... Մէկ անդամ թէ

դնացել է Սամսոնենց տուն, միւս անդամ թէ հիմի  
դուրս գնաց մելիքի հետ, չեմ իմանում ուր...

Սիմօն. Այ խելքիդ ազ անեմ... Երբ ես Գրի-  
գորից դաստուր խնդրել որ մտնես մելիքենց տուն, որ  
հիմի ես արել... Այս երկու օր է խանումը ըսկի  
տանիցը ոտք դուրս չէ դրել... Հա, մելիքից վախե-  
ցար ու քոսոտ շան պէս պոչէ քեզ քաշեցիր...

Իւզբաշեանց. Գրան ի՞նչ քամին բերաւ այստեղ...

Սիմօն. Աստուած ոչ դիտէ Սամսոնի գլուխը...  
գրել էր թէ արի այստեղ գործ կայ... Նա էլ, իրաւ,  
գործ շինեց այստեղ... Ամբողջ տունը տակն ու վրա  
արաւ: Զարի զարի բերեց աշխարհը... Սուտ չեն  
դրել դրա անունը Զարենց մելիք Մէջլում...

Իւզբաշեանց. Իրա խելքով եանի ի՞նչ է ուզում  
անի...

Սիմօն. Էլ ի՞նչ կ'ուզես ինձ ասաց.. Էլ քաւթառ ա-  
զուէս, էլ քոռ ու քոսոտ... Հայհոյեց թէ, ինչու եմ ես քեզ  
խանումի մօտ թողնում, .. հէնց գիտենաս խանումը  
երեխայ լինի, սպիտակը ուկից չէ ջոկում...

Իւզբաշեանց. Հա,.. հիմի հասկանում եմ... Ու-  
րեմն մելիքի կարգադրութիւն է... որ ինձ ներս  
չթողնեն... Էյ, հա.. Սխալվում է քո մելիքը... Ես  
նրանցից չեմ որ ինձ մատների վրա պար ածեն: Այն  
միւսը չինի որ ժողովրդին սովորեցնում է, որ ստիպեն  
ինձ ուզել Հանէսի աղջկան...

Սիմօն: Հա, զորդ, ի՞նչ եղաւ այդ հարցը...

Իւզբաշեանց. Ժողովուրդը իրա խելքը հաց ու  
պանրի հետ խոժ չէ կերել որ պահանջէ ինձանից ա-  
նել այն, ի՞նչ որ սրտովս չէ... Իւզբաշեն որը քաղց-

ըութեամբ, որը կիսահանաք խնդրեց ու սուս կացաւ...  
Ողորմած հոգի հայրս Հանէսին խօսք էր տուել թէ  
Արշակիս համար կուղեմ աղջկադ... Այս հանգաման-  
քը մելիքը մատի փաթաթանք է շինել ու աջ ու ձախ  
տարածում է թէ ես ժողովրդին վիրաւորում եմ, թէ  
ես պապական օրէնքը չեմ կատարում... Վերջապէս  
ինձ ինչ փոյթ թէ հայրս ում ինչ է ասել կամ ինչ է  
խոստացել... Զօրի բան է, քեզ եմ հարցնում...

Սիմօն. Ճշմարիտ է... տղայ ու աղջկայ պսակը  
Աստուածանից է... ամա... Է՞՞, այդ թողնենք...  
Էլի լաւ ես պրծել.. Աստուած քեզ վատթարից ա-  
ղատէ...

Իւզբաշեանց. Սիմօն, բանման խոյ չես լսել  
Էլի նորը...

Սիմօն. Չեմ լսել... միայն Սամանը մի քանի  
անգամ գնացել է նաչալնիկի մօտ, թէ ինչու համար  
չիմացայ... Խանումն էլ շատ ուղեց իմանալ, ամա  
չեղաւ... Հէնց գիտենաս թագ են կացնում...

Իւզբաշեանց. Խոյ չեն ուղում էլի նորոգել Դաւ-  
թեանցի հետ իմ արածը... գրանցից ամեն բան  
սպասելի է...

Սիմօն. Չեմ իմանում...

Իւզբաշեանց. Չեմ կարծում որ գրանից մի բան  
սպասեն... Դաւթեանցը բացէիբաց մերժել է նաչալ-  
նիկին և չէ ուղեցել որ այդ մասիննա պրօտօկօլ կազ-  
մէ... Ի՞նչ ես կարծում, Սիմօն...

Սիմօն. Հապա ես ինչ գիտեմ... ինձ մօտ բան  
չեն ասում, գիտեն որ խանումի ականջը կը գցեմ...  
Տնացիներից ոչ մէկը չէ լսել նրանց խօսակցութիւնը...

Դէհ, ինչ ես ասում... խանումին ինչ ասեմ, կը գամ  
այսօր:

Իւզբաշեանց. Կը գամ... գու տանը կը լինեմ...  
Սիմօն: Հապա, ուր կը լինեմ... Հէնց հիմի  
շոապում եմ տուն... մելիքը եթէ կանչէ ինձ և իմա-  
նայ թէ տանը չեմ.. բաց կ'անէ ուշունցների տոպ-  
րակը, գնա, Սիմօն, գլուխդ բաշ տուած ականջ դիր-  
նրանց... Ամա, ինչ զօրբա ուշունցներ գիտէ... (Ժի-  
ծաղում է). Դէհ... ասեմ խանումին թէ կը գամ:

Իւզբաշեանց. Կը գամ, միայն դու տանը կաց...  
Սիմօն. (Ժիծաղելով): Հա, հա, հա... Այ, դու  
վախկոտ... (Դուրս է զնում):

#### ՏԵՍԱՐԱՆ 4.

Իւզբաշեանց.—Մենակ, յեսոյ Գզիր:

Աստուած ինքը գիտէ, որ վախկոտ չեմ... բայց  
աիկնոջ սէրը ինձ կասկածոս է գարձրել և ամեն բա-  
նին ես հիմի նշանակութիւն եմ տալիս...

Գզիր. (Մտնելով). Արշակ, քեզ եմ պտռառում...  
(Ժողից հանելով փաթեթ): Այ, քեզ վրա թուղթ  
կայ... Իւզբաշին տուաւ քեզ յանձնելու...

Իւզբաշեանց. (Այլայլուած): Ի՞նչ թուղթ...  
(Խլում է նրա ձեռքից թուղթը): Տներ ինձ: (Շտապով  
բաց է անում փաթեթը):

Գզիր. Նաչալնիկից է... Իւզբաշին հրամայեց,  
հէնց որ կարդաս, խկոյն կատարես հրամանը. (Դուրս  
է զնում):

Իւզբաշեանց. (Սփոթնած). Ի՞նչ են ուզում ինձ  
ձանից . . . ինչ գործ ունի նահանգապետը ինձ մօտ,  
որ հրամայում են իսկոյնևեթ գնալ քաղաք . . . Ա՛խ,  
Առաջուած իմ . . . իսկոյն, իսկոյն գնալ, նրան չաե-  
սած . . . ոչ, ես անկարող եմ . . . Սիրտս անհանգիստ  
է . . . միթէ մի նոր որոդայթ են լարում իմ գէմ . . .  
Տիկին, սիրելիդ իմ . . . միթէ ինձ պէտք է կորցնեն,  
ինձ քեզանից անջատեն . . . Ո՛չ, ոչ, անկարելի է . . .  
Առանց քեզ ինձ համար կեանքը կեանք չէ . . . Դու  
ինձ հետ պէտք է լինես, եթէ մինչև անգամ ուզե-  
նան ինձ քշել աշխարքի ծայրը . . . Գնամ նրա մօտ,  
հասկանամ նրա միտքը, յետոյ . . . Ի՞նչ լինելու է թնդ  
լինի: (Շտապով վազում է):

ՏԵՍԱՐԱՆ 5.

Դաւթեանց. (Դուքս գալով իր ընակարանից):

Այեն բան տեսայ ու լսեցի . . . Այս կտրիճ տղան  
իրաւ որ հետաքրքիր մի անձնաւորութիւն է . . . Տիկին  
Աշխարքէգեանցը իզուր չէ հրապուրուած սրանից . . .  
Իսկ ես սրան միայն նրա դադափարակից համարելով,  
մեծ յոյս էի տածում գրաւել նրա սէրը: Ո՛հ, որքան  
ես սխալուած եմ . . . (Նստում է նստարանի վրա):  
(Այս միջոցին անց են կենուա գիւղացիներ և գեղջ-  
կուհիներ, որոնք Դաւթեանցին խորը գլուխ են տա-  
լիս՝ տղերը աւելի համարձակ, կանայք—բաշունլով):  
Ահա, այս տձեւ հագուստի մէջ, երեսը ծածկած այս  
աղջիկը շատ կարելի է թէ աւելի է պահպանել կա-

նացիութեան իսկական, մաքուր ու նահապետական  
ախպարը, քան մեր քաղաքային շինծու կանայք . . .  
Միթէ մի այդպիսին, իրան նման ժիր, աշխատասէր,  
մաքրասուն աղջիկը աւելի երջանիկ չէր անի նրա  
կեանքը, քան տիկին Աշխարքէգեանցը, որին նա սի-  
րում է . . . Ո՛րքան դատարկ յոյսերով ես ինձ  
փայփայեցի . . . Վերջացաւ ամեն բան . . . Գնամ, կոր-  
չեմ այստեղից . . . (Պ. Արմաւեանց և Օգնական մըտ-  
նում են):

ՏԵՍԱՐԱՆ 6.

Դաւթեանց, պ. Արմաւեանց, Օգնական:

Պ. Արմաւեանց. Պարոն Դաւթեանց, ամեն բան  
պատրաստ է . . . Երկրաչափը սպասում է տեղն ու տեղը:

Դաւթեանց. (Վեր կենալով): Շատ լաւ . . . Զա-  
փել տնւեք այն կտորը գիւղի պատգամաւորների ներ-  
կայութեամբ և պահ տնւեք այն նրանց օգտուելու  
համար . . .

Պ. Արմաւեանց. Դուք չէք կամենում ներկայ  
լինել . . .

Դաւթեանց. Կարծեմ ձեր ներկայութիւնն էլ ա-  
ւելորդ է: Պարոն Օգնականը ինքը միայն էլ կարող է  
ամեն բան գլուխ բերել . . . Այդպէս չէ, պարոն Օգ-  
նական:

Օգնական. Ի հարկէ . . . Հարկաւոր է կտորը շա-  
փել և կատարել մի քանի պաշտօնական գործողու-  
թիւններ:

Դաւթեանց. Վարչութեան հաստատուած մակար-  
դակը ձեր ձեռքին է:

Օգնական. Այս, ինձ մօտ է . . .

Դաւթեանց. Այդ մակարդակը և վարչութիւնից  
ստացած թուղթը կարող են ծառայել լաւ ուղեցոյց  
այդ պաշտօնական գործողութիւնները կատարելու  
համար: Իսկ գուք, պարոն Արմաւեանց, յոյս ունիմ  
որ չէք մերժել ճանապարհակից լինել ինձ մինչեւ կա-  
յալանը:

Պ. Արմաւեանց. Դուք գնում էք:

Դաւթեանց. Այս . . . չէնց հիմի, ճաշուայ գնաց-  
քով . . . Ես այստեղ յանձնարարութիւնս վերջացրի...  
Քաղաքում կան և ուրիշ շատ գործեր . . . Բաւական  
է որքան ես այստեղ մնացի . . . Այսչափ երկար ժա-  
մանակ ես ոչ մէկ տեղում չեմ մնացել . . .

Պ. Արմաւեանց. Ճատ հասկանալի է . . . Գործը  
բաւական փափուկ էր:

Դաւթեանց. (Այս բաշելով): Իրաւ փափուկ էր  
և պահանջում էր մեծ զգուշութիւն . . . Սակայն ամեն  
բան վերջացաւ փոխադարձ համաձայնութեամբ . . .  
Պարոն Օգնական, իմդրեմ ընդունեցէք իմ շնորհա-  
կալութիւնս ձեր արած ծառայութեան համար . . .  
Ամեն, ամեն բան ես կը հաղորդեմ ում անկն է . . .  
(Մերկնում է ձեռքը):

Օգնական. Ես զգացուած եմ ձեր ուշադրու-  
թիւնից:

Դաւթեանց. Ուրեմն, պարոն Արմաւեանց, գր-  
նանք . . .

Օգնական. Ուրեմն, մնացէք բարե, պարոն Դաւ-

թեանց . . . Ես կերթամ գործիս . . . բարի ճանապարհ . . .  
(Դուրս է գնում):

Դաւթեանց. Շնորհակալ եմ . . . Պարոն Արմաւ-  
եանց, գուք գնացէք տուն . . . Ես մի լոպէով կը մըտ-  
նեմ դգեակը մնաս բարով ասելու . . . Երկար չեմ  
մնալ, ժամանակն էլ կարճ է . . . Գնանք . . . (Գնում են  
երկուտով):

Պ. Արմաւեանց. (Գնալով): Նախշուն թիթեռնի-  
կից միթէ պէտք է անջատուէք . . .

Դաւթեանց. Այս . . . այս . . . նախշուն թիթեռ-  
նիկ . . . նախշուն . . .

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐԲՈՐԴ

ՊԱՏԿԵՐ Ա.

Տիկին Աշխարբէգեանցի տան հիւրասենեակը, որ  
կահաւորած է շատ շքեղ կերպով: Թանկադին աման-  
ներ ծաղկափնջերով դրուած են մեծ ու փոքր սեղան-  
ների վրա: Մէկ պատի մօտ կայ դաշնամուր: Սենեակն  
ունի երեք դուռը, որից միջինը տանում է պարտէզ,  
աջինը դէպի դրսի նախասենեակ: Վարագոյրը բարձ-  
րանալիս բեմի վրա են՝ Տիկին Աշխարբէգեանց, Սամ-  
սոնբէգն ու Լուսին. վերջիններս հէնց նոր են եկել  
տիկնոջ այցելութեան:

ՏԵՍԱՐԱՆ 1.

Տ. Աշխարբէգեանց, Լուսի, Սամսոնբէգ:

Տ. Աշխարբէգեանց. Վերցրնւ գլխարկդ, սիրելիս...  
Ո՞րքան ուրախ եմ ձեզ համար:

Սամսոնբէգ. Ասացի քեզ, կատեա, որ այս օրերս  
ամեն բան կը վերջանայ:

Լուսի. (Վերցնելով զլխարկը): Ես ըսկի չեմ ու-

զում որ շուտ վերջանար... Կ'ուղէի մի փոքր էլի  
տանջել քեզ...

Տ. Աշխարբէգեանց. Հաւատամ... Նստեցէք,  
ինդրեմ: (Ամենքը նստում են): Ես ընդ հակառակն  
կտրծում եմ, որ դուք օրիորդներդ աւելի շտապում  
էք, քանի որ վճռել էք այդ քայլը:

Լուսի. Հաւատացէք, տիկին:

Սամսոնբէգ. Զհաւատաս, կատեա... Մէկ հարց-  
րու դրանից թէ ինչու համար փախաւ այստեղից:  
Լուսի. Թոնզ, ինդրեմ...

Սամսոնբէգ. Համար արովհետեւ սրտովդ չէ ասածս:

Տ. Աշխարբէգեանց. Թոնզ, Սամսոն, ինչու ես  
սրան նեղացնում:

Լուսի. (Վեր կենալով): Տեսէք, տիկին, ինչ հիա-  
նալի մատանի ընծայեց ինձ սրա մայրը...

Սամսոնբէգ. Թագաւորի ընծան է, որ մայրս  
ստացել է շատ շատ տարի սրանից առաջ:

Տ. Աշխարբէգեանց. Հիանալի է... շատ հիա-  
նալի... բարով վայելես...

Լուսի. (Նստելով): Գիտէք, տիկին, թէ ինչ ա-  
սաց ինձ սրա մայրը, երբ հագցնում էր մատիս այս  
մատանին... Սիրիս, ասաց, իմ Սամսոնին:

Տ. Աշխարբէգեանց. Այդպէս էլ պէտք է...

Լուսի. Բայց ես դրան չեմ սիրում:

Սամսոնբէգ. Հիմի արդէն ուշ է... պէտք է  
սիրես...

Լուսի. Զէ, չէ, չեմ սիրիլ:

Տ. Աշխարբէգեանց. Ինչու, ինչու համար, Լուսի...

Լուսի. Երեակայեցէք, տիկին, ես սրան ասում

Եմ պսակից յետոյ, հէնց նոյն օրը, գնանք արտասահման, չէ համաձայնում:

Տ. Աշխարբէզիանց. Սնհնդ եղիր, Լուսի, կ'երթաք... (Սամսոնը զին): Ինչու չես ուզում տանել, քանի որ սա դեռ երիտասարդ է ու աղատ... յետոյ էլ դժուար կը լինի ու անյարմար:

Սամսոնբէզ. Ախր, լեզու չենք իմանում:

Տ. Աշխարբէզիանց. Դրա համար շատ էլ մի ցափիլ: Հէնց որ ոտ գնես արտասահման, այնքան թարգմաններ առաջդ կը կտրեն, որ մինչև անդամ կը զզուացնեն ձեզ իրանց առաջարկութիւնով... Այդքանը չի կարող քեզ արգելել, եթէ ուրիշ պատճառ կայ, այն ասա... .

Լուսի. Հաւատացնում եմ, տիկին, որ ուրիշ ոչ ինչ պատճառ չկայ... հէնց միայն այդ պատճառն է փաթաթել մատին ու յամառում է... Համոզեցէք, տիկին, որ տանէ ինձ...

Տ. Աշխարբէզիանց. Ես ոչ թէ միայն կը համոզեմ, այլ մինչև անդամ կը ստիպեմ որ կատարէ քոցանկութիւնը:

Սամսոնբէզ. Մայրիկն էլ չէ ուզում...

Տ. Աշխարբէզիանց. Մայրիկին էլ կը համոզեմ... Լուսի, դու անհոգ եղիր, կը կատարենք քո բոլոր ցանկութիւնները:

Լուսի. Ա՛հ, տիկին, որքան ուրախ եմ... (Վերէ թոշում ու համբուրում է նրան): Ուրախ եմ նա մանաւանդ որ գուք յօժար էք... Իսկ ինչ որ գուք ցանկանաք, գիտեմ կը կատարուի...

Սամսոնբէզ. Իսկ եթէ ես չուզենամ, տեսնեմ

ինչպէս կը կատարուի...

Տ. Աշխարբէզիանց. Սուս կաց, Սամսոն, մի գրգռիր սրան:

Լուսի. (Նստելով): Տեսմք, Սամսոն, դու կարծում էիր թէ տիկինն էլ ընդդէմ կը լինի, բայց հակառակը գուրս եկաւ... Իրաւ, ինչու մենք պէտք է բացառութիւն կազմենք... ամենքն այդպէս են անում...

Սամսոնբէզ. Ամենքը...

Լուսի. Ի հարկէ, ով որ միջոց ունի:

Սամսոնբէզ. Հա, այդպէս ասա...

Տ. Աշխարբէզիանց. Փառք Սատուծոյ, դու այդկողմից ապահոված ես:

Լուսի. Անկասկած... Ախ, տիկին, որչափ չնորհակալ եմ ձեզանից: Հէնց որ գնանք Փարիզ, իսկոյն կ'երթամ Վօրտի մօտ, ինձ համար մի հիանալի կոստիւմ կը պատուիրեմ... այդ մէկը միայն Փարիզում հագնելու համար: Վերադարձիս կարել կը տամ ուրիշ դերիաներ ես՝ այստեղ հագնելու համար... Զէ, Սամսոն:

Սամսոնբէզ. Այդ յետոյ կը տեսնենք...

Տ. Աշխարբէզիանց. Ամեն բան, սիրելիս, ամեն բան կ'անէ սա քեզ համար. (Լուսթիւն): Ի՞նչ կայ նոր, Սամսոն:

Սամսոնբէզ. Աւելի նորը ինչ կարող է լինել, բացի այն որ գու մերժել ես Դաւթեանցի առաջարկութիւնը և սա շատ վշտացած է...

Լուսի. (Վեր կենալով): Եատ լաւ է արել տիկինը... ես Դաւթեանցին ատում եմ... նրա պատճառով ես մի շաբաթ համարեա հեռացայ քեզանից...

Տ. Աշխարքեանց. (Ժիծաղելով): Դրա համար  
ես ասում նրան...

Լուսի. Այս, դրա համար... (Շըջում է սենեա.  
կի մէջ, մօտենում է ծաղիկներին, հստոտումէ նրանց  
կամ կանգնում է պատուհանի առաջ):

Սամսոնիք. Դու ինձ լսէ, Կամեա... վճիռդ վերջ-  
նական է, թէ կարող ես էլի փոխել...

Լուսի. Տիկինը ինչ որ մէկ անգամ վճռում է,  
նա այն չէ փոխում...

Տ. Աշխարքեանց. Շատ ուղիղ է ասում Լուսին...

Սամսոնիք. Բայց դու գիտես, Կամեա, թէ դու քո  
այդ յամառութեամբ մելիքի սիրտն էլ ես կոտրել...

Տ. Աշխարքեանց. Ախ, Սամսոն, Երեխ դու ու-  
րիշ թեմա չունիս խօսելու համար որ միենոյն բան  
ես կրկնում... Ահա, քեզ թեմա.. զբաղուիր քո նշա-  
նածով, քեզ համար այդ բանը պէտք է որ աւելի հա-  
ճելի լինի...

Լուսի. (Մօսենայով): Գիտեք, տիկին, թէ հիմի  
ինչ էի մտածում... Լօնգոնում որ լինիմ, ինչ բան  
պատուիսեմ ինձ համար կամ ինչ դնեմ...

Տ. Աշխարքեանց. Երբ այնտեղ լինես, սիրե-  
մա, ինքու կը տեսնես... ինչ որ աչքիդ դուր դայ,  
այն էլ կը դնես:

Լուսի. (Հեռանալով): Երաւ, այնտեղ կ'երեայ...  
նոյնպէս վենայում, Բերլինում, ինչ որ ինձ դուր  
դայ, այն էլ կը դնեմ...

Սամսոնիք. Բայց ուրան նա վեհանձն է ու ար-  
դարադատ... գիւղացիներին զիջեց պահանջած կտո-  
րը և այսօր իսկ պէտք է չափեն և նրանց պահ տան...

Տ. Աշխարքեանց. Ես մի բոպէ չէի կասկածում  
որ նա այդպէս էլ կը վարուէր...

Սամսոնիք. Ի հարկէ, Եթէ դու մէջ տեղը չի-  
նէիր...

Տ. Աշխարքեանց. (Ընդհատելով): Սամսոն...

Լուսի. (Պատուհանի մօտ): Պարոն Իւզբաշեանցն  
է... կանչեմ նրան...

Տ. Աշխարքեանց. Զէ, չէ... Սակայն...

Սամսոնիք. (Մի կողմ): Դա դեռ այստեղ է...  
ինչու չեն ուղարկել...

Լուսի. Կը կանչեմ... Նա երեխ չի իմանում որ  
ես նշանուել եմ... (Կանչում է): Պարոն Իւզբաշեանց,  
պարոն Իւզբաշեանց... Բարնվ, բարնվ... Համեցէք  
այստեղ, տիկինը ձեզ կանչում է...

Տ. Աշխարքեանց. (Այլայլուած վեր է կենում):  
Ախ, Լուսի... ի՞նչ ես անում... (Անհանգիստ ման է  
գայիս):

Լուսի. (Յետ գալով պատուհանից): Թո՞ղ դայ,  
իմանայ... Թէե նրա համար ասում են թէ խոռվա-  
րար է ու ժողովուրդը աղմկող, բայց այնքան բարի է  
որ հաւատացած եմ որ կուրախանայ:

Սամսոնիք. Լուսի, ի՞նչ ես ասում...  
Լուսի. Ի՞նչ ես զամանում... մեր տանը հէնց  
երէկ ասում էին:

Տ. Աշխարքեանց. Զեր տանն էին ասում...

Սամսոնիք: Ուշ մի գարձնիլ, Կամեա... (Վեր է  
կենում ու մօտենում Լուսիին):

ՏԵՍԱՐԱՆ 2.

Տ. Աշխարքէզեանց, Լուսի, Սամսոնքէզ, Իւզբաշեանց:

Իւզբաշեանց. (*Մանելով*): Բարե ձեզ . . .

Տ. Աշխարքէզեանց. Բարե, պարոն Արշակ . . .  
Լուսին ձեզ կանչեց որ հաղորդէ իր բազդաւորութեան մասին:

Լուսի. Պարոն Իւզբաշեանց, ես նշանուել եմ  
Սամսոնքէզի հետ . . . Տեսէք, ինչ հիանալի մատանի  
ընծայեց ինձ որա մայրը:

Իւզբաշեանց. Շատ գեղեցիկ է, երեխ և թան-  
կագին . . . ես արգէն ամեն բան իմացայ . . . Շնորհա-  
ւորում եմ, օրիորդ, ձեզ էլ, Սամսոնքէզ:

Լուսի. Ի՞նչ տեղից իմացաք:

Իւզբաշեանց. Զեր քոյրը, տիկին Արմաւեանցն  
այս բոպէխս ինձ հաղորդեց այդ ուրախալի լուրը . . .

Տ. Աշխարքէզեանց. Իրաւ, որտեղ է նա . . . մո-  
ռացայ թէ հարցնէի: Նստեցէք, խնդրեմ . . . ինչու էք  
կանգնել . . . (Ամենքը նստում սն):

Լուսի. (*Նստելով*): Նա էլ մեզ հետ էր Սամսոնի  
տանը . . . մեզ այստեղ ուղարկեց, ինքը դնաց գիւղ  
գործով . . . Ախր, վաղը, պաշտօնական նշանարէք են  
ուզում կատարել . . . մերոնք մեծ պատրաստութիւն  
են տեսնում . . . կը լինեն՝ Սամսոնի մայրը, քոյրը,  
ուրիշ ազգականներ . . . չեռագիր քաշեցինք որ մե-  
րոնք էլ գան քաղաքից . . . Մելիքն էլ խոստացաւ շնորհ-  
քերել . . . ի հարկէ դուք էլ կը լինիք, տիկին . . . պա-  
րոն Իւզբաշեանց, ձեզ էլ եմ հրաւիրում:

Իւզբաշեանց. Շատ շնորհակալ եմ . . .

Լուսի. Անպատճառ եկէք . . . Տիկին, դուք, ի-  
հարկէ, անպատճառ կը լինիք . . .

Տ. Աշխարքէզեանց. Ինչ ասել կ'ուզէ որ կը լի-  
նիմ . . . Միթէ կարծում ես որ քո և Սամսոնի ուրա-  
խութեան մասնակից չպէտք է լինիմ:

Լուսի. Ոհ, գիտեմ, գիտեմ:

Սամսոնքէզ. Կատեան որ չինի մեր պաշտօնա-  
կան նշանարէքին, նշանակում է թէ նշանարէքը եղած-  
չէ . . . Այնպէս, չէ, կատեա:

Տ. Աշխարքէզեանց. Ճշմարիտ ես ասում . . . Հա-  
ւատա ինձ, Սամսոն, որ ինձ մեծ ուրախութիւն պատ-  
ճառեց քո բազդաւորութիւնը այս կենսաթրթիու ու  
ազնուասիրտ օրիորդի հետ . . . Մօրդ հետ միասին ա-  
մենայն սիրով կ'օրէնեմ ձեզ երկուսիդ . . .

Սամսոնքէզ. (*Համբուրելով ձեռքը*): Շնորհակալէմ,  
Կատեա, մի բոպէ չէի կասկածում որ դու էլ մօրս  
չափ կ'ուրախանայիր:

Լուսի. (*Համբուրելով տիկնոջ*): Շնորհակալ եմ,  
տիկին . . .

Տ. Աշխարքէզեանց. Երանի՛ ձեզ . . . դուք այն-  
քան վստահ էք միմեանց վրա որ ոչինչ արգելք չէր  
կարող խափանել կատարելու ձեր ցանկութիւնը:

Լուսի. Այդպէս է . . . միայն քոյրս . . .

Սամսոնքէզ. Է՛հ . . . նա ուզում էր միայնքեզ վոր-  
ձել . . .

Լուսի. Լաւ վորձանք էր . . . մի քանի օր անջա-  
տեց քեզ ինձանից . . .

Սամսոնքէզ. Դու ինքդ ես մեղաւոր . . . կ'ասէիր

թէ բացի Սամսոնից ես ուրիշին չեմ ուզում:

Տ. Աշխարքիզեանց. Քանի որ սա քո մասին գեռ ևս հաւատացած չէր, միթէ կարող էր տալ այդ տեսակ պատասխան . . .

Լուսի. Իրաւ, գու մի ակնարկով էլ չկարողացար ինձ հասկացնել քո միտքը:

Տ. Աշխարքիզեանց. Ի՞նչ հարկաւոր էր ակնարկ . . . Եթէ նա տեսնում էր որ գու նրան համակրում ես, եթէ նկատում էր որ ուշադիր ես նրա ամեն խօսքին, ցանկութեանը, պարտաւոր էր բաց ու համարձակ անել քեզ իր առաջարկութիւնը . . . Ահա թէև ժամանակաւորապէս, բայց պատահեց անհաճոյ խռովութիւն . . . Դուք երկուսդ բաւական մեծ տանջանքի մէջ էիք . . . Այնպէս չէ, Լուսի, տանջանք էր քեզ համար:

Լուսի. Ախ, եթէ գիտենայիք թէ ինչ տանջանք փորձեցի . . . քանի անդամ փակուած սենեակիս մէջ լուս լաց եղայ . . . մինչև որ հեռագիր եկաւ այս տեղից . . .

Տ. Աշխարքիզեանց. (Դզուելով նրան): Ախ, իմ սիրելի Լուսի, որչափ հասկանալի է ինձ քո կրած տանջանքը . . . Տանջուել մի չնչին թիւրիմացութեան համար . . . տանջուել՝ այն ժամանակին էլ, երբ պատճառ չկայ տանջուելու համար, ոհ, այդ աւելի սոսկալի է, քան իսկական տանջանքը . . .

Իւզբաշեանց. Ճշմարիտ է . . . Օրիորդ Լուսին արժանի է համակրութեան . . .

Լուսի. Ախ, քոյրիկ, թէև փոքր ինչ նեղութիւն պատճառեցիր ինձ, բայց և այնպէս անցաւ, դնաց . . .

(Վեր թուշելով): Էհ, որտեղ է նա, ինչու չի գալիս, ժամանակ է տուն գնալու: Երեկի էլի շրջում է դիւզում . . . Դուք նրան որտեղ տեսաք, պարօն իւզբաշեանց:

Իւզբաշեանց. Այստեղ, պարտէզի դռան մօտ, Սիմօնի հետ խօսում էր:

Լուսի. Ուրեմն այժմ նա պարտէզում կը լինի . . . (Ցիկարկը ծածկելով): Վեր կաց, Սամսոն գնանք . . .

Սամսոնբէզ. (Վեր կենալով): Գնանք . . .

Տ. Աշխարքիզեանց. Սպասեցէք, նրան այստեղ կանչել կը տամ . . . (Վեր է կենում):

Սամսոնբէզ. Զէ, Կատեա, կ'երթանք . . . Ի դէպ, թոյլ կը տաս ծաղիկներիցդ մի փունջ կազմել տամ . . .

Տ. Աշխարքիզեանց. Որքան կամենաս . . . Սակայն առանց ինձ չգնաք . . . Լուսի, Լիզային կ'ասես որ տեսնէ ինձ . . . Սպասեցէք, ես էլ կը դամ ձեզ հետ . . .

Իւզբաշեանց. Տիկին, դուք ինձ կանչել էիք . . . Ես էլ գործ ունիմ . . .

Տ. Աշխարքիզեանց. Հա, իրաւ . . . Գործ ունիք: (Երկար նայելով նըան): Գործ ունիք . . . Շատ լաւ . . . Ուրեմն, Լուսի, Սամսոն, դուք դնացէք և պարտէզում ինձ սպասեցէք . . . Ես էլ իսկոյն կը գամ . . .

Լուսի. Կը սպասենք . . . անպատճառ կը սպասենք . . . Սամսոն, գնանք: (Սամսոն ու Լուսին դուրս են գնում միջին դռնից թեւանցուկ):

ՏԵՍԱՐԱՆ 3.

Տ. Աշխարքիզեանց. Իւզբաշեանց:

Տ. Աշխարքիզեանց. Ի՞նչ գործ ունէիք պարոն Արշակ: Համեցէք նստեցէք: (Նստում են):

Իւզբաշեանց. Գաւառապետից թուղթ եմ ստացել որ պահանջում է իսկոյնևթ գնալ քաղաք նահանդապետի մօտ:

Տ. Աշխարքիզեանց. (Այլայլուած): Ի՞նչ են ուզում ձեղանից ... Ինչու համար են կանչում:

Իւզբաշեանց. Ի հարկէ լաւ բանի համար չի կառող լինել: Մէկ չեն թողնի որ մարդ ազատ շունչքաշէ ... Գլուխս զանազան կասկածանքներով լիք է. մէկը ինչ ես մտածում, մէկը ինչ... տարակուսուել եմ ...

Տ. Աշխարքիզեանց. Ինչու անպատճառ վատ բան էք մտածում ... Ժողովրդի մէջ գործող մարդ էք, կարելի է թէ ինչ բան են ուզում իմանալ ձեղանից ժողովրդի մասին ...

Իւզբաշեանց. Իցէ թէ այդպէս լինի ... բայց ոչ, տիկին, նրանք մեզպէսներին չեն սիրում ... մեզպէսներից խորհուրդ կամ տեղեկութիւն չեն հարցնիլ ... Չեն հարցնիլ ձեղ յայտնի պատճառով ... Ոչ, տիկին, այս անդամ լաւ բան չեմ գուշակում ... Մի տիսուր նախազգացմունք պաշարել է սիրոս ... Ես ինձ կորած եմ համարում ...

Տ. Աշխարքիզեանց. Ա՛խ, տէր իմ Աստուած ... Ինչեր էք ասում ... Միթէ կուզենան ձեզ նման գործունեայ մարդուն տապալել ... Ոչ, ոչ, պարոն Աշշակ,

Խնդրեմ հեռացրէք ձեղանից այդ տիսուր միտքը ... Գուք այստեղ հարկաւոր էք: Գուք պէտք է մնաք այստեղ, հասկանում էք ...

Իւզբաշեանց. Ո՛հ, եթէ ամեն մարդ ձեզ պէս մտածէր ... Բայց տեսնում էք թէ ինչեր են հնարում որ մեզ միմեանցից անջատեն ... Ինձ թւռւմ է, որ այս բոլոր մեքենայութիւնները սարքած են նրանք, որոնց գուր չի գալիս իմ ներկայութիւնը այստեղ, որոնց աչքը ծակում է գէպի ինձ ունեցած ձեր հաւատարմութիւնը ...

Տ. Աշխարքիզեանց. Իրաւ ... նրանց այդ հաճելի չէ ... Սակայն ինչպէս կը համարձակեն սարքել այդ տեսակ գժոխային գործը ... միթէ ես թոյլ կը տամ ... Ոչ, պարոն Արշակ, նրանք անզօր են գիմադրել իմ կամքին ...

Իւզբաշեանց. Դիմադրում են, տիկին, և չեն խըզճահարվում: Նրանք պատկանում են այն տեսակ մարդկանց, որոնց համար մեծ ուրախութիւն է համարվում կանցարել, տանջել, վերջապէս գլուխել մէկին, որի գոյութիւնը նրանց համար հաճելի չէ ... Նրանք չեն պատկառիլ և ձեղանից. նրանք պատրաստ են գաղել և՛ ձեր քնքուշ սիրտը ... Այստեղ, որտեղ կիրքն է և՛ ձեր քնքուշ սիրտը ... Այստեղ, որտեղ կիրքն է լինում, թէ ազգակցութիւն, թէ բարեկամութիւն, թէ ամենայն ինչ որ սուրբ է և նուիրական ոտնատակ լինում, միայն թէ առաջ քաշեն նրանք իրանց գիւղական մեքենան ...

Տ. Աշխարքիզեանց. Գուք ինձ վախեցնում էք, սիրելի Արշակ ... Տէր Աստուած, ազատիր ինձ այս փորձանքից ... Ասացէք, պարոն Արշակ, հապա ինչ է

հարկաւոր անել . . . ում դիմեմ . . . ես պատրաստ եմ՝ ձեռքից եկածը չխայել միայն թէ պաշտպանեմ ձեզ, պահեմ ձեզ ինձ մօտ . . .

Իւզբաշեանց. Տիկին, ես էլ եկել եմ այն մտքով որ վերջնականապէս որոշուած լինի ինձ համար այդ հարցը . . . Տեսնում էք, որ մեզ շրջապատել են մարդ գիկ, որոնք արգելում են կատարել մեր ցանկացածը . . . Քանի որ ի դէմ դրանց կան մեր առաջ այստեղ այդ արգելքները, մեզ այստեղ մնալը և ի միասին գործելն անհնարին է . . .

Տ. Աշխարբէզեանց. (Այլայլուած): Ի՞նչ էք ուզում ասել . . .

Իւզբաշեանց. (Ճողից հանելով թուղթը): Տիկին, գաւառապետի այս թուղթը մեր նոր կեանքի վերջաբանն է. սրանով գաղարում է իրագործելուց այն գաղափարները որ մենք փայփայել ենք համարեա մի տարուց ի վեր . . . ինձ համար այս բանը շատ թուալի է . . . դուք ինչ կարծիքի էք այս մասին . . .

Տ. Աշխարբէզեանց. Ինձ համար դրանից աւելի վշաալի ելք չեք կարող երեակայել . . .

Իւզբաշեանց. Ուրեմն . . .

Տ. Աշխարբէզեանց. Ի՞նչ էք մտածել . . .

Իւզբաշեանց. (Ոզեւորուած): Տիկին . . . Երկնակամարիս անհուն տարածութեան տակ կան էլի շատ տեղեր, ուր մարդիկ խարխափում են տղիտութեան մէջ. Նրանց կրած տանջանքը անտեսանելի է և օգնութեան աղաղակները անլսելի են մնում մարդոց համար . . . Եթէ իմ հայրենի յարկի տակ, իմ հարազատներին մեր օգնութիւնը խաւարամիտների համար ցանկալի չէ,

ուրեմն գնանք ուրոնենք այն տեղերը, ուր մարդիկ սպասում են և կարօտ են մեր օգնութեան, գնանք այնտեղ ձեռքի ձեռքի տուած իրագործելու մեր գաղփարները:

Տ. Աշխարբէզեանց. (Սարսափած): Գուք ինձ առաջարկում էք հեռանալ այստեղից . . .

Իւզբաշեանց. Այն, ինձ հետ միասին . . . սիրելի տիկին, ինձ հետ, որպէս զի մենք երկուսովս թե թեփ տուած կատարենք մեր սուրբ և նուիրական պարտականութիւնները:

Տ. Աշխարբէզեանց. Ի՞նչ էք ասում . . . այդ անկարելի է . . . Վերջապէս այս ձեր առաջարկութիւնը չէ . . . Թափառենք գործ գործելու համարագործելու է . . . մար, քանի որ այդ գործը մեր շրջանում կայ . . .

Իւզբաշեանց. Ախր մեր շրջանում մեզ թոյլ չեն տալիս գործելու: Տեսնում էք թէ ի՞նչ արդելքներ են յարուցանում մեր դէմ . . . Տիկին, գուք համաձայն չէք . . . դուք լո՞ւմ էք . . . Թէ որ մենք երդուել ենք միասին գործելու . . . Միթէ գժուարանում էք . . . միթէ չէք ցանկանալ իղել ձեր կապը նախապաշար միթէ չէք ցանկանալ յարդենցից և յաւիտեանս վասմունքով տողորուած մարդկանցից . . . Ասացէք՝ ոչ, այն ժամանակ . . . յելել աղատութիւն . . . Ասացէք՝ ոչ, այն ժամանակ . . .

Տ. Աշխարբէզեանց. (Ընդհատելով): Ասացէք, ասացէք ինչ էք անելու . . . մի շարչարէք ինձ:

Իւզբաշեանց. Տիկին, դրութիւնս շատ ծանր է . . . ես գժուարանում եմ զիմանալ այդ ծանրութեան . . . ես կեանք եմ փնտում, իսկ նրանք զրկում են ինձ կեանքից . . .

Տ. Աշխարբէզեանց. Ո՞հ, ի՞նչ սոսկալի բան էք

ասում... Ո՛չ, ոչ ոք չի կարող դրկել ձեզ կեանքից...  
Չեր կեանքը գեռ ևս հարկաւոր է...

Իւզբաւեանց. Բայց ոչ այստեղ...  
Տ. Աշխարբէգեանց. Հապա ուշ... ախ Տէր Աս-  
տուած...

Իւզբաւեանց. Հեռու, հեռու այստեղից... Գնանք,  
Գնանք, սիրելի տիկին, գնանք... Յօժար էք... ինչու  
էք լուսւմ...

Տ. Աշխարբէգեանց. Ա՛խ, պարոն Արշակ...  
Խնայեցէք ինձ... (Արտասուալից): Դուք աեսնում էք  
թէ որշափ հաւատում եմ ձեզ ու պաշտում... սա-  
կայն ձեր առաջարկութիւնը մի նոր բան է... Թոյլ  
տուէք ինձ մտածելու...

Իւզբաւեանց. Մտածեցէք ուրեմն, երբ ես այլես  
այստեղ չեմ լինի... Ես պարտաւոր եմ կատարել  
գաւառապետի հրամանը և հէնց այս բողէիս մեկնե-  
լու եմ քաղաք...

Տ. Աշխարբէգեանց. (Յուսահատ): Պարոն Արշակ,  
մի տանջէք ինձ... Գնանք, բայց ուր, ինչպէս...  
(Մուտենում է նրան): Պարոն Արշակ, փոխեցէք ձեր  
որոշումը... Սպասեցէք, գուցէ մի ելք մտածեմ...  
Կ'ընկնեմ հօրեղբորս ոտները... կ'աշխատեմ մի կեր-  
պով նրա սիրու շահել... բայց ոչ, ոչ...

Իւզբաւեանց. Ախ, սիրելի տիկին, եթէ մինչև այժմ  
անկարելի եղաւ նրան համոզել... այսուհետեւ այլիս  
գժուար է...

Տ. Աշխարբէգեանց. Սպասեցէք, մէկի ոտնաձայն  
եմ լսում... կաշելի է հէնց նա է... Հա, նա է...

(Երեւում է միջին դռնում Զարեանցը): Հօրեղբայր...  
(Ընկնում է նրա առաջ):

ՏեսԱՐԱՆ 4.

Տ. Աշխարբէգեանց, Իւզբաւեանց, Զարեանց:

Զարեանց. (Ոտի կանգնացնելով): Այս ի՞նչ բան  
է... ի՞նչ է պատահել... (Խզբաշեանցին): Դուք  
այստեղ ի՞նչ գործ ունիք...

Տ. Աշխարբէգեանց. (Պեղ կենալով): Հօրեղ-  
բայրս, աղաջում եմ, օդնիր ինձ... Ես բոլորովին  
տանջվում եմ... տանջվում եմ, հօրեղբայր...

Զարեանց. Ի՞նչ է, սիրելի կատեա... այս ի՞նչ  
գրութեան մէջն ես... Խնչու ես տանջվում... Հըմ...  
հասկանում եմ... սրա համար... Հա, հա, հա...  
Արժէ միթէ սա... Համեցէք, պարոն, գնացէք այս-  
տեղից որ որ ձեզ ուղարկում են և ի դուք մի վրդո-  
վէք եղբօրս աղջկայ հանգատութիւնը:

Տ. Աշխարբէգեանց. Հօրեղբայր, խնայեցէք ինձ  
հետ էլ և սրան... Հաւատացէք որ դուք սխալ կար-  
ծիք էք կազմել սրա մտախն... Հօրեղբայր, ես սի-  
րում եմ սրան... .

Զարեանց. Ափսոսում եմ որ քո ազնիւ սիրու  
բարախել է մի մարդու համար, որ քո շրջանին չէ պատ-  
կանում և որը այստեղ լինելու իրաւունք չունի...  
Պարն, առաջարկում եմ հեռանալ այստեղից...

Իւզբաւեանց. Տիկին, մնաք բարեաւ... Ես տես-  
նում եմ որ առաջարկութիւնս անհետեանք է մնալու

և ես ի զուր ժամավաճառ եմ լինում այստեղ... Այս,  
մելիք, ես ինքս այն կարծիքի եմ որ լաւ է որ ես  
հեռանամ այստեղից: Դուք հնարաւորութիւն չեք տա-  
լիս որ ազնիւ սրտեր միանան իրար... դուք կամե-  
նում էք որ մենք հեռանանք հայրական օջախից ու  
աստանդական թափառենք, մինչդեռ մեր հարազատ-  
ները խարխափում են տգիտութեան մէջ... Այդ է ձեր  
ցանկութիւնը, այնպէս չէ... Մտած չմտած մեր նոր  
կեանքի շէմքը դուք արդելքներ էք յարուցանում մեր  
դէմ... Այդպէս է հա... Տիկին, դալիս էք ինձ հետ,  
թէ այս խաւարամիտների ձայնը շոյում է ձեր ա-  
կանը... .

Տ. Աշխարքիզեանց. Պարոն Արշակ, սպասեցէք...  
Հօրեղբայր... աղաջում եմ, խնայիր ինձ...: Այս, Աս-  
տաւած... .

Զարեանց. Սպասիր... Ուրբ, մւր էք առաջար-  
կում սրան դալ ձեզ հետ... Արսոր, որին դուք դա-  
տապարտուած էք... .

Տ. Աշխարքիզեանց. Արսոր... մվ է սրան դա-  
տապարտել... Այս, մի հաւատաք, պարոն Արշակ, ձեզ  
ոչ ոք իրաւոնք չունի դատապարտելու... Հօրեղ-  
բայր... այդ ինչ էք ասում:

Զարեանց. Մի կատարեալ ճշմարտութիւն... Ժո-  
ղովուրդ աղմկողին ուրիշ ելք չկայ...

Իւզբաշեանց. (Յուզբաշ): Ուրեմն, աքսորում էք  
ինձ իմ հարազատ օջախից... Նշանակում է թէ այս  
թուղթը իմ աքսորի թուղթ է: Հա, հա, հա... Ոչ, ոչ,  
մելիք, դուք չեք հասնիլ ձեր նպատակին... Ես ինքս  
իմ աղատ կամքով կը հեռանամ այստեղից... Աշ-

խարհքը լայն է ու ընդարձակ, գործելու ասպարէդ—  
շատ... Տիկին, ուրեմն չեք ուզում հետեւ ինձ.. մնա-  
ցէք այս խաւարամիտների հետ... (Ծղում է թուղթի  
եւ ծգում Զարեանցի երեսին): Իսկ դուք, մելիք, բա-  
րով վայելէք այս թուղթը... (ուզուած վազում է մի-  
ջին ղոնից):

Տ. Աշխարքիզեանց. (Վազելով նրա ետեւից),  
Պարոն Արշակ, Արշակ... (Ընկնում է ղոն մօտ):

Զարեանց. Այս, դու գեադա... (Ընկնում է նրա  
ետեւից եւ կանգնում է Տ. Աշխարքիզեանցի առաջ  
որին սկսում է բարձրացնել):

Զարեանց. (Բարձրացնելով): Կամեա, Կամեա,  
վեր կաց... Տես թէ քո պատճառով որքան ես անպա-  
տիւ եղայ... .

Տ. Աշխարքիզեանց. (Վեր կմնալով): Ուր է  
նա... գնաց... գնաց, այլես չի վերադառնալ. (Ընկ-  
նում է աթոռի մէջ եւ հեկեկում է):

Զարեանց. Այսափ էլ խայտառակութիւն մեր  
գլուխ... .

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եր.

- 33 տպած է Տ. Արմաւեանց պէտք է լինի Պ. Արմաւեանց  
89 „ Կատեային „ Կատեան  
99 „ Իշխանեանցին „ Իւզբաշեանցին  
101 „ նոյն „ այն  
104 „ Իւզբաշեանց „ Դաւթեանց

ՀՀ Ազգային գրադարան



NL0350811

46533